



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

3 (61)

ԵՐԵՎԱՆ

2015

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

3 (61), 2015

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ալեքսանդր Գասպարիշվիլի

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական լայնախառն լրատվամատերիալի վարիչ, փ.գ.թ. (Մոսկվա, ՌԴ)

Ալեքսանդր Կորնիլով

Նիժնի Նովգորոդի Ն.Ք. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր (Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Արամ Սաֆարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Արթուր Աթանեսյան

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

Բարկեն Վարդանյան

«Հայք հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ խորհրդական Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Զավեն Եկալյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր (Մոսկվա, ՌԴ)

Հրանուշ Հակոբյան

ՀՀ Միջուկի նախարար, ի.գ.դ.

Միհրան Դարբալ

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր Միջուկի և Ցեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա)

Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

Մամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Մելրան Օհանյան

ՀՀ Պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ

Սերգեյ Գրիկյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Մոսկվա, ՌԴ)

Սևակ Սարուխանյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ք.գ.թ.

Վարդան Հարությունյան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 3 (61), 2015թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն
Գլխավոր խմբագիր Գագիկ Հարությունյան	Արման Նավասարդյան Փոքր և մեծ երկրների դիվանագիտության փոխակերպումը Թուրքիայի օրինակով 5
Գլխավոր խմբագրի տեղակալ Սևակ Սարուխանյան	Հրայր Փաշայան Ղարաբաղյան հակամարտության իրավաքաղաքական փաստարկները 13
Պատասխանատու խմբագիր Խոնարհիկ Քարառուլյանյան	Աննա Կարապետյան Կիպրոսի խնդիրը և ղարաբաղյան հակամարտությունը 38
Պատասխանատու քարտուղար Լուսինե Բաղդասյան	Վարդան Աթոյան, Սոֆյա Օհանյան, Արփինե Մալքոջյան Էկրանային մշակույթը որպես տեղեկատվական հասարակության սոցիոմշակութային բնութագիր 47
Աննա Ժամակոչյան Արեստակես Միմավորյան Էդուարդ Դանիելյան Սերգեյ Սարգսյան Վահրամ Հովյան	Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախվերդյան Հայաստանի համեմատական առավելությունները ԵՏՄ երկրների առևտրային հոսքերի համադրության մեջ 67
	Վահրամ Հովյան Եգիպտոսի հայ համայնքը 87
	Արթուր Աթանեսյան, Մարիա Զասլավսկայա, Արեմ Մկրտչյան, Գագիկ Թումանյան Միգրացիոն գործընթացների ազդեցությունը հայաստանյան ներհամայնքային խնդիրների վրա 96
	Էդուարդ Դանիելյան Հայոց հոգևոր արժեքների պաշտպանության պատմությունից 114
	Կարինե Հակոբյան Ազգերի կազմավորման հիմնախնդիրը 124
	Արամ Սարգսյանց Իմաստավորման ազդակների անտեսման հետևանքները 141
	Հուշագիր հեղինակին 155

ՓՈՔՐ ԵՎ ՄԵԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Արման Նավասարդյան՝

Բանալի բառեր՝ փոքր և մեծ տերություններ, Թուրքիայի դիվանագիտության փոխակերպումներ, քվադիչեզոք դիվանագիտություն, կայսերական հավակնություններ և նկրտումներ:

Պատմությանը հայտնի են փոքր և մեծ տերությունների առաջացման և անհետացման բազմաթիվ օրինակներ, եզակի չեն նաև փոքր պետությունների զարգացման և բարգավաճման այնպիսի դեպքեր, երբ նրանք, չնայած իրենց սահմանափակ տարածքին, փոքրաթիվ բնակչությանը և սակավ ներուժին, համալրում են միջազգային հարաբերությունների կարևորագույն խաղացողների շարքերը, և ընդհակառակը՝ կան մեծ տերություններ, որոնք տարբեր գործոնների ազդեցության ներքո իջնում են փոքր երկրների մակարդակին: Պետությունների կարգավիճակի, համաշխարհային քաղաքականության մեջ նրանց տեղի և դերի համեմատ փոփոխվում են նաև նրանց դիվանագիտության մեթոդաբանությունը, խնդիրներն ու նպատակները: Մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում, թե պետությունների ներքին և արտաքին քաղաքականության, միջազգային հարաբերությունների և աշխարհաքաղաքական իրադրության փոփոխության պայմաններում ինչպես են գործում դիվանագիտության մոդելները, միջոցները, ինչպիսին է դրանց գործելակերպը:

Այդ երևույթի դասական օրինակներից մեկը թուրքական դիվանագիտության այլակերպությունն է, որը պայմանականորեն բաժանում ենք երեք շրջանի.

1. Օսմանյան կայսրության շրջան, որն ընդգրկում է բյուզանդական ճկուն և նենգ դիվանագիտական ժառանգությունը, ինչպես նաև նվաճված

* Ռուս-հայկական համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, Արտակարգ և լիազոր դեսպան:

- բազմաթիվ այլ ժողովուրդների մշակույթներն ու արժեքային համակարգերը 1300-ական թվականներից մինչև 1918 թվականը,
2. Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած տարիները, երբ Թուրքիան դասվում էր փոքր պետությունների շարքին և կեղծակերպում էր չեզոք քաղաքականություն,
 3. 1945 թվականից մինչև մեր օրերը, երբ Թուրքիան բոլոր հնարավոր միջոցներով փորձում է հանդես գալ որպես տարածաշրջանային գերտերություն, որի արտաքին քաղաքականության անկյունաքարը կայսերապաշտական կարոտախտն ու նորօսմանական դոկտրինի իրագործումն են:

1918 թվականն ազդարարեց թուրք-օսմանյան կայսրության հոգեվարքը, չորսուկես հարյուրամյա գոյության վերջի սկիզբը: 1923թ. Թուրքիան հռչակվեց հանրապետություն, նախագահ դարձավ Մուսթաֆա Քեմալ փաշա Աթաթուրքը: 1920-30-ական թթ. իրականացվեցին բուրժուական ռեֆորմներ, վերացվեցին սուլթանականությունը և խալիֆայությունը, հոգևոր իշխանությունն անջատվեց պետությունից, դպրոցը՝ հոգևոր իշխանությունից: Ստեղծվեցին քաղաքացիական և քրեական օրենսգրքեր, արգելվեցին բազմակնությունն ու չադրան, թուրքական գիրը դարձավ լատինատառ և այլն [1]: Արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունք հռչակվեց *իռեդենտիզմը*, որը նշանակում էր Թուրքիայի կտրուկ հրաժարում կորցրած գավառներից: Նման պաշտոնական դիրքորոշումը Թուրքիային խաղաղ գոյակցություն ապահովեց 70 տարի: Սակայն, ինչպես ցույց տվեցին դեպքերի հետագա զարգացումները, այդ ամենը լուրջ քաղաքական բլեֆ էր, և Թուրքիան երբեք չէր հրաժարվելու կայսերական հավակնություններից ու ագրեսիվ պլաններից՝ հանրապետության ստեղծան առաջին իսկ օրից:

1919թ. Քեմալ Աթաթուրքին հաջողվում է Էրզրումում կազմակերպել համաժողով, որը ճանաչում է նրան որպես հեղափոխական շարժման ղեկավար և ընդունում է ծրագիր «Էրզրումի համաձայնագիր» կամ «Ազգային համաձայնություն» անվամբ: Փաստաթղթում արձանագրված «Թուրքիան անկախ պետություն է իր ազգային սահմաններում» ձևակերպումը բանավեճի առարկա դարձավ: Կոստանդնուպոլսում, ինչպես նաև արտասահմանում ապրող թուրքերը, որոնք «փափուկ վարվեցողության» կողմնակիցներ էին, առաջարկում էին զգուշավորություն դրսևորել և զերծ մնալ Անտանտայի դեմ

թշնամանք ցուցաբերելու վտանգից: Նրանք առաջարկում էին, որ Թուրքիան կոշտ քաղաքականություն որդեգրի հակառակորդ պետությունների՝ Հունաստանի և Հայաստանի նկատմամբ: «Կոշտ վարվեցողության» հետևորդները պարզապես գործում էին՝ առաջնորդվելով Բեռլինի և Մոսկվայի դիրքորոշմամբ [2]: «Էրզրումի պակտից» մի քանի ամիս անց, կոնկրետ՝ 1919թ., մեկ այլ համագումար տեղի ունեցավ Սվազում: Համագումարն ավելի կարևոր էր, քան նախորդը, քանի որ վերահաստատեց և ամրագրեց «Էրզրումի համաձայնագիրը», ինչպես նաև ամբողջովին ներկայացրեց գերմանա-բոլշևիկյան առաջնորդների նպատակները: Դա «պանիսլամական համագումար» էր, որին պաշտոնապես մասնակցում էին ադրբեջանցիները: Ներկա էին նաև պարսից պատգամավորները: Խնդիրը դրված էր ողջ պարզությամբ: Մոսկվայի կառավարությունը խոստանում էր օգնություն և թուրքական բոլոր հավակնությունների բավարարում, բայց մի պայմանով: Թուրքիան իրականացնելու էր Կրեմլի բոլոր պահանջները, որոնք էին. պատերազմը դառնում է ընդհանուր՝ ընդգրկելով Կիլիկիան, Սիրիան, Մեսոպոտամիան և Արաբիան: Հաստատվում է անարխիա, հատկապես Արևելքում: Հեղափոխական շարժումն արագ տարածվում է Ասիայում և հասնում մինչև Հնդկաստան [2, p. 33]:

Որդեգրելով փոքր պետության կարգավիճակ և ճանաչվելով որպես այդպիսին՝ Թուրքիան սկսեց մանևրել Անտանտայի երկրների, Ռուսաստանի և Գերմանիայի միջև: Ըստ Թել Ավիլի համալսարանի քաղաքական գիտությունների պրոֆեսոր Դևիդ Վայթալի, Թուրքիան 1940-ական թթ. 30-40 մլն բնակչություն ունեցող թերզարգացած երկիր էր և հեշտորեն կարող էր ընդգրկվել «փոքր պետություն» հասկացության կատեգորիայի մեջ: 1940-ական թթ. Թուրքիայի կարևոր և խոշոր արտաքին քաղաքական գործընկերներն էին Մեծ Բրիտանիան, Գերմանիան և Խորհրդային Միությունը: Երկար ժամանակ Թուրքիայի արտաքին քաղաքական կողմնորոշումը կախված էր վերոնշյալ մեծ պետությունների գործողություններից և արձագանքից: Լենինի հետ սիրախաղից հետո Թուրքիան 1925թ. ստորագրեց սովետա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիր: 1938թ. Անգլիան և Ֆրանսիան աջակցեցին Սիրիայից Ալեքսանդրեթի սանջաքն անջատելուն և Թուրքիային միացնելուն: Իսկ մեկ տարի անց՝ 1939թ., Անկարան միացավ անգլո-ֆրանսիական հակաֆաշիստական դաշինքին: Զուգահեռաբար, սովետա-ֆիննական պատերազմի ժամանակ Թուրքիան գաղտնի բանակցություններ էր

վարում Սիրիայում ֆրանսիական հրամանատարության հետ՝ Բաքվի և Բաթումի վրա հարձակվելու նպատակով: Փոքր պետության դիվանագիտական խաղաթուղթը Թուրքիան փայլուն կերպով օգտագործեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Հայտարարելով չեզոքություն՝ Թուրքիան իրականում Գերմանիային ցույց էր տալիս տարբեր տիպի օգնություն՝ վաճառում էր քրոմի հանքանյութ և այլ ստրատեգիական նյութեր: Արվերը և գետտապոն Բոսֆորի ավերին իրենց զգում էին ինչպես սեփական տանը, ֆաշիստական և իտալական նավերն անարգել անցնում էին նեղուցներով: «Թուրքիան Գերմանիայի աջակցությամբ ծրագրում էր զավթել Կովկասը: Այն սովետական սահմանի վրա կենտրոնացրել էր 26 դիվիզիա, որոնք Ստալինգրադի անկման պահին ներխուժելու էին Անդրկովկաս: Գերմանական զորքերի ջախջախումը Ստալինգրադում սթափեցրեց թուրք կառավարողներին: 1944թ. դաշնակիցների պահանջով Թուրքիան ձևականորեն խզեց հարաբերությունները Գերմանիայի հետ, իսկ 1945թ. ՄԱԿ-ում տեղ գրավելու համար ձևական պատերազմ հայտարարեց Գերմանիային ու Ճապոնիային» [1, էջ 257]:

Ուսումնասիրելով Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական դիվանագիտության ընտրած գործելակերպը՝ գալիս ենք հետևյալ եզրակացության: Հայտնվելով բոլոր ժամանակների խոշորագույն բախման դաշտում (Թուրքիայի բոլոր աշխարհագրական հարևանները պատերազմական կարևոր թատերաբեմեր էին) և քաջ գիտակցելով իրենց սահմանափակ ուժերն ու խոցելիությունը՝ թուրքերն ընտրեցին երբևէ չկիրառված և վտանգավոր քաղաքական կուրս՝ հիմնված իրական կամ երևակայական սահմանափակումների, խոցելիության և վախի վրա: Նրանք անսացին Ուինսթոն Չերչիլի այն մտքին, որ եթե փայփայում ես սեփական անկախության գաղափարը, ապա պետք է մասնակցես պատերազմին: Հակառակ դեպքում նրա բոլոր հարևանները կպարտվեն, իսկ Թուրքիան կմնա միայնակ, անպաշտպան ու կղաճառ Հիտլերի հնազանդ ստրուկը: Թուրքիան նախընտրեց չմասնակցել պատերազմին և պահել կասկածելի չեզոքություն՝ երկդիմության, քաղաքական կեղծիքի և անազնվության հիմքերի վրա: Իսկ մեծ քաղաքական գործչի և դիվանագետի կանխատեսումը չարդարացավ: Թուրքիան խաբեց բոլորին: Իսկևթ Ինյոնյուի կառավարության դիվանագիտական մեծագույն հաջողությունն այն է, որ երկիրը դուրս եկավ դարի ամենախոշոր սպանդից՝ առանց մի թուրք զինվորի քիթն արյունելու:

Պատերազմում Թուրքիայի՝ փոքր պետության չեզոք քաղաքականությունն ուղղված էր սեփական անկախության պահպանմանը և գերտերությունների հետ զինված բախումից խուսափելու նպատակին: Երկրորդ աշխարհամարտի ավարտով վերջ դրվեց նաև Թուրքիայի կեղծ՝ քվազիչեզոք դիվանագիտությանը, և այն կտրուկ շրջադարձ կատարեց դեպի Արևմուտք, առաջին հերթին՝ դեպի ԱՄՆ: «Թրումենի դոկտրինի» և «Մարշալի պլանի» սահմաններում Թուրքիան ստացավ ռազմական և տնտեսական մեծ օգնություն: 1950թ. թուրքական 20 հազարանոց զորակազմն ամերիկյան զորքերի հետ պատերազմեց Կորեայում: Իսկ ներքաղաքական կյանքում թուրքերի մեջ հավանաբար վերակենդանացավ գենետիկական կոդը, որի հետևանքով Ա.Մենդերեսի կառավարությունը 1955թ. կազմակերպեց հայերի և հույների զանգվածային ջարդեր: 1951թ. Թուրքիան դարձավ ՆԱՏՕ և ՄԵՆՏՕ անդամ (*Central Treaty Organization*, հաճախ անվանվում էր Բաղդադյան պակտ՝ ռազմաքաղաքական կազմակերպություն Միջին և Մերձավոր Արևելքում՝ ստեղծված ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի կողմից, գործել է 1955-1979թթ.): Թուրքիան ՆԱՏՕ ֆորպոստն է, որն ապահովում է նրա հարավային թևի գործողությունները: *Թուրքիայի ներուժը ներկայումս համապատասխան հիմքեր է ստեղծում հանդես գալու որպես տարածաշրջանային մեծ տերություն: 2004թ. տվյալներով՝ Թուրքիայի բնակչությունը կազմում է 64 մլն 800 հազ. մարդ, բնական աճը՝ 9,1%, ծնելիության մակարդակը՝ 16,2%, մանկական մահացության մակարդակը՝ 8%, կյանքի միջին տևողությունը՝ 78 տարի, 15 տարեկանից ցածր բնակչությունը՝ 23%, 65-ից բարձր բնակչությունը՝ 11%, ազգային համախառն արտադրանքը՝ \$183,994 մլրդ, մեկ շնչի հաշվով՝ \$6060, աճի մակարդակը՝ 7,2%, սղաճի մակարդակը՝ 80,4%, գործազրկության մակարդակը՝ 6,6%, արտաքին պարտքը կազմում է \$79.789.4 մլն, ներմուծումը՝ \$35.187, արտահանումը՝ \$21.975, գյուղատնտեսությունը՝ 45%, արդյունաբերությունը՝ 22%, ծառայությունները՝ 33%, ավտոմոբիլային ճանապարհները՝ 381.028 կմ, երկաթուղայինը՝ 8.429 կմ, ռազմական բյուջեն կազմում է ներքին համախառն արտադրանքի 2,7%-ը, զինված ուժերում ծառայում է 639 հազ. մարդ [3, c. 615]:* Այդուհանդերձ, Թուրքիայի ներուժն ասիմետրիկ է նրա քաղաքական հավակնությունների և ծավալապաշտական նկրտումների համեմատ: Նման քաղաքականությունն իրենց կարող են թույլ տալ միայն համաշխարհային չափանիշներին համա-

պատասխանող գերտերությունները: Թուրքական արտաքին քաղաքականության հայեցակարգային սկզբունքը՝ «զրո խնդիրներ հարևանների հետ», հակասության մեջ է մտնում նրա կոնկրետ գործողությունների և քայլերի հետ գրեթե բոլոր ուղղություններով: Թուրքական դիվանագիտությունը չլուծված խնդիրներ ունի Իրանի, Իրաքի, Սիրիայի, Իսրայելի, Հունաստանի, Կիպրոսի, Հայաստանի հետ, որոնց լուծումը մշուշապատ է և չափվում է բազմաթիվ անհայտներով: Թուրքիայի արտաքին քաղաքականության «աքիլեսյան գարշապարը»՝ քրդական հարցը, սրվել է ավելի, քան երբևէ՝ սպառնալով երկրի պետական և ազգային շահերին ու հետաքրքրություններին:

Նշված խնդիրների լուծման նպատակով դարասկզբին Թուրքիան վերակազմավորում է իր դիվանագիտությունը և ռազմաքաղաքական կոնցեպտը՝ փորձելով համապատասխանեցնել դրանք իր նորսմանական, աշխարհաքաղաքական նկրտումներին: Թուրքական քաղաքական հովերը եթե հեռու էլ են մեծ տերությունների հավակնություններին համարժեք լինելուց, այդուհանդերձ, կարող են լուրջ վտանգ ներկայացնել տարածաշրջանի երկրների համար: «Իր անմիջական հարևանների նկատմամբ ռազմական գերազանցությունն ու ռազմականացման տեմպերը կարող են հանգեցնել տարածաշրջանում նոր ապակայունացման և ռազմական բախումների: Հատկապես վերջին շրջանում որոշ հարևանների և տարածաշրջանի երկրների, մասնավորապես՝ Կիպրոսի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության հետ ռազմական վերջնագրերի լեզվով խոսելը պայմանավորված է նրանց նկատմամբ Թուրքիայի ռազմական ուժերի գերազանցությամբ ու հնարավորություններով: Այս համատեքստում, նկատի ունենալով Թուրքիայի անվտանգային քաղաքականության անկանխատեսելիության բարձր աստիճանը, կառավարող շրջանների ագրեսիվ վարքագիծը, ռազմաքաղաքական հավակնությունները և մի շարք հարևանների հետ ոչ բարիդրացիական հարաբերությունները՝ կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի կողմից ռազմական ուժի կիրառման հավանականությունը բավական բարձր է» [4, էջ 313-314]:

Մայիս, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 4, Երևան, 1978:
2. L'aventure kémaliste. Un danger pour l'Orient, l'Europe et la Paix. Angore et Berlin. Le complot germane-kémalist contre le Traité de Versailles, Edition SIGEST, Alfortville-F, 1921.
3. Энциклопедия LAROUSSE, М., 2009.
4. *Հոնն Հովսեփյան*, «Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014թ.:

ՓՈՔՐ ԵՎ ՄԵԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄԸ ԹՈՒՐԳԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Արման Նավասարդյան

Ամփոփագիր

Հոդվածում դիտարկվում են Թուրքիայի դիվանագիտության նպատակների և մեթոդաբանության այլակերպության գործընթացի երեք հիմնական շրջանները՝ Առաջին համաշխարհային պատերազմից մինչև մեր օրերը: Անդրադարձ է կատարվում Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի՝ որպես փոքր և թույլ պետության, քվազիչեզոք դիվանագիտական մանևրներին, որոնց հաջորդեց նրա կտրուկ շրջադարձը դեպի Միացյալ Նահանգներ: XXI դարասկզբին Թուրքիան վերակազմավորում է իր դիվանագիտությունը և ռազմաքաղաքական կոնցեպտը՝ փորձելով դառնալ Մեծ Մերձավոր Արևելքի քաղաքական հիմնական դերակատարներից մեկը՝ նորսմանական աշխարհաքաղաքական հավակնություններով ու նկրտումներով, ինչը հղի է ապակայունացման և ռազմական բախումների վտանգով:

ТРАНСФОРМАЦИЯ ДИПЛОМАТИИ БОЛЬШИХ И МАЛЫХ СТРАН НА ПРИМЕРЕ ТУРЦИИ

Арман Навасардян

Резюме

В статье рассматриваются три основных периода процесса трансформации целей и методологии турецкой дипломатии – со времен Первой мировой войны до наших дней. «Панисламистский съезд», созданный Кемалем Ататюрком в 1919 году в Эрзеруме и Сивасе, в котором официально участвовали делегаты Азербайджана. А также квазинейтральные дипломатические маневры Турции как малого и слабого государства в

годы Второй мировой войны, за которыми последовал резкий разворот в сторону Соединенных Штатов. В начале двадцать первого столетия Турция реорганизует свою дипломатию и военно-политическую концепцию, пытаясь стать одним из главных политических акторов на Большом Ближнем Востоке. При этом у нее неоосманские геополитические амбиции и устремления, чреватые дестабилизацией обстановки и военными столкновениями.

THE TRANSFORMATION OF DIPLOMACY OF SMALL AND LARGE COUNTRIES ON THE EXAMPLE OF TURKEY

Arman Navasardyan

Resume

The article examines the three main aspects of metamorphosis of the Turkish diplomacy's goals and methodology, from the World War I to the present days. Quasi-neutral diplomatic maneuvers of Turkey during the World War II as a small and weak state are reviewed, along with its subsequent drastic swing toward the United States. At the beginning of the 20th century Turkey restructured its diplomacy and military concept, trying to become one of the main players in the Greater Middle East with some neo-Ottoman geopolitical ambitions and aspirations, which is fraught with instability and risk of military clashes.

ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Հրայր Փաշայան՝

Բանալի բառեր՝ ԼՂՀ, Ադր. ԽՍՀ, ԽՍՀՄ, ԼՂԻՄ, անկախություն, ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականություն, միջազգային իրավունք, ԽՍՀՄ օրենսդրություն:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առանձնահատուկ կարևորություն ունեն Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորմանն առնչվող բանալի փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները: Այդ ժամանակաշրջանում ընդունված իրավաքաղաքական փաստաթղթերը, հանդիսանալով նախորդող տարիներին հիմնախնդրի շուրջ տեղի ունեցած գործընթացների տրամաբանական շարունակությունը, միաժամանակ հանդիսանում են իրավական այն հենքը, որոնց վրա նախկին Ադր. ԽՍՀ տարածքում ձևավորվել են երկու նոր պետական կազմավորումներ՝ Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ կամ ԱՀ - Արցախի Հանրապետություն):

Այս համատեքստում հետաքրքրություն ներկայացնող առաջին փաստաթուղթը 1990թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» օրենքն է [1, c. 44-46]:

Օրենքի վերաբերյալ ձևավորվել է երկու հիմնական տեսակետ: Առաջինի համաձայն՝ այն նպատակ էր հետապնդում ԽՍՀՄ-ը փրկել քայքայումից, քանի որ հնարավորություն էր ընձեռում Խորհրդային Միությունում գոյություն ունեցող ինքնավար մարզերին, շրջաններին, հանրապետություններին

* Արցախի պետական համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս:

ինքնուրույն որոշելու իրենց պետաիրավական կարգավիճակը, ինչն էլ զսպաշապիկ էր հազցնելու միութենական հանրապետություններին, մասնավորապես այն հանրապետություններին, որոնք իրենց կազմում ունեին նման կարգավիճակով տարածքներ: Դրանով էր պայմանավորված ԽՍՀՄ պահպանմանն ուղղված քայլերին Բաքվի ցուցաբերած անվերապահ աջակցությունը [2]:

Երկրորդի համաձայն, որի հետ համամիտ ենք նաև մենք, ապրիլի 3-ի օրենքն իրոք նպատակ է հետապնդել առանց ցնցումների իրականացնել ԽՍՀՄ լուծարման իրավական գործընթացը: Ինչպես ցույց են տվել հետագա աշխարհաքաղաքական իրադարձությունները, դրան է միտված եղել ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության մի մասի նպատակաուղղված քաղաքականությունը:

Բոլոր դեպքերում, օրենքը և՛ իրավական, և՛ քաղաքական առումներով հիմք էր ստեղծում ԽՍՀՄ լուծարման դեպքում դեռևս նրա գործող իրավական նորմերին համահունչ ձևակերպել նոր ստեղծվելիք պետական կազմավորումների իրավական կարգավիճակը: Միաժամանակ, դրանով իրավականորեն ամրագրվում էր, որ ԽՍՀՄ շրջանակներում ազգերի ինքնորոշման իրավունքն առաջնային է վարչատարածքային այն սահմաններից, որոնք ձևավորվել էին կամայականորեն, հենց նույն ազգերի ինքնորոշման իրավունքի խախտման արդյունքում: ԽՍՀՄ օրենսդրության համաձայն՝ օրինականության շրջանակներում հնարավորություն էր ընձեռվում ուղղել այդ սխալը և իրականացնել նախանշվող նոր պետական կազմավորումների պետաիրավական կարգավիճակն ու նրանց սահմանները:

Օրենքը, ԽՍՀՄ սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն, սահմանել է ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգը (հոդված 1): Օրենքի երկրորդ հոդվածում նշված է, որ ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու որոշումն ընդունվում է միութենական հանրապետության ժողովրդի ազատ կամարտահայտության՝ հանրաքվեի միջոցով (ժողովրդական քվեարկություն): Հենց ժողովրդական քվեարկության արդյունքով է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ձեռք բերել իր անկախությունը:

Օրենքի 3-րդ հոդվածը նշում էր. «Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր և ինքնավար շրջաններ ունեցող միութենա-

կան հանրապետություններում հանրաքվեն անցկացվում է յուրաքանչյուր ինքնավարությունում առանձին: Ինքնավար հանրապետությունների ու ինքնավար միավորումների ժողովուրդներին է վերապահվում ԽՍՀ Միության կազմում կամ դուրս եկող միութենական հանրապետության կազմում մնալու հարցի ինքնուրույն որոշման, ինչպես նաև իր պետաիրավական կարգավիճակի հարցի առաջադրման իրավունքը: Այն միութենական հանրապետություններում, որոնց տարածքում կան շրջաններ, որոնց բնակչության մեծամասնությունը կազմում են էթնիկ խմբեր, հանրաքվեի ամփոփման ժամանակ քվեարկության արդյունքներն այդ տարածքներում առանձին են հաշվարկվում»: Պետք է շեշտել, որ օրենքում նշված դրույթները ճշգրտորեն համապատասխանում էին այն իրավիճակին, որում հայտնվել էին ԼՂԻՄ-ն ու հարակից Շահումյանի շրջանը: ԼՂՀ հռչակագրի ընդունման տեքստում նկատի են առնվել նաև 1990թ. ապրիլի 3-ի օրենքի նշված կետերը:

Ադր. ԽՍՀ իշխանությունների շահերից էր բխում ապրիլի 3-ի օրենքը դիտարկել ԽՍՀՄ պահպանման տեսանկյունից: Դրա մասին է վկայում այն փաստը, որ այստեղ ակտիվորեն մասնակցեցին ԽՍՀՄ-ը քայքայումից փրկելու նպատակով 1991թ. մարտի 17-ին կայացած հանրաքվեին: Մինչդեռ ԼՂԻՄ իշխանությունների որոշմամբ՝ «...միութենական մարմինների կողմից ինքնավար մարզի սահմանադրական իշխանությունների լիազորությունների ճանաչման հարցը լուծված չլինելու կապակցությամբ 1991 թվականի մարտի 17-ի հանրաքվեի անցկացումը ԼՂԻՄ տարածքում ձախողվում է...» [3]: Այսինքն՝ ԼՂԻՄ-ը չմասնակցեց անցկացվող հանրաքվեին: Ադր. ԽՍՀ մյուս շրջաններում, ընդհակառակը, ձայների ճնշող մեծամասնությամբ քվեարկեցին հոգուտ ԽՍՀՄ պահպանման: Սա ևս մի փաստարկ է այն մասին, որ ԼՂԻՄ-ը փաստացիորեն Բաքվի իշխանությունների ենթակայությունից դուրս էր՝ չէր ենթարկվում Բաքվի իշխանություններին և իր որոշումների համար հաշվետու չէր նրան, իսկ Բաքուն որևէ լծակ չունեի ԼՂԻՄ-ին իր կամքը թելադրելու համար:

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը, բացի 1990թ. ապրիլի 3-ի օրենքից, համապատասխանում է նաև Ազգերի ինքնորոշման իրավունքի՝ այսօր էլ միջազգային հարաբերությունները կարգավորող հիմնական սկզբունքներից մեկի կիրառման չափանիշներին [4]: Բայց Լեոնային Ղարա-

բաղի Հանրապետության հռչակումն ունի ազգերի ինքնորոշման իրավունքից տարբերվող՝ ավելի գորեղ իրավական հիմքեր: Բանն այն է, որ որոշ քաղաքական ու պետական գործիչներ, ելնելով զուտ քաղաքական նպատակահարմարությունից, անթաքույց հակադրում են տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքները՝ թույլ չտալու վերջինիս կիրառման իրավական հնարավորությունը, ինչը հավելյալ դժվարություններ է ստեղծում նորաստեղծ պետությունների ճանաչման համար: Մինչդեռ, Ադր. ԽՍՀ տարածքում հռչակված երկու պետական կազմավորումների՝ ԱՀ-ի և ԼՂՀ-ի կողմից ընդունված փաստաթղթերից բխում են մի շարք կարևոր իրավաքաղաքական փաստարկներ, որոնք, անխոցելի դարձնելով ԼՂՀ հռչակման իրավական հիմքերը, թույլ են տալիս նրան դուրս բերելու տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքների միջև գոյություն չունեցող, բայց քաղաքական նկատառումներով ստեղծված գորղյան հանգույցից: Այդպիսի փաստաթղթեր են հանդիսանում հենց նույն Ադրբեջանի Հանրապետության անկախացման ժամանակաշրջանում ընդունված Բանալի փաստաթղթերը: Այսպես, 1991թ. օգոստոսի 30-ին Ադր. ԽՍՀ ԳԽ-ի կողմից ընդունված «Պետական անկախության վերականգնման մասին» հռչակագրից [5] բխում են հետևյալ իրավաքաղաքական փաստարկները.

1. Նախ, ադրբեջանական կողմը, կեղծելով պատմական փաստերը, անկախացման գործընթացն սկսել է միջազգային հանրությանն ապատեղեկատվություն մատուցելով: Ինչպես նշված է հռչակագրի ներածական մասում. «Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, ղեկավարվելով Ադրբեջանի ժողովրդի բարձր պետական շահերով և արտահայտելով նրա կամքը...»: Առաջին անգամ պաշտոնական Բաքվի կողմից օգտագործվել է նոր՝ «Ադրբեջանի ժողովուրդ» հասկացությունը: Հռչակագրում մի քանի անգամ շեշտելով այդ մասին, հանդես գալով նրա ճակատագրի և ազատ զարգացման պատասխանատուի, ինչպես նաև անկախ ազգային պատկանելությունից և հավատքից Ադրբեջանական Հանրապետության բոլոր քաղաքացիների՝ միջազգային ակտերով նախատեսված հիմնական իրավունքների երաշխավորի դերում (հռչակագրի երրորդ և չորրորդ պարբերություններ), Բաքուն, խեղաթուրելով իրականությունը, «Ադրբեջանը» նույնացնում է հռչակագ-

րում երբևէ չհիշատակված Ադր. ԽՍՀ-ի հետ: Ինչպես հայտնի է, բազմազգ Արևելյան Անդրկովկասը, որը 1918թ. թուրքական զորքերի ներխուժման արդյունքում անվանակոչվեց Ադրբեջան, հանդիսացել և այսօր էլ հանդիսանում է բնիկ մի շարք ազգերի հայրենիքը, որոնց ազգային շահերը, ինչպես փաստերն են վկայում, չեն համապատասխանում դարասկզբի կովկասյան թաթարների՝ ներկայիս ադրբեջանցիների շահերին: Այսինքն՝ նրանք իրավունք չունեն Արևելյան Ադրբեջանում բնակվող բոլոր ժողովուրդների անունից հռչակագիր ընդունել, մանավանդ որ բազմաթիվ ազգեր այսօր էլ իրենց հայրենիքում վերջիններիս կողմից ենթարկվում են ցեղասպանության ու բռնությունների [6], քանի որ ներկայիս ադրբեջանցիները վախենում են, որ մի օր այդ ազգությունները ևս կպահանջեն հարգել իրենց հայրենիքի օրինական տերը լինելու իրավունքները: Նման՝ առայժմ անհաջող նախադեպերի մասին փաստերն են խոսում¹ [7]: Բաքուն այդպիսի իրավունք պարզապես չունի:

2. Հռչակագրի երկրորդ նախադասության մեջ նշված «նկատի ունենալով, որ 1918-1920թթ. Ադրբեջանի Հանրապետությունը եղել է որպես անկախ, միջազգային հանրության կողմից ճանաչված պետություն» արտահայտությունը բացահայտ կեղծարարություն է, քանի որ փաստերը ճիշտ հակառակի մասին են վկայում: Նախ, 1918-1920թթ. գոյություն է ունեցել ոչ թե Ադրբեջանի Հանրապետությունը, այլ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ): Մյուս կողմից՝ տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցած միակ խոշոր միջազգային կազմակերպությունը՝ Ազգերի լիգան, որը ստեղծվել էր որպես իրավական հարթակ՝ հաստատելու և իրավական ուժ տալու պետությունների գոյությանն ու նրանց միջև առկա հարաբերություններին, մերժել է այդ կառույցին Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության անդամակցությունն այն հիմնավորմամբ, որ այն չունի ոչ կայուն կառավարություն, ոչ փաստացի վերահսկողություն այն տարածքների վրա, որոնց հավակնում է: Այսինքն, վերականգնվող՝ 1918-1920թթ. ադրբեջա-

¹ 20-րդ դարում թալիշները երկու անգամ հայտարարել են սեփական պետության ստեղծման մասին (1919-ին և 1993-ին), իսկ 1991թ. փետրվարի 28-ին լեզգիական ժողովրդի լիազորված ներկայացուցիչների երրորդ համագումարը, որը տեղի է ունեցել Դադստանի Ղուսումբենդ գյուղում, ընդունեց լեզգի ժողովրդի պետության վերականգնման և Սամուր գետի երկու ափերին Լեզգիստանի Հանրապետության ստեղծման մասին հռչակագիրը:

- նական կոչված պետությունն իրականում միջազգային հանրության կողմից ճանաչված չէր որպես անկախ պետականություն:
3. Ներածության երրորդ նախադասությունը ձևակերպվել է այսպես. «հիմնվելով Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության, սահմանադրական օրենքների և Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանության, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության տնտեսական ինքնուրույնության վրա...»: Բանից անտեղյակ մարդը հոչակագրի տեքստի ընթերցումից կարող է այն տպավորությունը ստանալ, որ խոսքը 1918-1920թթ. գոյություն ունեցած ԱԴՀ սահմանադրության մասին է, քանի որ հենց այդ պետությունն է վերականգնվում: Փաստն այն է, որ 1918-1920թթ. գոյություն ունեցած Ադրբեջանական Հանրապետությունը սահմանադրություն չի ունեցել: Հետևաբար, խոսքը կարող է լինել միայն Ադր. ԽՍՀ սահմանադրության մասին: Մեր կարծիքով, այսպիսի անվանափոխությունները նպատակ են ունեցել մոլորեցնելու միջազգային հանրությանը՝ տպավորություն ստեղծելով, թե, իբր, պետական անկախությունը վերականգնող ԱՀ-ն հիմնվում է 1918-1920թթ. Ադրբեջանի Հանրապետության պետաիրավական ակտերի վրա: Հազիվ թե ՄԱԿ-ում, որին 1992թ. այդ պետությունն անդամակցել է, ԵԱՀԿ-ում՝ որի ջանքերով ստեղծված Մինսկի խումբը, ըստ էության, կոչված է դարաբաղյան հակամարտությունը կարգավորելու համար, կամ այլ միջազգային կառույցում խնդիրն այդպիսի մանրամասնությամբ իմանային: Խնդրի էությունը խեղաթյուրվել է նաև այն պատճառով, որ Բաքվում արդեն որոշված էր Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու հարցը, ուստի նշված փաստաթղթերը չէին կարող կապել Ադր. ԽՍՀ-ի հետ: Թերևս, դա է նաև պատճառը, որ հոչակագրում Ադր. ԽՍՀ անվանումը ոչ մի անգամ չի հիշատակվում:
4. Ուշադրության արժանի են նաև փաստաթղթի ԱՀ տարածքային ամբողջականության և պետական սահմանների մասին ձևակերպումները. «ձգտելով կանխել Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանն ուղղված սպառնալիքները, դեկավարվելով Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանների անվտանգության և անձեռնմխելիության ապահովման սրբազան

պարտքով...»: Հարց է առաջանում. ո՞ր հանրապետության սահմանների մասին է խոսքը: Եթե նշվածը վերաբերում է Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությանը, ապա, ինչպես հայտնի է, այն ճանաչված պետական սահմաններ չի ունեցել: Եթե նկատի են առնվում Ադր. ԽՍՀ սահմանները, այն ոչ թե պետական, այլ միայն վարչական սահմաններ է ունեցել, քանի որ կար սովետա-թուրքական սահման և չկար հայ-թուրքական սահման, կար սովետա-լեհական սահման և չկար բելառուս-լեհական սահման [8, էջ 83-85]: Մյուս կողմից, այդ սահմանների նկատմամբ Բաքվի ինքնիշխանությունը սահմանափակված էր այնպիսի իրավական ակտերով, որ դրանցից դուրս այդ սահմանները որպես այդպիսին չեն կարող լեգիտիմ ճանաչվել: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կարսի պայմանագրին և Կովբյուրոյի որոշմանը, որով Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը ներառվել են Խորհրդային Ադրբեջանի սահմանների մեջ, առաջինը՝ որպես նրա հովանավորությանը հանձնված պետական կազմավորում, երկրորդը՝ լայն ինքնավարությամբ մարզի պետաիրավական կարգավիճակով:

Ստեղծված իրավական և աշխարհաքաղաքական իրողությունները ճիշտ գնահատելով՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի և Շահումյանի շրջանի ժողովրդական պատգամավորների խորհրդի համատեղ նիստն ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագիրը [9, c. 69-70]:

Փաստաթղթի վերլուծությունից հետևյալ փաստարկներն են ի հայտ գալիս.

1. Ինչպես նշում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Մանասյանը, Հռչակագիրը մատնանշում է ինչպես Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից Ադրբեջանի Հանրապետության հրաժարվելու փաստը (հռչակագրի երկրորդ պարբերություն- Հ.Փ.), այնպես էլ ԽՍՀՄ ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետությունների ելքի հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքը: Այսպիսով, Հռչակագիրը ԼՂՀ-ն հռչակում էր ԽՍՀՄ պետականության իրավունքի համատեքստում՝ հղում կատարելով իրավաբանորեն բացառիկ կարևորություն ունեցող Բաքվի՝ Ադր. ԽՍՀ

իրավահաջորդությունից հրաժարվելու փաստին: Այս կարևորությունը բացատրվում է նրանով, որ 1918-1920թթ. ԱԴՀ կազմում չեն եղել ոչ Լեոնային Ղարաբաղը, ոչ Նախիջևանը [10, с. 49]:

2. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման համար հիմք է հանդիսացել նաև, ինչպես նշված է տեքստի առաջին նախադասության մեջ. «...ժողովրդի կամքը, որն ամրագրվել է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ ու Շահումյանի շրջանի իշխանության մարմինների 1988-1990թթ. որոշումներում...»: Ինչպես հայտնի է, արցախահայությունը բազմիցս է դիմել ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին հիմնախնդիրը արդարացիորեն՝ մարզի բնակչության իղձերին համապատասխան լուծելու համար: Այդ նպատակով ազգաբնակչության շրջանում բազմաթիվ հարցումներ են իրականացվել, որի ընթացքում ժողովուրդը տասնյակ հազարավոր ստորագրություններով հավաստել է Մայր հայրենիքի հետ վերամիավորվելու իր ձգտումը: Օրինակ, դրանց թվին են պատկանում 1966թ. շուրջ 50 հազար և 1987թ. շուրջ 80 հազար ստորագրություններով ԽՍՀՄ կենտրոնական մարմիններին ուղղված ղարաբաղցիների դիմում-նամակները:
3. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման փաստարկներից մեկը, ինչպես նշված է հռչակագրում, հանդիսացել է *Ադրբեջանում տարվող ապարտեիդի և խտրականության քաղաքականությունը, որը ասելության և անհանդուրժողականության մթնոլորտ է ստեղծել հանրապետության հայ ժողովրդի նկատմամբ, ինչը հասցրել է զինված ընդհարումների, մարդկային զոհերի, հայկական խաղաղ գյուղերի բնակիչների բռնազաղթի*: Փաստորեն, Լեոնային Ղարաբաղի հայության կողմից անկախ պետականության հռչակման հիմնական փաստարկներից մեկը կապված էր Ադրբեջանական ԽՍՀ պետականակերտ ազգի իրավունքների խախտման և նրա հետագա գոյության սպառնալիքի հետ: Այսինքն՝ ինքնապաշտպանության նպատակով անհրաժեշտ էր ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք կապահովեին երկրամասի բնակչության գոյությունն ու անվտանգությունը, մանավանդ որ *երկրում ստեղծված վիճակի բարդությունն ու հակասականությունը, Միության ապագայի, իշխանության և կառավարման միութենական կառուցվածքների*

Ճակատագրի անորոշությունը, ինչպես նշված է հոչակագրում, այլ հնարավորություն չէին ընձեռում:

4. Միաժամանակ, հոչակագրում ամրագրված է. «հիմնվելով ԽՍՀ Միության գործող սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և հավաք ապրող ազգային խմբերին իրավունք են տալիս ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն լուծել իրենց պետական-իրավական կարգավիճակի մասին հարցերը...»: ԼՂՀ անխախտության մասին հոչակագիրն ընդունվել է Բաքվի՝ 1991թ. օգոստոսի 30-ին ընդունած «1918-1920թթ. պետական անկախության վերականգնման մասին» հոչակագրից երկու օր անց: Վերջին հանգամանքն իրավական հիմք է տվել արցախահայությանը՝ ձեռնարկել ԽՍՀՄ օրենսդրությամբ իրեն վերապահված քայլեր, որոնք ուղղված են անկախ պետականության ստեղծմանը: Այնուհետև հոչակագրում նշվում էր, որ «Մինչև ԼՂՀ սահմանադրության և օրենքների ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործում են ԽՍՀՄ սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև այժմ գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն հոչակագրի նպատակներին ու սկզբունքներին և հանրապետության առանձնահատկություններին»: Այս դրույթով, փաստորեն, ամրագրվում էր, որ ԼՂԻՄ-ը դեռևս մնում է ԽՍՀՄ իրավաստիրություն, այն դեպքում, երբ նորաստեղծ ԱՀ-ն, առանց պահպանելու գործող իրավական նորմերը, դուրս եկավ ԽՍՀՄ կազմից՝ հրաժարվելով Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից: Դրանով, ըստ էության, ադրբեջանական կողմը փաստաթղթային ձևակերպմամբ չեղյալ հայտարարեց մինչև իսկ այն վարչական կապը, որը գոյություն էր ունեցել Ադրբեջանական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի միջև:
5. Փաստորեն, Ադր. ԽՍՀ տարածքում գոյություն ունեցած երկու պետական կազմավորումներից մեկը՝ ներկայիս ԱՀ-ն, 1991թ. օգոստոսի վերջերին անկախացման գործընթաց սկսելով (ԱՀ-ում, բացի 1991թ. մարտի 17-ին ԽՍՀՄ պահպանման օգտին կազմակերպված քվեարկությունից, աջակցություն են ցուցաբերել նույն թվականի օգոստոսին պետական հեղաշրջման փորձ կատարող ուժերին՝ Արտակարգ դրության պետա-

կան կոմիտեին), «Պետական անկախության վերականգնման մասին» հռչակագրով հրաժարվել է նրա իրավահաջորդությունից: Մյուսը՝ ԼՂՀ-ն, ընդհակառակը, անկախացման գործընթաց սկսելով, չի հրաժարվել խորհրդային իրավահաջորդությունից, այլ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագրի դրույթների համաձայն՝ մնացել է ԽՍՀՄ իրավատիրություն՝ օգտվելով. «...ԽՍՀՄ սահմանադրությամբ ու օրենսդրությամբ հանրապետություններին տրվող լիազորություններից...»: Այս և Ադր. ԽՍՀ-ում ապրած հայ բնակչության ու մյուս ազգերի անվտանգությունն ապահովելու և սեփական իրավատիրություն նրանց՝ մասնավորապես պետականակիր ադրբեջանահայությանը քաղաքացիություն և բնակչության վայր տրամադրելու պատրաստակամության տեսանկյունից ԼՂՀ-ն հանդիսանում է Ադր. ԽՍՀ իրավահաջորդը [11, էջ 91-95]:

6. 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակագիրը, դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեն և անկախ պետականություն ձևավորելու արցախահայության կողմից իրականացված քայլերն ու ստեղծված իրավիճակը [12, c. 52]¹ համապատասխանում են մի շարք միջազգայնագետների՝ պետականությունը բնորոշող չափանիշներին: Գեորգ Ելինեկի (*George Jellinek*) երեք բաղադրիչների տեսության համաձայն՝ պետականությունը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին. որոշակի սահմաններ ունեցող տարածքի, մշտական և որոշակի բնակչության (ժողովրդի) և սուվերեն իշխանության առկայության: Գերմանացի իրավագետը գրում էր. «Իրավաբանական ֆիկցիայից խուսափելու և պետության՝ ցանկացած իրավագիտությանը նախորդած բնական կեցությունը ճանաչելու համար բնական է թվում փնտրել պետության օբյեկտիվ էությունը նրա բաղկացուցիչներից, ըստ երևույթին, իրապես գոյություն ունեցող տարրերից մեկում: Այդ տարրերն են՝ տարածքը, ժողովուրդը, իշխողը» [13, c. 103]: Հայտնի ռուս իրավապաշտպան Գ.Ստարովոյտովայի ինքնորոշ-

¹ «Բոլոր պետությունները ծնվել են արյամբ: Բայց հետո, որպեսզի չանհետանան, նրանք պետք է ստեղծարար կյանք սկսեին. ստեղծեին տնտեսություն, կառուցեին տներ, ձեռնարկություններ, կազմակերպեին առևտուրը, ստեղծեին պայմաններ բնակչության բարեկեցության բարելավման համար: Այլապես, նոր պետության գոյության ժամկետը մեծ չէ...»:

ման իրավունքի իրացման ուղղությամբ իրականացրած ուսումնասիրությունները թույլ են տվել նրան ձևակերպել հինգ չափանիշներից բաղկացած համախումբ՝ անտանելի գոյություն, պատմական իրավունք, բնակչության էթնիկական կազմ, ժողովրդական կամարտահայտություն, պատասխանատվություն հետևանքների համար [14, p. 38-41]: Համապատասխան չափանիշները ներկայացված են նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Օրինակ, 1933թ. Պետությունների իրավունքների և պարտականությունների Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված են պետության հետևյալ չորս չափանիշները. մշտական բնակչություն, որոշակի տարածք, սեփական կառավարություն, այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն [15]: «Ազրեախայի սահմանում» բանաձևի հեղինակները, նույնպես, Հոդված 1(a)-ում հեռատեսորեն գրել են, որ դրանում «պետություն» տերմինը «կիրառվում է՝ չկանխորոշելով ճանաչման մասին հարցը կամ հարցն այն մասին, թե արդյոք պետությունը Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ է հանդիսանում» [16]:

Վերոնշյալը և այսօր արդեն Լեոնային Ղարաբաղի Հանրապետության 23-ամյա գոյությունն ու ժողովրդավարական չափանիշներին համապատասխան պետականության կառուցումը հստակ վկայում են, որ ԼՂՀ-ն համապատասխանում է պետականության՝ գիտության մեջ և քաղաքական պրակտիկայում առկա չափանիշներին [17, p. 23]¹:

Ադրբեջանի Հանրապետությունն, ի տարբերություն ԼՂՀ-ի, ինչպես արդեն նշվեց, իր անկախությունը հռչակել է ոչ միայն Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելով, այլև այդ պետական կազմավորման լեգիտիմությունը ժխտելով, այն համարելով ռուսական զորքերի օկուպացիայի արդյունք: Հենց այդպիսի ձևակերպում է ամրագրված 1991թ. հոկտեմբերի 18-ի «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին սահմանադրական ակտում» [18]: Այսպես.

¹ Հրապարակային միջազգային իրավունք և քաղաքականություն մշակող խումբ և Միջազգային իրավունքի ու քաղաքականության կենտրոն (Նոր Անգլիա): Ղարաբաղյան ճգնաժամ: Կարգավորման պլան, 2000:

1. «Սահմանադրական ակտը» սկսվում է հետևյալ ձևակերպմամբ. «1918թ. մայիսի 28-ին Ադրբեջանի Ազգային խորհուրդն ընդունեց Ադրբեջանի անկախության մասին Հռչակագիրը՝ դրանով իսկ վերականգնելով ադրբեջանական ժողովրդի պետական անկախության բազմադարյա ավանդույթները»: Սահմանադրական ակտի հեղինակները հենց առաջին նախադասությունում դիտավորյալ կեղծել են պատմական փաստերը: Իրականությունն այն է, որ 1918թ. Ադրբեջանում Ազգային խորհուրդ չի եղել և չէր կարող լինել, քանի որ այդ տարիներին «ադրբեջանական» կոչվող ազգ դեռևս գոյություն չի ունեցել: Տվյալ ժամանակաշրջանում Արևելյան Անդրկովկասի իշխանության մարմինների ձևավորման և նրա նոր անվան շուրջ ընթացող վեճերի արդյունքում ընդունվել է «Մուսուլմանական Ազգային խորհուրդ» տարբերակը, որն, ինչպես բառն է վկայում, ոչ թե ազգային պատկանելություն է մատնանշում, այլ վերազգային՝ կրոնական: Մյուս կողմից, եթե ադրբեջանական անվամբ պետություն պատմության մեջ մինչ այդ չի եղել (դա հայտնի փաստ է), ինչպե՞ս կարելի է վերականգնել գոյություն չունեցած պետության դարավոր ավանդույթները: Եթե նույնիսկ «ադրբեջանական ժողովուրդ» հասկացության տակ նկատի առնենք քոչվոր ցեղերից որևէ մեկին՝ որպես կովկասյան թաթարների նախնիներ, ապա նորից պետք է արձանագրել այն փաստը, որ նրանցից որևէ մեկն Արևելյան Անդրկովկասում երբևիցե ինքնիշխան պետականություն չի ունեցել, որպեսզի հավակնի բազմադարյա ավանդույթների: Բաքուն կեղծել է պատմական փաստերը՝ փորձելով միջազգային հանրությանը ներկայանալ որպես պետականության բազմադարյա ավանդույթներ ունեցող ժողովուրդ:

2. Սահմանադրական ակտի երկրորդ նախադասությունը սկսում է հետևյալ բառերով. «Ադրբեջանական Հանրապետությունը, իր տարածքում ունենալով լիիրավ պետական իշխանություն, վարում էր ինքնուրույն արտաքին և ներքին քաղաքականություն»: Կրկին հայտնի է, որ Ազգերի լիգան մերժել է ԱԴՀ անդամակցությունն այն հիմնավորմամբ, որ տվյալ պետությունը չունի կայուն իշխանություն և փաստացի վերահսկողություն այն տարածքների վրա, որոնց հավակնում էր: 1918թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին ինքնահռչակ ԱԴՀ իշխանությունների վերահսկողությունից դուրս էր գտնվում գրեթե ողջ Արևելյան Անդրկովկասը: Նշված տարածքները, մասնավորապես՝ Բաքվի նահանգն ու Ելիզավետպոլի նահանգի մի մասը, վերահսկվում էին օրինականորեն ձևավորված Բաքվի կոմունայի, իսկ Լեռնային Ղարաբաղը՝

Ղարաբաղի Ազգային խորհրդի կողմից: Միայն թուրքական զորքերի օգնությամբ՝ Անդրկովկաս ներխուժելու արդյունքում մուսավաթականներին հաջողվեց ինքնահռչակ կառավարությունը տեղափոխել Բաքու: Բայց ոչ թուրքերին, ոչ էլ մուսավաթականներին 1918-1920թթ. չհաջողվեց նվաճել Լեռնային Ղարաբաղը: Ինչ վերաբերում է «ինքնուրույն արտաքին և ներքին քաղաքականություն վարելուն», ապա պետք է ասել, որ ընդհակառակը, ոչ միայն Ազգերի լիգան, այլև ժամանակի քաղաքական ու զինվորական գործիչները թուրքական զորքերի ներխուժման արդյունքում ստեղծված պետությունն ինքնուրույն չեն դիտարկել: Սպիտակ շարժման առաջնորդ գեներալ Ա.Ս. Դենիկինն այդ առթիվ գրել է. «Ամեն ինչ Ադրբեջանական հանրապետության մեջ արհեստական էր, անբնական, սկսած անվանումից, որը վերցված է Պարսկաստանի նահանգներից մեկից: Արհեստական տարածքը ձևավորվել էր լեզգիական Ջաբաթալայից, հայ-թաթարական Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներից, ռուսական Մուղանից և միացյալ թուրքական քաղաքականությունից՝ որպես պանթուրքիզմի և պանիսլամիզմի ֆորպոստ Կովկասում: Վերջապես, արհեստական պետության մեջ արհեստականորեն էր պահպանվում նաև ադրբեջանական իշխանությունը՝ սկզբնական շրջանում Նուրի փաշայի կամքով, այնուհետև՝ գեներալ Թոմսոնի, իսկ հետագայում՝ ուղղակի իներգիայով» [19, շ. 235]: Հայտնի գեներալը գիտի ինչի մասին է խոսում:

3. Այնուհետև. «Բայց 1920թ. ապրիլի 27-28-ին ՌԽՖՍՀ-ն, կոպտորեն խախտելով միջազգային իրավունքի նորմերը, առանց պատերազմ հայտարարելու, իր զորքի մի մասը մտցրեց Ադրբեջան, օկուպացրեց ինքնիշխան Ադրբեջանի Հանրապետության տարածքը՝ բռնությամբ վերացնելով օրինականորեն ընտրված իշխանության մարմինները»: Ինչպես արդեն նշվել է, Ազգերի լիգան հենց ինքնիշխանության և տարածքի հետ կապված հարցերն է որպես հիմնավորում նշել ԱԴՀ անդամակցությունը մերժելու իր հիմնավորման մեջ: Բացի դրանից, 1920թ. ապրիլին Բաքվում օրինականորեն ընտրված իշխանություններ չէին կարող լինել, քանի որ և՛ 1918թ. ստեղծված պետականությունը, և՛ իշխանության մարմիններն առաջացել են թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժելու արդյունքում: Թուրքական կանոնավոր զորքերը, 1918թ. սեպտեմբերին գրավելով Բաքուն, վերացրել են օրինականորեն ընտրված իշխանության մարմինները՝ իշխանության բերելով մուսավաթականներին, իսկ 11-րդ Կարմիր բանակը վերացրել է այդ իշխանությունը՝

ստեղծելով խորհրդային իշխանություն՝ ինչպիսին որ եղել էր թուրքական գորքերի Բաքու ներխուժելուց առաջ: Միաժամանակ, հարց է առաջանում. ինչպե՞ս կարող էր ռուսական բանակն օկուպացնել Ադրբեջանի Հանրապետության տարածքը, եթե տվյալ ժամանակաշրջանում այդպիսի՝ ճանաչված սահմաններով հանրապետություն գոյություն չի ունեցել:

Փաստորեն, Բաքուն, կեղծելով ակնհայտ պատմական փաստերը, փորձել է հռչակվող Ադրբեջանի Հանրապետության և նրա հավակնությունների համար իրավական հիմքեր ստեղծել, քանի որ «Ադրբեջանի Հանրապետության տարածքներ» կամ «Ադրբեջանի Հանրապետության սահմաններ» արտահայտություններն իրավական որոշակիություն չեն ներկայացնում:

4. Սահմանադրական ակտի հետագա բովանդակության մեջ նույնպես կեղծված են պատմական փաստերն ու իրողությունները. «...ինչպես 1806-1828թթ., այս անգամ նորից Ադրբեջանն օկուպացվեց Ռուսաստանի կողմից»: Հայտնի է, որ Արևելյան Անդրկովկասը միայն 1918թ. է անվանակոչվել Ադրբեջան, իսկ ռուսական գորքերը տվյալ ժամանակ օկուպացրել են ոչ թե անկախ Ադրբեջանի տարածքները, այլ ռուս-պարսկական պատերազմի արդյունքում գրավել են Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող տարածքներ: Ակնհայտ է նաև, որ երկու պետությունների միջև պատերազմի դեպքում նշվում են ոչ թե չպատերազմող, այլ պատերազմող երկրների անունները, ինչպես ռուս-թուրքական, ռուս-պարսկական և այլն: Հակառակ դեպքում, ինչպես ադրբեջանական կողմն է ներկայացնում, նշված պատերազմը պետք է կոչվեր ոչ թե ռուս-պարսկական, այլ ռուս-ադրբեջանական:

5. Նույն ոգով է գրված նրա 4-րդ կետը. «1978թ. Ադրբեջանի Հանրապետության սահմանադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում տվյալ սահմանադրական ակտի դրույթներին»: Բայց նորից հայտնի փաստ է, որ 1978թ. Ադրբեջանական Հանրապետություն չի եղել, եղել է Ադր. ԽՍՀ, որի իրավահաջորդությունից Բաքուն հենց նույն սահմանադրական ակտով հրաժարվել է՝ հիմնավորելով, որ այն ստեղծվել էր ռուսական գորքերի օկուպացիայի արդյունքում:

6. Ադրբեջանի Հանրապետության՝ Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու իրավական դրույթները հստակ ձևակերպված են Սահմանադրական ակտի առաջին երեք հոդվածներում.

«Հոդված 1. 1920թ. ապրիլի 27-28-ը ՌԽՖՍՀ զինված ուժերի ներխուժումը Ադրբեջանի տարածք, Ադրբեջանի Հանրապետության օրինականորեն ընտրված իշխանության մարմինների վերացումը և 11-րդ Կարմիր Բանակի կողմից դրան հաջորդած օկուպացումը, միջազգային իրավունքի նորմերի համաձայն, հանդիսանում են ՌԽՖՍՀ ագրեսիա ընդդեմ Ադրբեջանական անկախ պետության:

Հոդված 2. Ադրբեջանի Հանրապետությունը հանդիսանում է 1918 թվականի մայիսի 28-ից մինչև 1920 թվականի ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանական Հանրապետության իրավահաջորդը:

Հոդված 3. 1922թ. դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը ստորագրման պահից Ադրբեջանին վերաբերող մասով անվավեր է հանդիսանում»:

Մրանք, թերևս, Սահմանադրական ակտում հստակ ձևակերպված միակ դրույթներն են, որոնց վերաբերյալ ադրբեջանական կողմը, իրեն յուրահատուկ մոտեցում ցուցաբերելով, գտնում է, որ, ինչպես վերն արդեն նշվել է, ԱՀ-ն դուրս չի եկել ԽՍՀՄ կազմից, հետևաբար՝ Լեռնային Ղարաբաղն իրավունք չունի օգտվել ԽՍՀՄ ապրիլի 3-ի օրենքից և դուրս գալ Ադր. ԽՍՀ կազմից, քանի որ օրենքն այդպիսի հնարավորություն կրնձեռեր միայն այն դեպքում, եթե Ադր. ԽՍՀ-ն հայտարարեր ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին:

7. Սահմանադրական ակտի 14-րդ հոդվածում հիշատակելով Ադրբեջանի Հանրապետության սահմանների մասին՝ հեղինակները, որոշակի զգուշավորություն ցուցաբերելով, իրավական տեսակետից անհիմն ձևակերպում են կատարել. «Ադրբեջանի Հանրապետության տարածքը պատմականորեն ստեղծված սահմաններում միասնական, անբաժանելի և անօտարելի է»: Ադր. ԽՍՀ իրավահաջորդության պահպանման դեպքում գուցե նորաստեղծ պետության սահմանների հստակ ձևակերպման անհրաժեշտություն չլիներ: Ադր. ԽՍՀ սահմաններն այս դեպքում ինքնըստինքյան կարելի էր համարել Ադրբեջանի Հանրապետության սահմանները: Հենց այդպիսի նպատակ է հետապնդում ադրբեջանական կողմը՝ շեշտելով, որ անկախության հռչակմամբ ինքը դուրս չի եկել ԽՍՀՄ կազմից: Սակայն «Պետական անկախության վերականգնման մասին» հռչակագրով ու «Սահմանադրական ակտով» վերականգնելով 1918-1920թթ. գոյատևած մուսավաթական Ադրբեջանի Հանրապե-

տությունը և ամրագրելով Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու իրողությունը՝ Բաքուն պարտավոր էր նշելու Ադր. ԽՍՀ-ի հետ կապ չունեցող սահմաններ՝ հետխորհրդային տարածքում նորաստեղծ պետության սահմանների իրավական հիմքերն ու լեգիտիմությունն ապահովելու համար: Այդպիսի իրավական հիմնավորում կարող էր դառնալ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության դե-յուրե ճանաչվածությունը: Բայց քանի որ այդպիսի ճանաչված սահմաններ գոյություն չեն ունեցել, Բաքվում որոշել են միջազգային հանրությանը ներկայանալ «պատմականորեն ստեղծված տարածքներով»:

Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ԱՀ իրավասության կորուստը և դեռևս գոյություն ունեցող խորհրդային իրավակարգում նրա նկատմամբ Բաքվի իշխանությունների անօրինականությունը հստակ արտացոլված են նաև «Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի լուծարման մասին» երկրի Գերագույն խորհրդի 1991թ. նոյեմբերի 23-ի որոշման մեջ: Մասնավորապես, այստեղ նշվում է. «ընդունելով 1923թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման ոչ իրավական լինելը... ուժը կորցրած ճանաչել «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծման մասին» Ադրբեջանական ԿԳԿ 1923թ. հուլիսի 7-ի դեկրետը, ինչպես նաև «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» Ադրբեջանական ԽՍՀ 1981թ. հունիսի 16-ի օրենքը»¹: Վերոնշյալ ակտերով ԱՀ-ն ընդունում և հայտարարում էր, որ ԼՂ-ի նկատմամբ հավակնությունները 1920թ. ապրիլի 28-ից մինչև 1991թ. օգոստոսի 30-ը իրավական տեսակետից անհիմն են, չնայած դրանով նրանք սեփական նկատառումներն էին հետապնդում: Հատկանշական է, որ այս անգամ ևս ԽՍՀՄ սահմանադրական մարմինը նոյեմբերի 28-ին հակասահմանադրական որակեց 1991թ. նոյեմբերի 23-ի ԱՀ Գերագույն

¹ Եթե այդ օրենքը փորձենք դիտարկել Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարված և այդ պետական կազմավորումն անօրինական ճանաչած ԱՀ դիտանկյունից, ապա տվյալ ժամանակաշրջանում այն իրավական ոչ մի առնչություն չուներ ԼՂ տարածքի հետ: Եթե խնդիրը դիտարկենք դեռևս գոյություն ունեցող ԽՍՀՄ իրավատիրոջ շրջանակներում, ապա ինչպես Ադր. ԽՍՀ սահմանադրությունը, այնպես էլ Ադր. ԽՍՀ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» օրենքը պետք է համապատասխանեին (չհակասեին) ԽՍՀՄ սահմանադրությանը: Ե՛վ միութենական հանրապետության, և՛ մարզի կարգավիճակը որոշվում էր ԽՍՀՄ Սահմանադրությամբ, համաձայն որի՝ ինչպես խորհրդային հանրապետության, այնպես էլ ինքնավար մարզի տարածքային ամբողջականությունն իրավաբանորեն երաշխավորվում էին հավասարազոր կերպով: Իսկ ԼՂԻՄ-ի մասին օրենքի երրորդ հոդվածում նշվում էր. «...ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխվել առանց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների խորհրդի համաձայնության»:

խորհրդի որոշումը, քանի որ այն հակասում էր ԽՍՀՄ Սահմանադրության 86 և 87-րդ հոդվածներին [9, c. 82-84]: Միաժամանակ, սահմանադրական վերահսկողության կոմիտեն երբևէ չնշեց, որ ԼՂՀ հռչակումը հակասահմանադրական է: Ուստի, կարելի է փաստարկել, որ օրինականություն են ստանում այն բոլոր որոշումները, որոնք այդ ժամանակահատվածում ընդունվել են ԼՂՀ պետական մարմինների կողմից:

Ի տարբերություն ԱՀ-ի, ԼՂՀ կազմավորումը և Ադր. ԽՍՀ կազմից նրա դուրս գալը տեղի են ունեցել ինչպես դեռևս գոյություն ունեցող ԽՍՀՄ օրենսդրության, այնպես էլ ՄԱԿ կանոնադրության և միջազգային իրավական նորմերին համապատասխան ու առանց ընդունված ընթացակարգերի խախտումների: Այդպիսի հերթական քայլերից մեկն էլ հանդիսացավ 1991թ. դեկտեմբերի 10-ին, նախքան ԽՍՀՄ լուծարումը, ԼՂՀ-ում կազմակերպված համաժողովրդական ու ժողովրդավարական հանրաքվեն: Այս առթիվ հատկանշական է ԼՂՀ անկախության հանրաքվեի արդյունքների մասին անկախ դիտորդների ընդունած ակտը [9, c. 85-87]:

Փաստաթղթի վերլուծությունից հետևյալ փաստարկներն են ի հայտ գալիս.

1. Տարբեր երկրներից ժամանած անկախ դիտորդների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին ընդունված ակտի բովանդակությունն առաջին հերթին կարևորվում է նման քաղաքական իրադարձության անաչառության տեսանկյունից: «Դիտորդական խմբերը,- ինչպես նշվում է ակտի երկրորդ նախադասությունում (առաջինում ձևակերպված էր նրանց այցելության նպատակը),- աշխատել են Ստեփանակերտ քաղաքում, Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու և Շահումյանի շրջաններում: Դիտորդներն այցելել են ավելի քան 30 ընտրական տեղամասեր, ներկա գտնվել ձայների հաշվառմանը»: Փաստորեն, դիտորդները հանրաքվեն դիտարկել են ԼՂՀ բոլոր շրջաններում, իսկ եթե հաշվի առնենք, որ ընդհանուր առմամբ ստեղծվել էր 81 ընտրատարածք, որոնցից 11-ում հանրաքվեն չի կայացել [20] (դրանցից 10-ը ադրբեջանական բնակչությամբ էին, իսկ մյուսը կապված էր հրետակոծության առաջացրած պայմանների հետ), ապա պետք է ասել, որ դիտորդները քվեարկու-

թյանը մասնակցել են կայացած ընտրատեղամասերի շուրջ 43 տոկոսում, ինչը նման դեպքերի համար բավական մեծ ցուցանիշ է: Անկախ դիտորդներն իրենց ընդունված ակտում հավաստել են, որ «Հանրաքվեի նախապատրաստումը, անցկացումը և արդյունքների ամփոփումն իրականացվել են «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգին» համապատասխան: ԼՂՀ տարածքում կազմվել է 81 ընտրատարածք: Ընտրատարածքների ցուցակը և տարածքային ընտրական հանձնաժողովների հասցեները հրապարակվել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթում...»: Այսինքն՝ դիտորդները փաստել են, որ ընտրությունները կազմակերպվել են դրա համար պահանջվող իրավական նորմերին համահունչ, չնայած, ինչպես դիտորդներն են անհրաժեշտ համարել նշել. «հանրաքվեն անց էր կացվում ԼՂՀ-ի դեմ զինված ագրեսիայի պայմաններում, որն արտահայտվում էր Ստեփանակերտ քաղաքի և այլ բնակավայրերի՝ տարբեր զինատեսակների կիրառմամբ չընդհատվող հրետակոծությամբ՝ ներառյալ հրթիռներն ու հրետանին»:

2. Հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում պահպանվել են ԼՂՀ տարածքում բնակվող բոլոր ազգությունների՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքներն ու պայմանները: Այդ նպատակով քվեաթերթիկները կազմվել են երեք՝ հայերեն, «աղբբեջաներեն» և ռուսերեն լեզուներով: Միաժամանակ, նշված լեզուներից մեկով գրված քվեաթերթիկը, ըստ ընտրողի ցանկության, տրվել է անձնագրի ներկայացմամբ և ստորագրությամբ: Ընդ որում՝ կայագրի միջոցով քվեաթերթիկներն ուղարկվել էին նաև ԼՂՀ աղբբեջանաբնակ վայրերը: Ինչպես նշված է ակտում. «Հանրաքվեի հարցը ձևակերպվել է այսպես. Համաձայն է՞ք Դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն կերպով որոշի այլ պետությունների ու հանրությունների հետ համագործակցության ձևերը»: Տարաբնույթ ընկալումներից ու մեկնաբանություններից խուսափելու, ինչպես նաև ընտրողներին հստակ կողմնորոշելու նպատակով, քվեաթերթիկը պարունակել է «ԱՅՈ» ու «ՈՉ» բառերը՝ անցանկալին ջնջել նշումով: Հետևաբար, կարող ենք ասել, որ հանրաքվեի կազմակերպման և անցկացման հիմքում գերակայել է ժողովրդի կամքի ժողովրդավարական ար-

տահայտությունը, որը ժողովուրդների ինքնորոշման՝ ինքնուրույն պետություն ստեղծելու կարևորագույն չափանիշներից մեկն է:

3. Քվեարկության լեզվատիրության տեսակետից կարևոր է նաև այն համազամանքը, որ «Ժամանակավոր կանոնակարգի» համաձայն՝ հանրաքվեի առաջադրած որոշումը համարվում է ընդունված, եթե քվեարկությանը մասնակցել է քվեացուցակներում նշված անձանց կեսից ավելին»: Հանրաքվեին մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 132.328 ընտրողներից 108.736-ը, ինչը կազմում է գրանցված ընտրողների թվի 82,2%-ը, որի 99,89%-ը կողմ քվեարկեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությանը: Չափազանց կարևոր է, որ հանրաքվեն անցկացվել է մինչև ԼՂՀ-ից ադրբեջանցիների հեռանալը, որոնց մի մասը քվեարկությանը չի մասնակցել Բաքվի հրահանգով: Անկախ դիտորդներն իրենց ընդունած ակտում անհրաժեշտ են համարել նշել, որ «Դիտորդները չեն հայտնաբերել քվեարկության արարողակարգի, քվեաթերթիկների տրաման, դրանց ձևակերպման, ձայների հաշվման խախտումներ»: Այս բոլորը հիմք են հանդիսացել դիտորդների կողմից տրված եզրահանգման համար, ըստ որի՝ «Ելնելով քվեարկության արդյունքներից և նկատի ունենալով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և միջազգային ակտերի դրույթները՝ անկախ դիտորդները հայտարարում են. ԼՂՀ բնակչությունը ձայների ճնշող մեծամասնությամբ արտահայտվել է ԼՂՀ անկախության օգտին»: Այսինքն, ինչպես փաստում են անկախ դիտորդները, հանրաքվեն համապատասխանել է ն՝ տվյալ ժամանակաշրջանում երկրում գործող ներպետական իրավական ակտերին, ն՝ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, ն՝ միջազգային իրավունքի դրույթներին:

4. Ադրբեջանական կողմը ԼՂՀ անկախության հանրաքվեին նույնպես երբեմն ներկայացնում է ինչ-ինչ վերապահումներ, որոնցից առավել «ճանրակշիռն» այն է, որ հանրաքվեին չի մասնակցել ադրբեջանական բնակչությունը: Մինչդեռ, ԼՂՀ անկախության հանրաքվեին մասնակցել է ընտրական իրավունք ունեցողների 82,2%-ը: Քանի որ այդ ժամանակ ադրբեջանցիները կազմում էին ԼՂՀ ընտրական իրավունք ունեցող բնակչության մոտ 25%-ը, ապա, եթե անգամ համարվի, որ հանրաքվեին մաս-

նակցել են քվեարկության իրավունք ունեցող բոլոր հայերը, ակնհայտ է, որ «ադրբեջանցիների» մի մասը նույնպես մասնակցել է հանրաքվեին: Բայց նույնիսկ եթե մի պահ պատկերացնենք, որ բոլոր «ադրբեջանցիները» մասնակցել և դեմ են քվեարկել անկախությանը, ապա այդ դեպքում նույնպես ակնհայտ է, որ դա հանրաքվեի վերջնական արդյունքների վրա չի կարող ազդեցություն ունենալ: Հետևաբար, ինչպես հաստատել են մի քանի տասնյակ միջազգային դիտորդներ և օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչներ, հանրաքվեն անցել է անթերի:

Հաջորդ տրամաբանական քայլը հանդիսացավ ԼՂՀ ԳԽ 1992թ. հունվարի 6-ին ընդունած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին հռչակագիրը» [9, c. 88-89], որը 1991թ. սեպտեմբերի 2-ից անկախության ուղին ընտրած արցախահայության անկախ պետականություն ստեղծելու գաղափարն իրավականորեն ամբողջացնող՝ տրամաբանորեն հիմնավորված հաջորդ քայլն է, որով նա անթերի իրացրեց երկրամասի ազգաբնակչության անքակտելի կամքի իրավունքը: Ժամանակագրական առումով ԼՂՀ կազմավորման նպատակով ընդունված բոլոր իրավաքաղաքական փաստաթղթերը, մասնավորապես՝ 1991թ. սեպտեմբերի 2-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագիրը, 1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվեն և 1992թ. հունվարի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին հռչակագիրը», ընդունվել են նախքան միջազգային հանրության կողմից Ադրբեջանի Հանրապետության ճանաչումը: Մինչ այդ որևէ խոշոր պետություն չէր ճանաչել ԱՀ անկախությունը, իսկ ՄԱԿ անդամ այն դարձել է 1992թ. մարտին, ինչը նշանակում է, որ նախկին Ադր. ԽՍՀ սահմանները որևէ մեկի կողմից չեն կարող ինքնըստինքյան վերագրվել ներկայիս Ադրբեջանի Հանրապետությանը, քանի որ Ադր. ԽՍՀ տարածքների մի մասի վրա արդեն ձևավորվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

ԼՂՀ պետական անկախության մասին հռչակագրում նշված են այն կարևոր սկզբունքները, որոնք հիմք են հանդիսացել անկախ պետականության հռչակման համար, մասնավորապես՝ *ժողովուրդների ինքնորոշման անկապտելի իրավունքը, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ կամքը, պատմական հայրենիքի ճակատագրի հանդեպ պատասխանատվության գի-*

տակցությունը, ԼՂՀ բնակչությանն ագրեսիայից և ֆիզիկական ոչնչացման վտանգից պաշտպանելու ցանկությունը, Լեռնային Ղարաբաղի՝ 1918-1920 թվականների անկախ ժողովրդական ինքնակառավարման փորձի զարգացումը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի, ԵԱՀԽ մասնակից երկրների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթի սկզբունքների և միջազգային իրավունքի այլ հանրաձանսաչ նորմերի նկատմամբ հարգանքը: Փաստորեն, հռչակագրում բերվել են բոլոր այն հիմնավորումները, որոնք անհրաժեշտ են անկախ պետություն հռչակելու համար: Վերոնշյալը և հռչակագրում ընդգրկված սկզբունքները բերում են այն հետևության, որ ԼՂՀ-ն ստեղծվել, կայացել և այսօր էլ իր կազմում ընդգրկում է այնպիսի տարածքներ, որոնց հետ Ադրբեջանի Հանրապետությունն իրավական ոչ մի առնչություն չունի: ԼՂՀ անկախացումը իրավական տեսանկյունից անթերի է ընթացել և լիովին համապատասխանել է ինչպես խորհրդային օրենսդրությանը, այնպես էլ միջազգային իրավունքի նորմերին: Այս առումով, ղարաբաղյան հակամարտությունը շահեկանորեն առանձնանում է հետխորհրդային տարածքի մյուս հակամարտություններից: Ըստ երևույթին, դա է հիմք հանդիսացել ՀՀ-ում ՌԴ առաջին դեսպան Վ.Ստուպիշինին կարծիք հայտնելու, որ Լեռնային Ղարաբաղի դեպքը ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման մեր օրերի դասական օրինակներից մեկն է [21, с. 165]: Հետևաբար, հայտնի տարածքային ամբողջականության սկզբունքը կիրառելի չէ ներկայիս Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ՝ պայմանավորված նաև հենց նույն ԱՀ-ի կողմից ԽՍՀՄ լուծարման ժամանակաշրջանում ընդունված իրավական ակտերից բխող փաստարկներով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը, ինչպես ցույց են տալիս փաստերը, հանդիսացել է նախկին Ադր. ԽՍՀ պետականակիր ազգերից մեկի՝ արցախահայության ցեղասպանությունից փրկվելու և ինքնապաշտպանության միակ հնարավոր տարբերակը, քանի որ Ադր. ԽՍՀ մյուս շրջաններում բնակվող շուրջ կես միլիոն հայությունը ենթարկվել է ցեղասպանության կամ դրա սպառնալիքի տակ լքել է հայրենի օջախները: Եթե այս ամենից հետո որևէ մեկն ինչ-որ կերպ փորձում է ուղղակի կամ անուղղակի սպառնալիքների կամ այլ մեթոդներով ու միջոցներով օրինականորեն կայացած պետությունը ենթարկել մեկ այլ՝ անօրինականորեն կայացած Ադրբեջա-

նի Հանրապետությանը, ապա դա պետք է մեկնաբանել ոչ այլ կերպ, քան ցեղասպանության իրականացման թողտվության իրավունքի տրամադրում:

Փաստորեն, ԼՂԻՄ-ը ստեղծվեց ԽՍՀՄ ձևավորմանը զուգընթաց, և օրինաչափ է, որ նրա լուծարմանը զուգընթաց՝ այդ պետական կազմավորումը Խորհրդային Միության և Ժամանակի միջազգային նորմերին համահունչ դուրս եկավ ԽՍՀՄ բաղկացուցիչը կազմող Ադր. ԽՍՀ կազմից՝ ստեղծելով անկախ պետականություն: Ադր. ԽՍՀ-ն ևս ԽՍՀՄ ծնունդ էր, և նրա լուծարմանը զուգընթաց՝ այն ևս նոր իրավական ձևակերպման անհրաժեշտություն էր զգում: Սակայն ԱՀ տարածքային անհիմն հավակնությունները, մի կողմից, հանգեցրին նորաստեղծ ԼՂՀ-ի դեմ Բաքվի սանձազերծած լայնամասշտապ պատերազմական գործողություններին, մյուս կողմից՝ թույլ չտվեցին ԱՀ ղեկավարությանը՝ ընդունելու անկախ պետականություն ստեղծելուն ուղղված այնպիսի իրավաքաղաքական ակտեր, որոնք ամուր և օրինական կդարձնեին Ադրբեջանի Հանրապետության ձևավորման իրավական հիմքերը:

Այսպիսով, Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման փաստաթղթերի իրավաքաղաքական վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ նախկին Ադր. ԽՍՀ տարածքում ձևավորված երկու նորանկախ պետություններից ԼՂՀ-ն իր անկախությունը հռչակել, ձևավորվել և կայացել է օրինական ճանապարհով: 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին հռչակագիրը և ընտրելով անկախության ուղին՝ ԼՂՀ-ն առաջնորդվել է դեռևս գործող ԽՍՀՄ սահմանադրությամբ և օրենսդրությամբ հանրապետություններին տրվող լիազորություններով, իսկ ԽՍՀՄ լուծարումից հետո՝ միջազգային իրավունքի ճանաչված սկզբունքներով: Ի տարբերություն ԼՂՀ-ի, Ադրբեջանի Հանրապետությունը, 1991թ. օգոստոսին ընդունելով «Պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը և անկախության ուղի ընտրելով, կեղծել է հայտնի պատմական փաստերն ու իրողությունները, և խախտելով գործող ԽՍՀՄ սահմանադրությունն ու օրենքները, կասկածի տակ է դրել նորաստեղծ ԱՀ իրավական հիմքերն ու օրինականությունը: Բաքուն այդ ուղին շարունակել է նաև ԽՍՀՄ լուծարումից հետո, երբ խախտելով միջազգային իրավունքի հայտնի սկզբունքները՝ ԱՀ-ն բացահայտ ագրեսիա է ձեռնարկել նորանկախ ԼՂՀ-ի դեմ՝ ձգտելով գրավել այն տարածքները, որոնց նկատմամբ նրա իրավասությունները Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից

հրաժարումով և ԽՍՀՄ լուծարումով այլևս դադարել էին գործել: Հետևաբար, նախկին Ադր. ԽՍՀ տարածքում ձևավորված ԼՂՀ իրավական հիմքերն ու օրինականությունը միջազգային իրավունքի տեսակետից անթերի են, մինչդեռ ԱՀ կազմավորման հիմքում, ինչպես ցույց են տալիս հենց Բաքվի ընդունած իրավաբանական փաստաթղթերը, ընկած են հայտնի փաստերի խեղաթյուրումը, կեղծիքը, բռնություններն ու օրինականորեն կայացած պետության նկատմամբ ագրեսիան, որոնք նրան զրկում են օրինականությունից:

Հուլիս, 2014թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Свод законов СССР», т. 1, М., 1990.
2. *Мусаев Т.*, Правовые аспекты нагорно-карабахского конфликта, www.mfa.gov.az.
3. «Խորհրդային Ղարաբաղ», 24.03.1991:
4. *Թորայան Տ.*, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Եր., 2008:
5. «Бакинский рабочий», 3 сентября 1991.
6. “Жемчужины” так называемого Азербайджана, “Голос Армении”, 17 июля, 2010.
7. *Бабаян Д.*, Нагорно-карабахский конфликт в плоскости государственной и этнополитической безопасности, «Դեմո», 31 մայիսի, 2008:
8. *Պաշայան Ա.*, Նախկին սովետական հանրապետությունների ճանաչման, ինքնորոշման և սահմանների մասին, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, Եր. 2012:
9. Статус Нагорного Карабаха в политико-правовых документах, Ереван, 1995.
10. *Манасян А.*, Карабахский конфликт: международно признанные основания проблемы (папка основных и политических документов), Степанакерт, 2007.
11. *Փաշայան Հ.*, ԼՂՀ-ն որպես Արևելյան Անդրկովկասի հայության (ադրբեջանահայության) իրավունքների երաշխավոր (Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր), պրակ 1, Ստեփանակերտ, 2010, թիվ 1:
12. *Тодуа З.*, Экспансия исламистов на Кавказе и в Центральной Азии, М., 2006.
13. *Эллинек Г.*, Общее учение о государстве, СПб, 1908.
14. *Starovoitova G.*, Sovereignty after Empire. Self-Determination Movements in the Former Soviet Union. Institut of peace (USA), 1996.
15. Rights and Duties of States-Convention Signed at Montevideo, December 26, 1933, <http://www.mtholyoke.edu/acad/intrel/interwar/rights.htm> (Конвенция Монтевидео по правам и обязанностям государств, 49 Стат. 3097; Серия договоров 881; 165 Серия договоров ООН 19, декабрь 26, 1933).
16. Ագրեսիայի սահմանում: 1974թ. դեկտեմբերի 14-ին ՄՍԿ ԳՍ ընդունած բանաձև. № 2214 (XXIX):
17. <http://www.ejil.org/journal/Vol9/No3/090491.pdf>.
18. «Бакинский рабочий», 7 ноября 1991.
19. *Деникин А.*, Очерки русской смуты, М., 2003.

20. Ակտ 1991թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայացած ռեֆերենդումի մասին. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 332, թ. 10-11:
21. *Ступишин В.*, Моя миссия в Армении, М., 2001.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

Հրայր Փաշայան

Ամփոփագիր

Ադրբեջանական Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման փաստաթղթերի իրավաքաղաքական վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ նախկին Ադր. ԽՍՀ նորանկախ երկու պետություններից ԼՂՀ-ն հոչակել և ձևավորել է իր անկախությունը լեզիտիմ ճանապարհով: 1991թ. սեպտեմբերի 2-ին ընտրելով անկախության ճանապարհը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը սկզբում ղեկավարվում էր ԽՍՀՄ դեռևս գործող Սահմանադրության և օրենքների լիազորություններով, իսկ Խորհրդային Միության փլուզումից հետո՝ միջազգային իրավունքի ճանաչված սկզբունքներով:

Ի տարբերություն ԼՂՀ-ի՝ Ադրբեջանական Հանրապետությունը 1991թ. օգոստոսին ընդունեց «Պետական անկախության վերականգնման մասին» հոչակագիրը և սկսեց կեղծել հայտնի պատմական փաստերն ու իրողությունները և խախտելով ԽՍՀՄ գործող Սահմանադրությունն ու օրենքները՝ կասկածի տակ դրեց նոր ձևավորված ԱՀ իրավական հիմքերն ու լեզիտիմությունը: Բաքուն կեղծիքների ճանապարհը շարունակեց նաև Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ խախտելով միջազգային իրավունքի հայտնի սկզբունքները՝ բացահայտ ագրեսիա նախաձեռնեց ԼՂՀ-ի դեմ՝ փորձելով զավթել այն տարածքները, որոնց հանդեպ նրա լիազորությունները դադարել էին գործել Ադր. ԽՍՀ իրավահաջորդությունից և Խորհրդային Միության փլուզումից հրաժարվելու պատճառով:

ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ АРГУМЕНТЫ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Грайр Пашаян

Резюме

Политико-правовой анализ документов образования Азербайджанской Республики (АР) и Нагорно-Карабахской Республики (НКР) ясно показывает, что из двух новых независимых государств бывшей АзССР именно НКР объявила и оформила свою неза-

висимость легитимным путем. 2 сентября 1991г., избирая путь независимости, Нагорно-Карабахская Республика сначала руководствовалась полномочиями еще действующей Конституции и законами СССР, а после распада Советского Союза – принципами международного права.

В отличие от НКР, Азербайджанская Республика в августе 1991 года, принимая Декларацию «О восстановлении государственной независимости» и выбирая путь независимости, фальсифицировала известные исторические факты и реалии и, нарушая действующую Конституцию и законы СССР, поставила под сомнение правовые основы и легитимность новообразованного АР. Баку продолжал действовать таким образом и после распада Советского Союза, когда, нарушая известные принципы международного права, АР предприняла открытую агрессию против НКР, стремясь завоевать те территории, в отношении которых лишилась полномочий после отказа от роли правопреемника АзССР и распада Советского Союза.

POLITICAL AND LEGAL ARGUMENTS IN KARABAKH CONFLICT

Hrayr Pashayan

Resume

Political and legal analysis of the documents regarding the establishment of Azerbaijani Republic (AR) and Nagorno Karabakh Republic (NKR) clearly indicates that of the two independent states emerged in the place of the former Azerbaijani SSR, the NKR is the one that gained its independence legitimately. On September 2, 1991 the Nagorno Karabakh Republic's choice of independence was first based on powers granted by then-effective Constitution of the USSR and laws of the union's republics, and later, after the collapse of the Soviet Union, it followed the commonly accepted principles of international law.

Unlike NKR, when the Azerbaijani Republic adopted its Declaration on Re-establishing the State Independence, it falsified the known historical facts and realities, violated the Constitution of the USSR and thus casted doubts on the legal norms and legitimacy of the newly established AR. Baku continued pursuing these ways after the collapse of the Soviet Union, as well, when in violation of the known principles of international law it launched an open aggression against NKR, in relation to which its powers were rendered null and void after rejecting the legal succession of the Azerbaijani SSR and USSR.

ԿԻՊՐՈՍԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Աննա Կարապետյան՝

Քանալի բառեր՝ կարգավորման գործընթաց, Կիպրոսի խնդիր, ընդհանուր պետություն, դաշնային պետություն, դարաբաղյան հակամարտություն:

Երկու տարվա դադարից հետո կիպրոսցի հույների և կիպրոսցի թուրքերի միջև բանակցությունները 2014թ. սկզբին վերսկսվել էին, ինչը կարևոր քայլ էր թվում խնդրի վերջնական կարգավորման ճանապարհին: Գործընթացը, սակայն, կրկին փակուղի մտավ, բանակցությունները նոր թափ չստացան: Այս հակամարտության կարգավորման գործընթացի և յուրահատկությունների ուսումնասիրությունն արդիական է, քանի որ հաճախ փորձ է արվում գուգահեռներ անցկացնել կիպրական խնդրի և դարաբաղյան հիմնախնդրի միջև՝ գտնելով նմանություններ և փորձի կիրառման հնարավոր ուղիներ:

2014թ. փետրվարի 11-ին տեղի է ունեցել Կիպրոսի հունական և թուրքական հատվածների ղեկավարների առաջին հանդիպումը բանակցային գործընթացում երկու տարվա դադարից հետո: Հանդիպման արդյունքում ԵՄ անդամ Կիպրոսի Հանրապետության նախագահ Նիկոս Անաստասիադեսը և միայն Թուրքիայի կողմից ճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության նախագահ Դերվիշ Էրօղլուն հանդես են եկել համատեղ հայտարարությամբ: Նրանք ամրագրել են դաշնային միասնական հանրապետության ձևավորման մտադրությունը: Ըստ համատեղ փաստաթղթի, միասնական հանրապետությունը կմիավորի կղզու հունական և թուրքական հատվածները, որոնք հանդես կգան որպես իրավահավասար մասեր: Միջազգային հարաբերություններում Կիպրոսը հանդես կգա որպես միասնական իրավական սուբյեկտ, սակայն երկու հատվածների կառավարումը կիրականացվի առան-

¹ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ:

ձին-առանձին: Կարգավորումը հիմնված է լինելու երկհամայնք, քաղաքական հավասարություն ենթադրող երկհատված դաշնային կարգի վրա:

Հաստատվելու է Կիպրոսի միասնական քաղաքացիություն, միաժամանակ միասնական Կիպրոսի քաղաքացիները հանդիսանալու են հույն-կիպրական կամ թուրք-կիպրական բաղկացուցիչ պետության քաղաքացիներ: Դաշնային կառավարությունը գործելու է բաղկացուցիչ պետությունների կառավարություններին զուգահեռ, լիազորությունները սահմանվելու են սահմանադրությամբ: Արգելվում է միասնական պետության կամ դրա առանձին մասի միացումն այլ երկրի, ինչպես նաև այնպիսի միակողմանի որոշումների ընդունումը, որոնք նախատեսում են առանձնացում միասնական պետությունից:

Հայտարարությամբ ամրագրվում է, որ երկու համայնքների ղեկավարների կողմից պետք է քննարկվեն բոլոր հարցերը, արդյունքում՝ մշակված փաստաթուղթն առանձին-առանձին հանրաքվեի կներկայացվի կղզու երկու հատվածներում: Բանակցությունների հիմքում դրված է «ոչինչ համաձայնեցված չէ, քանի դեռ համաձայնեցված չէ ամեն ինչ» սկզբունքը: Կողմերը նաև պատրաստակամություն են հայտնել իրականացնել վստահության միջոցառումներ, որոնք դինամիկ առաջընթաց կապահովեն միասնական պետության ձևավորման գործում [1]:

Կիպրոսը բաժանվել է երկու հատվածի 1974թ., երբ հեղափոխությունից հետո իշխանության եկած ուժերը սկսեցին քայլեր ձեռնարկել կղզին Հունաստանին միացնելու ուղղությամբ: Արդյունքում՝ Թուրքիան գորքեր մտցրեց կղզու հյուսիս: Երկու հատվածների միջև ձևավորվեց բուֆերային գոտի, որը պաշտպանվում է ՄՄԿ-ի կողմից: Կղզու հյուսիսում 1983թ. հռչակվեց Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության անկախությունը [2, c. 77]: Այժմ այն ճանաչված է միայն Թուրքիայի կողմից: Ինչպես նշում են հույն հեղինակները, «իրենց քվեարկությամբ կիպրոսցի հույները ոչ թե մերժել են կիպրական խնդրի կարգավորումն ընդհանրապես, այլ հենց տվյալ առաջարկը, որը չէր բավարարում երկրի իրական վերամիավորումը և ժողովրդի վերին տեգրումը, պետական ինստիտուտների և տնտեսության վերականգնումը» [3, c. 35]: Բանակցությունները պարբերական ընդհատումներով շարունակվում են արդեն երկար տարիներ՝ չտալով զգալի արդյունքներ:

Կղզու միավորման ամենահայտնի փորձն իրականացվել է 2004թ., երբ երկու հաստվածներում քվեարկության է դրվել ՄԱԿ նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանի պլանը, որը նույնպես ենթադրում էր Կիպրոսի երկու հաստվածների միավորում երկհամայնք պետության ներքո, Թուրքիան թույլտվություն էր ստանում գորքերը պահել Հյուսիսային Կիպրոսում [4]: Կիպրոսցի թուրքերի մեծամասնությունը կողմ է քվեարկել առաջարկին, իսկ կիպրոսցի հույները՝ դեմ: Արդյունքում՝ Կիպրոսի Հանրապետությունը մտել է ԵՄ կազմի մեջ՝ որպես անկախ պետություն, իսկ հյուսիսային հաստվածը շարունակել է մնալ չճանաչված պետություն, որի նկատմամբ Կիպրոսի Հանրապետությունը վերահսկողություն չի իրականացնում:

Այսօր կղզու հյուսիսային հաստվածը մեծ մասամբ բնակեցված է կիպրոսցի թուրքերով, ինչպես նաև Թուրքիայից ներգաղթած թուրքերով: 1975թ. Վիեննայում կնքված համաձայնությամբ 140-160 հազ. կիպրոսցի հույներ հեռացել են Կիպրոսի հյուսիսից, 60 հազ. թուրք կիպրոսցիներ՝ հարավից [2, c. 79]: Արդյունքում՝ 2011թ. մարդահամարի տվյալներով՝ Կիպրոսի Հանրապետության բնակչությունը կազմում է 840 407 մարդ [5], իսկ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության բնակչությունը 2006թ. մարդահամարի տվյալներով կազմել է 265.100 մարդ [6] (2011թ. անցկացված մարդահամարը Հյուսիսային Կիպրոսում համարվել է անվավեր, սակայն նախնական տվյալներով՝ դրա բնակչությունը կազմել է 294.906 մարդ [7]): Եթե նշված մարդահամարների արդյունքները հիմք ընդունենք, ստացվում է հետևյալ պատկերը. կղզու ընդհանուր բնակչությունը կազմում է մոտավորապես 1 մլն 106 հազ. մարդ, որի 76%-ը կիպրոսցի հույներ են, իսկ 24%-ը՝ թուրքեր (համադրվում են 2006թ. և 2011թ. մարդահամարի տվյալները, բացի այդ՝ կղզում բնակվում են նաև փոքրաթիվ այլ ազգերի ներկայացուցիչներ, ուստի տոկոսային այս հարաբերակցությունը մոտավոր է): Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության տարածքում բնակվում են մոտավորապես 440 հույն կիպրոսցիներ՝ հիմնականում տարեց մարդիկ [3, c. 33]:

Նոր առաջարկը, ըստ էության, առնվազն այս փուլում քիչ է տարբերվում նախորդ փաթեթներից, այդ թվում նաև Անանի պլանից: Մակայն պետք է հաշվի առնել, որ նոր փուլի համաձայնեցված կետերը դեռևս միայն հայտարարության տեսք ունեն և ենթադրում են հետագա բանակցություններ և

արդյունքում՝ միասնական փաստաթղթի ստորագրում: Տարբերությունները հնարավոր է՝ լինեն առավել խորքային խնդիրներում, ինչպես, օրինակ, Թուրքիայի գորքերի առկայությունը կղզում, փախստականների վերադարձի և նրանց սեփականության հարցերը և այլն: Բացի այդ, որոշ փորձագետներ այս բանակցային փուլի և փաթեթի յուրահատկությունը տեսնում են նրանում, որ այն մշակում են անմիջականորեն կողմերի ներկայացուցիչները, այլ ոչ թե առաջարկում միջնորդները՝ որպես միասնական փաստաթուղթ [8]:

Բանակցային գործընթացը, չնայած տարվա սկզբին գրանցված էական առաջընթացին, զարգացում չի ստացել: «Մենք չկարողացանք միասին ճիշտ դասավորել այս կետերը և արդյունքում՝ այսօր կրկին փակուղի ենք մտել» [9], - հայտարարել է Կիպրոսի հարցով ՄԱԿ հատուկ խորհրդատու Էսպեն Բարթ Էիդը:

Չնայած դրան՝ բանակցային գործընթացից զատ կարևոր է դիտարկել նաև այն գործոնները, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել բանակցային այս փուլի մեկնարկի ու երկարատև դադարից հետո փաստաթղթի համաձայնեցման վրա: Այդ գործոնների թվում են ինչպես տնտեսական ճգնաժամի արդյունքներն ու չկարգավորված իրավիճակից բխող վնասները, բաց թողնվող հնարավորությունները, այնպես էլ կողմերին աջակցող այլ երկրների քաղաքական դրդապատճառներն ու տարածաշրջանային, գլոբալ զարգացումները:

Կիպրոսի հույների նախաձեռնողականությունն ու որոշ զիջումների պատրաստականությունը բացատրվում էին թե՛ երկրի ղեկավարի անձնական գործոնով, թե՛ տնտեսական խնդիրներով: Նիկոս Անաստասիադեսը, որը Կիպրոսի Հանրապետության նախագահ է ընտրվել 2013թ., դեռևս 2004-ից կղզու վերամիավորման ակտիվ ջատագով է եղել: Նախընտրական շրջանում նա չի թաքցրել կղզին միասնական տեսնելու իր ձգտումները [10]: Բացի այդ, հաշվի առնելով ԵՄ և մասնավորապես՝ Կիպրոսին մշտապես աջակցող Հունաստանի ծանր տնտեսական վիճակը՝ այսօր կղզին ունի տնտեսական լուրջ խնդիրներ: Ծովային շեֆում վերջերս հայտնաբերված գազի բավական մեծ պաշարը կարող է որոշակիորեն բարելավել վիճակը, եթե հաղթահարվեն հումքահանության և Եվրոպա արտահանման խնդիրները, ինչը զգալիորեն բարդանում է կղզու բաժանված լինելու պարագայում [11]: Կղզու հյուսիսային հատվածը նույնպես տուժում է չճանաչվածությունից և դրանից բխող տնտեսական շրջափակումից:

Պակաս կարևոր չեն Հունաստանի և Թուրքիայի դիրքորոշումները, որոնք մշտապես մեծ ազդեցություն են ունեցել կողմերի վրա: Ի դեպ, առաջին անգամ բանակցությունների ընթացքում բանակցողներին պաշտոնապես թույլատրվում էր առանձին-առանձին խորհրդակցություններ անցկացնել Աթենքի և Անկարայի հետ:

Թե՛ Թուրքիան, թե՛ Հունաստանը ողջունել են բանակցությունների վերսկսումն ու համաձայնության ձեռքբերումը:

Հունաստանը հայտարարել է, որ հնարավորության սահմաններում աջակցություն կցուցաբերի, երբ այս ծրագիրը քննարկվի ՄԱԿ ԱԽ-ում: Երկրի ԱԳ նախարար Էվանդելոս Վենիզելոսը փետրվարի 11-ին հայտարարել է. «Այս օրը Կիպրոսի համար հատուկ նշանակություն ունի, քանի որ ոչ միայն երկու համայնքների ղեկավարները, այլև ամբողջ միջազգային հանրությունն ընդունում է, որ կիպրոսցի ժողովրդի ձեռքբերում է իր ապագային առնչվող կարևոր հարցերի լուծումը, և որ որոշումները կկայացվեն անմիջականորեն հանրաքվեի ժամանակ առանց որևէ միջնորդների» [12]:

Այդ շրջանում Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն հանդիպման նախօրեին հայտարարել է, որ Կիպրոսի խնդիրը չի կարող հավերժ շարունակվել, և փակուղին այլընտրանք լինել չի կարող: «Կիպրոսի վերաբերյալ պետք է վերջնական որոշում կայացվի», - ասել է Դավութօղլուն [13]: Իսկ հանդիպումից հետո արված հայտարարությունում Թուրքիայի ԱԳՆ-ն նշել է, որ Թուրքիան կանի իրենից կախված ամեն բան, որ բանակցային գործընթացը բարեհաջող ավարտվի:

Կիպրոսի տնտեսական վիճակի բարելավումն ու կղզու նկատմամբ վերահսկողության վերականգնումը, որպես Կիպրոսի Հանրապետության դաշնակից, համահունչ է Հունաստանի շահերին: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա Կիպրոսի խնդիրը նրա՝ ԵՄ-ին անդամակցության գործընթացի հիմնական խոչընդոտներից մեկն է: Բացի այդ, թուրք-կիպրական համայնքը կանի հնարավորը Թուրքիայի ազդեցության լծակները կղզում պահպանելու համար, այդ պարագայում խնդրի կարգավորումը Թուրքիայի համար ազդեցության գոտի կստեղծի անմիջականորեն ԵՄ տարածքում: Պետք է նկատի ունենալ նաև «թուրքական ճոճանակի» էֆեկտը՝ քաղաքական մի շարք խնդիրներից մեկում կառուցողական կեցվածքի ներքո քայլերի կոշտացումն այլ հարցերում: Ուստի, կիպրական խնդրում Թուրքիայի կառուցողականությունը

կարող էր հիմք ստեղծել այլ հարցերում, օրինակ՝ նույն քրդական խնդրում առավել կոշտ լուծումների համար:

ԱՄՆ-ը ևս էապես շահագրգռված էր Կիպրոսի հարցի արագ լուծմամբ: ԱՄՆ-ը հետաքրքրված է Միջերկրականի այս հատվածում կայունության ապահովմամբ, որտեղ նրա երկու հիմնական դաշնակիցները՝ Իսրայելն ու Թուրքիան, կկարողանան ամրապնդել իրենց դիրքերը, և բացի այդ, լրացուցիչ հնարավորություններ կստեղծվեն էներգետիկ զարգացման համար: Պատահական չէ, որ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին ակտիվ ներգրավվածություն ունեցավ բանակցային այս փուլի վերսկսման հարցում [10]:

Այսպիսով՝ թե՛ խնդրի անմիջական կողմերի, թե՛ գործընթացում ներգրավված այլ երկրների ձգտումը՝ վերջնական լուծում տալ այս հարցին, բավական մեծ էր: Բացի այդ, համատեղ հայտարարությունն ու դրանով բանակցային հետագա գործընթացի հիմքերի ամրապնդումն ի սկզբանե որոշակիություն են մտցնում բանակցային գործընթացում: Սակայն պետք է հաշվի առնել, որ կողմերի անհամաձայնություններն ու սկզբունքային մոտեցումներն առանձին հարցերի վերաբերյալ քիչ չեն, բացի այդ, 2004թ. փորձը ևս վկայում է գործընթացի ոչ լրիվ կանխատեսելի լինելու մասին:

Հենց կողմերի անհամաձայնությունները, վստահության պակասն ու զիջումների բավական ցավալի լինելը կրկին հեռացրին արագ լուծումների հեռանկարը: Այսօր կրկին միջնորդներն ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները սկսել են խոսել այն մասին, որ երկարատև դադարը բանակցություններում սկսում է վնասել գործընթացին ու ապագայում կարող է հանգեցնել բացասական զարգացումների [9]:

Բացի կողմերի անհամաձայնություններից, գործընթացի տեմպի դանդաղեցման և այդ խնդրից ուշադրության շեղման հանգեցրին նաև գլոբալ քաղաքական այլ գործընթացները, մասնավորապես՝ ճգնաժամի խորացումը Սիրիայում, ուկրաինական ճգնաժամը և այլն: Այս գործընթացներում թե՛ ԵՄ-ը, թե՛ ԱՄՆ-ը, թե՛ Թուրքիան նոր դերակատարում և փոխադարձ պայմանավորվածություններ ձեռք բերեցին, ինչը կիպրական հարցի ակտուալությունն այսօրվա դրությամբ նվազեցրեց:

Անդրադառնանք նաև դարաբաղյան հակամարտության պարագայում գուգահեռների անցկացման և դրանց համար անհրաժեշտ պայմանների հարցին: Երկու գործընթացների միջև համեմատությունը հիմնականում կատար-

վում է բանակցային ձևաչափի հարցի առնչությամբ: Կիպրական օրինակով դիտարկվում են բանակցային ձևաչափի երկու հնարավոր մոդելներ՝ բանակցություններ Ղարաբաղի այսպես կոչված հայկական և ադրբեջանական համայնքների միջև կամ բանակցություններ Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև:

Առաջին դեպքում Կիպրոսի Հանրապետությունը նույնացվում է ԼՂՀ-ի հետ, իսկ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը՝ ԼՂՀ այսօրվա տարածքից հեռացած ադրբեջանցիների հետ (զարմանալի է, իհարկե, քայցնայնպես՝ տարածքը մարդկանց հետ): Տվյալ դեպքում պետք է հաշվի առնել, որ Կիպրոսի Հանրապետությունն արդեն երկար տարիներ միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ է, միջազգային կազմակերպությունների, այդ թվում ՄԱԿ, ԵՄ լիիրավ անդամ, ունի երկկողմ և բազմակողմ իրավապայմանագրային զարգացած դաշտ, որոնք երաշխավորում են իր գոյությունը որպես անկախ և սուվերեն պետություն: Ուստի, որոշակի զիջումները Հյուսիսային Կիպրոսին և լիազորությունների մասնակի բաշխումը՝ ընդհուպ մինչև հավասարություն, չեն սպառնում նրա գոյությանը որպես անկախ պետություն ոչ ներկայումս, ոչ առնվազն մոտ ապագայում: ԼՂՀ-ի դեպքում իրավիճակը լիովին այլ է, վերջինիս անկախությունը մինչ օրս ճանաչված չէ որևէ երկրի կողմից, և չկան այն հիմքերը, որոնք կապահովեն ԼՂՀ գոյությունն ու անվտանգությունը նման զիջման պարագայում: Ղարաբաղյան հակամարտության համար կիպրական օրինակի կիրառումն այս ասպեկտով ընդունելի և տրամաբանական կլինի առնվազն ԼՂՀ-ն Կիպրոսի Հանրապետության հետ կարգավիճակով հավասարեցնելու պարագայում միայն (այսինքն՝ ԼՂՀ ուղղակի և անվերապահ լիարժեք միջազգային ճանաչման):

Երկրորդ դեպքում Ադրբեջանը նույնականացվում է Կիպրոսի Հանրապետության, իսկ ԼՂՀ-ն՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության հետ: Այս դեպքում կարգավորման այս սցենարը բավական մոտ է 1998թ. առաջարկված «Ընդհանուր պետություն» կարգավորման փաթեթին, որը մերժվեց Ադրբեջանի կողմից, քանի որ վերջինս պատրաստ չէր բավական լայն լիազորություններ տալ Ղարաբաղին, ուր մնաց թե կառուցել դաշնային պետություն հավասարության սկզբունքով: Ուստի, այս մոտեցման պարագայում կիպրական օրինակը հեռու է կիրառական լինելուց Ղարաբաղյան հակամարտության դեպքում:

Այսպիսով, կիպրական օրինակի կիրառելիությունը դարաբաղյան համարարտության համար հնարավոր է ԼՂՀ միջազգային ճանաչման կամ «Ընդհանուր պետություն» փաթեթի, կամ նրա որևէ վերափոխված տարբերակի դիտարկմանը վերադառնալու պարագայում միայն:

Մարտ, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Joint Declaration: final version as agreed between the two leaders (<http://cyprus-mail.com/2014/02/11/joint-declaration-final-version-as-agreed-between-the-two-leaders/>)
2. *Натали Точки, Тамара Ковзиридзе*, Кипр. Европеизация и разрешение конфликтов: конкретные исследования европейской периферии, *Весь мир*, 2005. 312-77.
3. *Софоклис Софокли*, Кипрская проблема - самая застарелая и нерешенная в Европе, *Международная жизнь*, ISSN 0130-9625, 2014, №12 1-192.
4. THE COMPREHENSIVE SETTLEMENT OF THE CYPRUS PROBLEM, 31 MARCH 2004 (<http://www.zypern.cc/extras/annan-plan-for-cyprus-2004.pdf>)
5. Census of Population 2011, 06/11/13 (http://www.cystat.gov.cy/mof/cystat/statistics.nsf/populationcondition_22main_en/populationcondition_22main_en?OpenForm&sub=2&sel=2)
6. TRNC GENERAL POPULATION AND HOUSING UNIT CENSUS 2006 (<http://nufussayimi.devplan.org/Census%202006.pdf>)
7. North Cyprus News | Census results (<http://northcyprusfreepress.com/2011/12/11/north-cyprus-news-census-results>), 25.02.2014.
8. *Mustafa Aydin*, Fingers crossed for Cyprus (<http://www.hurriyetdailynews.com/fingers-crossed-for-cyprus.aspx?pageID=449&nID=62396&NewsCatID=468>) 24.02.2014.
9. Cyprus: UN envoy concerned about 'impasse' in negotiations (<http://www.un.org/apps/news/story.asp?NewsID=49795#.VL4MOtKsWOA>), 14.01.2015.
10. *Stefanos Evripidou*, Substance and symbolism of Joint Declaration (<http://cyprus-mail.com/2014/02/16/substance-and-symbolism-of-joint-declaration/>), 24.02.2014.
11. Стартовали переговоры о воссоединении Кипра (<http://evrofor.ru/politics/4241-startoval-peregovory-o-vossoedinenii-kipra.html>), 12.02.2014.
12. Греция считает важным проведение референдумов по кипрскому вопросу, <http://ria.ru/world/20140211/994373927.html>, 11.02.2014.
13. Foreign Minister Davutoğlu: Turkey hopeful for 'last chance' on Cyprus (<http://www.hurriyetdailynews.com/foreign-minister-davutoglu-turkey-hopeful-for-last-chance-on-cyprus.aspx?pageID=238&nID=62228&NewsCatID=338>), 10.02.2014.

ԿԻՊՐՈՍԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՅԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Աննա Կարապետյան

Ամփոփագիր

Կիպրոսի խնդրի կարգավորման գործընթացում 2014թ. փետրվարին բանակցային նոր փուլ է սկսվել, հաջողվել է համաձայնեցնել կարգավորման նախնական սկզբունքները: Հողվածում ուսումնասիրվում են Կիպրոսի հիմնախնդրի էությունն ու բանակցային գործընթացի զարգացման դինամիկան, այս փուլի առանձնահատկությունները: Դիտարկվում են կողմերի, ինչպես նաև շահագրգիռ երկրների շահերը: Վերլուծության են ենթարկվում դարաբաղյան հակամարտության կարգավորման համար կիպրական օրինակի կիրառելիությունը, դրա համար անհրաժեշտ պայմանները:

КИПРСКАЯ ПРОБЛЕМА И НАГОРНО-КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ

Анна Карапетян

Резюме

В феврале 2014г. начался новый этап в переговорном процессе по урегулированию кипрского вопроса, удалось согласовать принципы урегулирования. В статье рассматриваются сущность и особенность Кипрской проблемы, динамика переговорного процесса, новый этап переговоров. Также в статье подвергаются анализу интересы и мотивы сторон конфликта и заинтересованных стран. Автором рассматривается приемлемость примера Кипрского урегулирования для процесса урегулирования Нагорно-Карабахского конфликта.

CYPRUS DISPUTE AND KARABAKH CONFLICT

Anna Karapetyan

Resume

In February 2014 a new round of negotiations started for the settlement of the Cyprus dispute. The sides have succeeded to come to an agreement upon the initial principles. The article studies the essence of the Cyprus problem, the development dynamic of the negotiation process and the peculiarities at the current stage. The interests of the conflicting parties, as well as those of the stakeholder countries are reviewed. The applicability of the example of Cyprus for the settlement of the Nagorno-Karabakh conflict is also analyzed.

**ԷԿՐԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Վարդան Աթոյան՝ Արփինե Մալքոյան՝, Սոֆյա Օհանյան՝

Բանալի բառեր՝ տեղեկատվական հասարակություն, տեղեկատվական մշակույթ, էկրանային մշակույթ, ցանցային մշակույթ, սոցիոմշակութային միջավայր, զանգվածային հաղորդակցություն:

XX դարի վերջին երեք տասնամյակում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում տեղի ունեցած հեղափոխությունը հիմք հանդիսացավ հետարդյունաբերական «տեղեկատվական դարաշրջանի» մոդելի ձևավորման և հաստատման համար: Տեխնոլոգիական հեղափոխական փոփոխություններն անդրադարձան նաև հասարակության տնտեսական ու սոցիալական կառույցների վրա. խիստ աստիճանակարգային բնույթ ունեցող սոցիալական հաստատություններին փոխարինեցին ճկուն հորիզոնական «ցանցերը», և, ինչպես պնդում է տեղեկատվական հասարակության գաղափարախոսներից մեկը՝ իսպանացի սոցիոլոգ Մանուել Կաստելսը, միջազգային գործնական և մշակութային ցանցերի ձևավորումը և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը դարձան փոխկապակցված երևույթներ [1]: Այժմ տեղեկատվական տարածությունը և գլոբալ ցանցերն ամենուրեք են՝ սկսած խոշոր պետությունների տնտեսությունից մինչև մարդկանց առօրյա:

Ի տարբերություն նախորդ դարաշրջանների՝ ժամանակակից քաղաքակրթության պայմաններում նոր տեխնոլոգիաների շնորհիվ տեղեկատվության մշակումն ու փոխանցումը վերածվում են անմիջական արտադրողա-

¹ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու:

² ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի հայցորդ:

³ ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու:

կան ուժի: Ժամանակակից աշխարհում բարձրտեխնոլոգիական արտադրության պայմաններում տնտեսական, քաղաքական, հասարակական և մշակութային գործունեության հիմնական տեսակները կառուցվում են համացանցի և համակարգչային ցանցերի միջոցով, իսկ հասարակության կենսագործունեությունն անմիջականորեն պայմանավորվում է տեղեկատվության զարգացման օրինաչափություններով:

Մարդկության ամբողջ պատմության ընթացքում տեղեկատվական հեղափոխությունները խթանում էին սոցիալական զարգացումը: Երբ հայտնվեց հողաբաշխ խոսքը և առաջացավ բանավոր շփումը, տեղի ունեցավ տեղեկատվական *առաջին* հեղափոխությունը: Բանավոր հաղորդակցումը կամ «առաջնային հաղորդակցումն» ունեցավ աննախադեպ նշանակություն՝ թույլ տալով գալիք սերունդներին փոխանցել կուտակված փորձը, զարգացնել մտածողությունը, կառուցել աշխարհի ճանաչողության, բնության յուրացման տրամաբանական մոդելներ: Արժեքավոր տեղեկատվության առավել արդյունավետ պահպանման ու փոխանցման պահանջմունքը հանգեցրեց տեղեկատվական *երկրորդ* հեղափոխությանը՝ գրի առաջացմանը, ինչն արագացրեց տեխնիկական առաջընթացը, սոցիալական զարգացումը. գրի գյուտը դարձավ հոգևոր հեղափոխություն մշակույթի պատմության մեջ: Տեղեկատվական *երրորդ* հեղափոխությանն է վերաբերում «Գուտենբերգի դարաշրջանը», երբ ստեղծվեց տպագրական մեքենան, ինչը, ըստ կանադացի փիլիսոփա Մարշալ Մաքլուենի, ծնեց մշակույթի նոր տեսակ՝ «տեսողության մշակույթը»: Տպագիր խոսքը՝ որպես զանգվածային հաղորդակցման միջոց, մի կողմից, ստեղծեց մարդուն անհրաժեշտ տեղեկատվության ընտրության նախադեպ, թույլ տվեց այն մեկնաբանել, մյուս կողմից՝ շրջապատող աշխարհի ճանաչողության առումով էապես ազդեց անհատի մտածողության վրա: «Էլեկտրոնային դարաշրջանի» փուլը, որը սկսվեց XIX դարի կեսերին և զարգացում ապրեց մինչև XX դարի կեսերը, նույնացվում է տեղեկատվական *չորրորդ* հեղափոխությանը, որն աշխարհը դարձրեց փոխկապակցված, փոխկախված՝ վերածելով այն «գլոբալ գյուղի»: Բայց այդ դարաշրջանում տիրապետող զանգվածային հաղորդակցության միջոցները ոչ միայն տեղեկատվության փոխանցման միջոցներ էին, այլև, ինչպես նշում է Մ. Մաքլուենը, «մարդու արտաքին ընդարձակման» [2] միջոցներ էին, որոնք կապում էին սոցիալական տարբեր խմբերի՝ միավորելով հասարակությունը որոշակի ամբողջու-

թյան մեջ: Մարդու, անհատական ու հասարակական գիտակցության արտաքին ընդարձակմանն է ուղղված ներկայումս տեղի ունեցող տեղեկատվական *հինգերորդ* հեղափոխությունը, որին բնորոշ է զանգվածային հաղորդակցության միջոցների անցումը թվային մուլտիմեդիական միջավայր¹:

Տեղեկատվական հասարակությունը՝ որպես տեխնոսոցիումալություն համակարգ, ձևավորում է իր գործունեությանը բնորոշ *տեղեկատվական մշակույթ*, որը տեղեկատվության ստացման, պահպանման, օգտագործման և փոխանցման բնագավառներում մարդու կենսագործունեության որակական բնութագիրն է: Այն անհրաժեշտ է դիտարկել, մի դեպքում, որպես *տեխնոլոգիական*, իսկ մյուս դեպքում՝ որպես *սոցիումալական* երևույթ: Տեղեկատվական-տեխնոլոգիական իմաստով տեղեկատվական մշակույթը որոշակի տվյալներից, խորհրդանիշներից ու տեղեկություններից օգտվելու եղանակն է կամ տեղեկատվությունից օգտվելու գիտելիքը: Սոցիումալական առումով տեղեկատվական մշակույթը տարբեր մշակույթների փոխազդեցությունն ապահովող մեխանիզմների ամբողջությունն է [3, c. 121]:

XX դարի երկրորդ կեսից համաշխարհայնացման գործընթացների հետևանքով նյութական և հոգևոր մշակույթի շատ տարբեր զրկվեցին ազգային առանձնահատկություններից, ձևավորվեց վերազգային համաշխարհային սոցիումալական տարածությունը, զանգվածային մշակույթը ձեռք բերեց նոր բաղադրատարրեր: Նշված հանգամանքները փոխեցին նախորդ դարաշրջաններում ձևավորված աշխարհի կազմակերպման օրենքների կարգը: Ծագումով իտալացի փիլիսոփա և աստվածաբան Ռոմանո Գվարդինին (Գերմանիա) նշում է, որ այդ նոր աշխարհում իրադարձությունները կորցնում են իրենց կարևորությունը: Չանգվածի մարդու համար համարժեք նշանակություն կարող են ունենալ այնպիսի տարիմաստ երկու իրադարձություններ, ինչպիսիք են, օրինակ, հագուստ գնելն ու խորհրդարանական ընտրությունները: Ծնորհիվ տեղեկատվության կտրուկ աճի՝ մշակույթը դառնում է խճանկարային, որտեղ, որպես կանոն, բացակայում է պատճառահետևանքային կապերի հստակությունը [4, c. 137]: «Գրքի մշակույթը» փոխակերպվում է «Էկրանի մշակույթի», ինչի հետևանքով այն ավելի շատ ազդում է հույզերի, քան բանականության վրա:

¹ Մանրամասն տե՛ս *Негодаев И.*, Информационные революции в истории общества// http://elibrary.lt/resursai/Uzsienio%20leidiniai/DGTU/2006-02/dgtu0602_08.pdf

Էկրանային մշակույթը լիովին դրսևորվում է տեղեկատվական հասարակության կայացման գործընթացում՝ համալրվելով տեխնիկական նոր միջոցներով և դառնալով արդիականության առանցքային մշակութաստեղծ երևույթը:

Առաջինը, ինչն աչքի է զարնում, երբ դիմում են էկրանային մշակույթի ուսումնասիրությանը, նրա սերտ կապն է գիտատեխնիկական առաջընթացի հետ, որը ստեղծել է տեխնիկական էկրանային հզոր արտեֆակտեր: Էկրանային մշակույթը մարդկային գործունեության արդյունքն է և հայացքների, արժեքների ու գիտելիքների համակարգ, որոնք տարածվում են հասարակության մեջ էկրանային տեխնիկական միջոցների՝ կինոյի, հեռուստատեսության, համակարգչի, համացանցի, բջջային կապի միջոցով, որն իր բուն զարգացումն է ստանում հասարակության տեղեկատվայնացման պայմաններում: Այդ մշակույթը հիմնված է էկրանային պատկերների համակարգի վրա, որոնք նմանակում են գործող անձանց գործողությունները և բանավոր խոսքը, որտեղ տեքստերի նյութական կրողն էկրանն է՝ «դարաշրջանի սրբապատկերը»:

Տեխնիկական արտեֆակտերի կատարելագործմանը զուգահեռ՝ էկրանը կինոյի սպիտակ կտավից վերաճեց էլեկտրոնային հեռուստատեսային խցիկի, դրանից էլ՝ համակարգչի դիսփլեյի: Այդ էվոյուցիայի ընթացքում աստիճանաբար, իսկ այսօր ավելի ու ավելի արագ է ջնջվում տարբերությունն իրական իրերի աշխարհի ու նշանների աշխարհի միջև: Մեր օրերում դա հանգեցրել է իրականության հատուկ տեսակի՝ վիրտուալ իրականությանը կամ կիրեռիականությանը՝ համակարգչային էֆեկտներով ստեղծված աշխարհին: Այսպիսով, էկրանային մշակույթի բաղադրիչներն են կինոնկարային մշակույթը, հեռուստատեսային մշակույթը, համակարգչային մշակույթը: Իսկ կիրեռտարածության՝ համակարգչային հեռահաղորդակցման համակարգերի և նրանցում շրջանառվող տարաբնույթ տեղեկատվական հոսքերի ամբողջության առաջացմամբ ծագել է ցանցային մշակույթը:

Էկրանային մշակույթի նշված բաղադրիչները փոխել են ոչ միայն մասնագիտական գործունեության բնույթն ու բովանդակությունը, այլև կենցաղն ու ապրելակերպը՝ ակտիվորեն մասնակցելով ժամանակակից մարդու արժեքային կողմնորոշումների և սոցիոմշակութային պատկերացումների ձևավորման գործընթացին:

Հարկ է նշել, որ զանգվածային հաղորդակցության այդ միջոցներն ընդամենը տեղեկությունների տարածման միջոցներ են, և տեխնիկայի թողած դրական կամ բացասական ազդեցությունը կախված է նրանից, թե հասարակությունն ու մարդիկ ինչպես են այն օգտագործում, ինչ նպատակների են ծառայեցնում, ինչպես են օգտագործում զանգվածային հաղորդակցության միջոցների, հատկապես *հեռուստացույցի* և *համացանցի* առանձնահատկությունները:

Հեռուստատեսությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- կցկտորությունը, խճանկարայնությունը,
- ինտերտեքստուալությունը¹,
- բազմակարծիքայնությունը:

Շնորհիվ այն բանի, որ բազմազան հեռուստաալիքների միջոցով մարդը հայտնվում է իր ճաշակին ու տրամադրությանը համապատասխանող «հեռուստաաշխարհում», նրա աշխարհընկալումն աստիճանաբար դառնում է հատվածային: Այդ պատճառով իտալացի փիլիսոփա Ռոմբերտո Էկոն նշում է, որ հեռուստատեսությունը դարձել է ինքնատիպ թակարդ, որից ազատվելու և աշխարհն իր լրիվության մեջ տեսնելու հնարավորություններն ավելի ու ավելի են նվազում [5, c. 134]: Հեռուստատեսության հատվածականությունը դրսևորվում է նաև իրականության սերիական վերարտադրության ձևով: Պարբերաբար կրկնվող թեմատիկ հաղորդումները (լուրեր, երաժշտական շոուներ, քաղաքական մեկնաբանություններ և այլն) նախապես որոշում են մարդկանց կյանքի ռեժիմը: Ըստ նախասիրությունների ու հետաքրքրությունների կապվելով պարբերական հաղորդաշարերին՝ մարդիկ աստիճանաբար ձևավորում են սոցիալական վիրտուալ հանրույթներ, որոնք որոշ մտածողներ անվանում են «սերիական մշակույթի» հետևանքով ձևավորված «կեղծ սոցիալականություն»:

Հեռուստամշակույթը տեղեկատվությունը հաղորդելիս օգտվում է ոչ այնքան բառերից, որքան պատկերներից՝ դրանով ձեռք բերելով առանձնահատուկ ինտերտեքստուալություն: Եթե տպագրության հայտնագործումից ի

¹ «Ինտերտեքստուալություն» եզրը 1967թ. ներմուծել է հետստրուկտուրալիզմի տեսաբան Յուլիա Կրիստևան՝ նշանակելու համար տեքստերի ընդհանուր հատկությունը, որն ամրագրում է նրանց միջև կապերի առկայությունը, որոնց շնորհիվ տեքստերը (կամ դրանց մասերը) կարող են բազմազան միջոցներով ուղղակիորեն կամ անուղղակիորեն հղում անել միմյանց:

վեր տիրապետող էր գծային մտածողությունը, ապա հեռուստամշակույթում այն դառնում է իճանկարային:

Ի տարբերություն իճանկարայնության ու ինտերտեքստուալության, որոնք հեռուստատեսության կողմից ստեղծված ու մատուցվող իրականության պարտադիր հատկանիշներն են, բազմակարծիքայնությունը պայմանավորված է տվյալ հասարակարգի գաղափարական ուղղվածությամբ:

Այս առնչությամբ մեծ է հատկապես համակարգչի, մասնավորապես համացանցի դերը: Անկասկած, մեզ տեղեկատվություն մատակարարելով, մեզ տալով այն արդիականացնելու, իրական ժամանակի ռեժիմով տեղեկատվություն ստանալու, այն արագ մշակելու հնարավորություն՝ համակարգիչն այս հանգամանքների շնորհիվ դառնում է մարդու գործունեության անփոխարինելի օգնականը: Շատերն այժմ չեն կարող պատկերացնել իրենց գիտական, տնտեսական, ֆինանսական և այլ գործունեությունն առանց հուսալի օգնականի: Բայց չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ համակարգիչն, իր հերթին, էական ազդեցություն է գործում մարդու, նրա շփման, մտածողության, լեզվի վրա:

Նշենք, որ համակարգիչը մարդու՝ արհեստականորեն ստեղծած տեխնիկական միջոցն է այն խնդիրների լուծման համար, որոնք ծագում են մարդկանց կենսագործունեության ընթացքում: Այդ պատճառով նա պետք է ենթարկվի մարդուն: Այդ հանգամանքը նշելով՝ Էրիխ Ֆրոմը ձևակերպում է մարդու և համակարգչի փոխհարաբերության հիմնական իմաստը. «Մարդը, այլ ոչ թե տեխնիկական սարքը պետք է դառնա հիմնական արժեք, մարդու օպտիմալ զարգացումը, այլ ոչ թե աշխատանքի առավելագույն արտադրողականությունը» [6, c. 153]:

Աշխատանքը համակարգչով, «շփումը» նրա հետ փոխում են մարդկանց միջանձնային շփման բնույթը, որոշում այդ շփման միանգամայն նոր գծերը: Լինելով բազմագործոն գործընթաց՝ շփումը կատարում է տարբեր գործառույթներ. հաղորդակցային (տեղեկատվության փոխանակում), ինտերակտիվ (գործընկերների փոխազդեցություն) և պերցեպտիվ (գործընկերների՝ միմյանց ընկալում և ճանաչում): Երբեմն առանձնացնում են հաղորդակցման տեղեկատվական ձևը, որը ենթադրում է հաղորդագրության փոխանցում միակողմանի, մենախոսական կարգով և հաղորդակցման գործընթացային

ձևի, այսինքն՝ հաղորդակցման՝ որպես շփման գործընթացի, իմաստավորում: Դա նշանակում է սուբյեկտների մասնակցություն, համատեղ գործունեություն և նրանց որոշակի կազմակերպվածություն: «Այդպիսի հաղորդակցումը, - գրում է ռուս գիտնական Ի. Ֆարմանը, - ունի երկկոսության ձև ու հաշվարկված է փոխըմբռնման համար» [7, 286]:

Շփումն էկրանային մշակույթի ոլորտում միջնորդավորված է տեխնիկական միջոցներով: Իսկ շփման միջնորդավորվածությունը հանգեցնում է նրա մարդկային ձևերի աղքատացմանը, առաջանում է սուբյեկտների օտարում միմյանցից, աճում է միջանձնային կապերի դեֆիցիտը:

Օտարումն, ըստ էության, սոցիալական գործընթաց է, որը բնութագրվում է մարդու գործունեության՝ հարաբերականորեն ինքնուրույն ուժի վերածմամբ, որը տիրում ու ճնշում է նրան: Մարդը կտրվում է իրականության շատ բաղադրիչներից: Համակարգիչը կարող է մարդուն հաղորդակից անել մշակութային մեծ արժեքներին և դրանով իսկ նպաստել նրա մտավոր զարգացմանը: Բայց այն կարող է վերածել մարդուն պարզունակ խաղային ծրագրերի սովորական սպառողի: Վերջին դեպքում տեղի է ունենում մարդու օտարում իսկական մշակույթից և արգասաբեր մտավոր գործունեությունից: Ընդ որում՝ անհատին մատչելի են դառնում համաշխարհային ամբողջ հանրության գործերն ու հետաքրքրությունները, և միաժամանակ նա գտնվում է սոցիալական մեկուսացման մեջ: Նա կարող է իմանալ, թե ինչ է կատարվում Իտալիայում կամ Նիգերիայում և չիմանալ աստիճանահարթակի իր հարևաններին: «Մարդու կապերը դառնում են սպորադիկ. նրանք, մի կողմից, միավորում են բոլոր անհատներին մի մարդկության մեջ, իսկ մյուս կողմից՝ մեկուսացնում, ավտոմատացնում են մարդկանց» [8, c. 31]:

Էկրանային տեխնիկական միջոցների կատարելագործումը, մի կողմից, մեծացնում է անձի՝ այս կամ այն մշակութային արժեքների ընտրության ազատությունը, մյուս կողմից՝ ասես նեղացնում է միջանձնային մարդկային շփումների ոլորտը: Կինոթատրոնում կինոնկար դիտելիս տեղի է ունենում հանդիսատեսների միջև շփում հանդիսասրահի մասշտաբով: Հեռուստատեսությունը նեղացնում է շփման ոլորտը, որպես կանոն, մինչև ընտանեկան խմբի չափերը: Իսկ համակարգիչն օգտատիրոջը մենակ է թողնում, որի ընթացքում անհատը կարող է փոխել մատուցվող տեղեկատվության ձևն ու

բովանդակությունն իր ճաշակին ու ցանկություններին համապատասխան (Էկրանային մշակույթի բաղադրիչների համեմատական առանձնահատկությունները ներկայացված են աղյուսակում).

ԷԿՐԱՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԷԿՐԱՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ	ԿԻՆՈ	ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ	ՀԱՄԱԿԱՐԳԻՉ
Օգտատերերի ընդգրկումը	Մակրոխումբ	Միկրոխումբ	Անհատ
Ազատության աստիճանը	Սահմանա- փակված է ցուցադրման տեխնիկայով և բաց է ժամանակի մեջ	Հաղորդագրության ժամանակը մոտեցնում է իրադարձության ժամանակին	Գլոբալ ցանցի սահմաններում է
Շփման ինտերակտիվության աստիճանը	Բացակայում է	Սահմանափակ է	Գլոբալ է

Մակայն նույնիսկ ինտերակտիվ շփումը՝ շփում է տեխնիկական միջոցի օգնությամբ, և այն չի կարող փոխարինել անմիջական անձնային շփմանը, որի կարիքը մարդիկ միշտ կունենան: Կարելի է նույնիսկ ենթադրել, որ համակարգչային շփումը, ի վերջո, մարդկանց կստիպի գիտակցել անմիջական շփման ողջ հարստությունը: «Ես համոզված եմ,- ընդգծում է ամերիկացի գործարար, գրող, հասարակական գործիչ Էսթեր Դայսոնն իր «Կյանքը համացանցի դարաշրջանում» աշխատության մեջ,- որ արհեստական խթանման այն ողջ փայլը, որը մեզ առաջարկում է էլեկտրոնային աշխարհը, ի վերջո մարդկանց կստիպի ավելի շատ գնահատել մարդկային միջավայրն ու ուշադրությունը» [3, c. 232]: Բնականաբար, դա չի նշանակում, թե մենք դեն կնետենք մեր համակարգիչներն ու կսկսենք գնահատել միայն մարդկային դեմադրեմ կապերն ավելի բարձր, քան փոխազդեցությունը համակարգիչների հետ: Չի կարելի հակադրել միասնության մեջ գոյություն ունեցող մարդկանց շփման փոխլրացնող ու փոխհարստացնող տարբեր ձևերը:

Այստեղ կարևորն այն է, որ տեղեկատվական տեխնիկական միջոցներն իրականացնում են մշակութային արժեքների գրեթե ակնթարթային փոխանցում՝ ասես սեղմելով տարածությունը և արագացնելով ժամանակը: Տեղեկատվությունը փոխանցվում է իրական ժամանակի ռեժիմով՝ օգտատիրոջը հաղորդակից դարձնելով պատմության այն հոսքին, որն ընթանում է հենց այժմ: Սերգեյ Կարա-Մուրզան, ուսումնասիրելով տեղեկատվական տեխնիկական միջոցների ազդեցությամբ մարդկանց գիտակցության փոփոխության հիմնախնդիրը, նշում է, որ «ներշնչման այն անոմալ ուժը, որով օժտված է հեռուստատեսությունը, կկարողանա ախտանշան ծառայել ավելի հիմնարար հիմնախնդրի բացահայտման համար. գիտակցության ու մտածողության տեսակի փոփոխություն, երբ մարդկությունն անցում է կատարում տեղեկատվության ստացման նոր միջոցի՝ ոչ թե թղթից, այլ էկրանից» [9, c. 282]:

Համակարգչով, հեռուստատեսությամբ, ռադիոյով, հեռախոսով տեղեկատվության սպառումն ավելի ու ավելի է արտամղում ժամանցի, ստեղծագործության, ճանաչողության ակտիվ ձևերը, ձևավորում է մտածողության «կոշտություն», որը մարդկանց զրկում է միմյանց հետ անմիջական շփումից: Անձնական տարածության սեղմումը, կենդանի բնությունից օտարումն առաջացնում են աշխարհի պատկերի պարզեցման ակամա ձգտում, որոշումների ընդունման, պատասխանատվության վախեր:

Այդպիսի մտածողությունը հաճախ տրվում է համակարգչային խիստ ծրագրով, ենթարկվում է ձևական տրամաբանության կանոններին, դառնում է միանշանակ՝ ասես կորցնելով դիալեկտիկական ճկունությունը: Այն կտրվում է սուբյեկտից, զրկում նրան հուզական զգացմունքներից, ինտուիցիայից: Բնագիտական մոտեցումը փոխարինվում է արհեստական-տեխնիկական, տեղեկատվական մոտեցմամբ. «Համակարգչային-տեղեկատվական իրականության մեջ անհատի գիտակցությունն արտամղվում է մեքենայի կողմից» [10, c. 65]: Մարդու գիտակցությունն ասես գործառում է երկու աշխարհների՝ բնական-իրական, կենդանի աշխարհի և տեխնիկական, արհեստական աշխարհի միջև: Մարդու ուշադրության դաշտում հայտնվում են ոչ թե նրա համար սովորական իրային-էներգետիկ բնութագրերը, այլ տեղեկատվությունը՝ տրված խորհրդանշանների ձևով, որոնք, գերմանացի փիլիսոփա Մամյուել Լանգեի արտահայտությամբ, ներկայացնում են ոչ թե օբյեկտներ, այլ հանդիսանում են օբյեկտների մասին որոշակի հայեցակարգի

կրողներ և «մտքի գործիքներ» են: Մարդը շփվում է մեքենայի հետ արհեստական լեզվով: Մարդն իրեն խորհրդանշանայնացնում է տեղեկատվական տեխնոլոգիայի մեջ: Դա կարող է հանգեցնել անհատականության կորստին և անձի ընդհանուր մշակութային մակարդակի նվազմանը:

Այդպիսի մտածողությունը և նրա արդյունքը՝ գիտելիքը, կարելի է անվանել «ապանձնայնացված», քանի որ անձնային գիտելիքը մտավոր ինքնանվիրում է: Տեղեկատվական-տեխնիկական գիտելիքն օժտված է ստույգության մի ճշգրտությամբ՝ ի վնաս հուզականության ու դիալեկտիկական ճկունության: Հասարակության մեջ ձևավորվում է տեխնոկրատական մտածողություն: Մարդկանց բարոյականության ու վարքի մեջ, մշակութային պահանջներում առաջին պլան է դուրս գալիս գործնական օգուտի, նպատակահարմարության չափանիշը: Մարդը դառնում է ավելի ու ավելի օգտապաշտ, հաշվենկատ՝ ի վնաս աշխարհի հուզական ընկալման:

Բնական է, որ մարդկանց մտածողության փոփոխությունն ազդում է նրանց վարքի, պահանջմունքների ու դրանց բավարարման միջոցների, անհատների ողջ կենսակերպի և ամբողջ հասարակության վրա: Այդ հանգամանքը սոցիալապես նշանակալի է դարձնում համակարգչային տեխնոլոգիայի ազդեցությամբ մարդկանց գիտակցության սրբագրման ուսումնասիրությունները:

Այսօր կարելի է խոսել մտածողության փոփոխված տեսակի՝ որպես հասարակության համակարգչայնացման գործընթացի արտացոլման արդյունքի մասին: Այն հանգամանքը, որ մենք ՋԼՄ համակարգի միջոցով ստանում ենք կցկտուր ու պատահական տեղեկությունների հոսք և այդ պատճառով հաճախ մնում երևույթների մակերևույթին՝ առանց դրանց քննադատական ընկալման ու խոր իմաստավորման, ֆրանսիացի գիտնական Աբրահամ Մոլին հիմք է տալիս մեր մշակույթն անվանել «խճանկարային» («մոզաիկ»): Մշակույթի առանձին տարրերը կառուցվածք չեն կազմում՝ օժտված լինելով միայն կցման ուժով: Մոլը գրում է, որ «մեր ժամանակներում գիտելիքները ձևավորվում են հիմնականում ոչ թե կրթության, այլ զանգվածային հաղորդակցման միջոցների ազդեցությամբ» [8, c. 45-46]:

Դրա հետ մեկտեղ տեղեկատվական հզոր միջոցներով սպառազինված ժամանակակից համակարգչային մշակույթը նաև դրական ներգործություն է ունենում մարդկանց մտածողության վրա: Այսպես, նրա ազդեցությամբ ժամանակակից մտածողության համար բնորոշ են դառնում այնպիսի հատկու-

թյուններ, ինչպես իրականության պատկերավոր ու տրամաբանական արտացոլման միահյուսումը, որը մատուցվում է պատկերների ձևով, որը տրամաբանականի ընկալումը դարձնում է ավելի հեշտ և մատչելի: Դրանով իսկ իրականացվում է էկրանային մշակույթի իմացաբանական ֆունկցիան, որը հանդես է գալիս բազմազան, միմյանց փոխլրացնող ճանաչողական ձևերով:

Թեև համակարգչային մշակույթում գերակշռում է աշխարհի պատկերային ըմբռնումը, այն կապված է տրամաբանական մտածողության՝ գեղարվեստական պատկերների ոչ միայն գեղագիտական, այլև ռացիոնալ իմաստավորման հետ: Չնայած համակարգչային մտածողության պատկերավորությանն ու խճանկարայնությանը՝ այդ մտածողությունը մարդուն կողմնորոշում է հասկացականի ու ակնառուի միաձուլմանը, մտքի արագությանն ու ճկունությանը: Ուզում ենք մենք դա, թե ոչ, բայց համակարգչային մշակույթը մարդուն ստիպում է նորովի մտածել:

Մակայն «նորովի մտածելու» կարողության ձևավորման գործընթացը բավական հակասական է և միշտ չէ, որ ունի դրական երանգավորում: Օգտատերերի համար որոշակի հեղինակություն ունեցող համակարգչային մեծաթիվ կայքերը բավական հակասական տեղեկատվություն են հաղորդում միևնույն իրադարձության մասին: Դա նպաստում է այն կարծիքի ձևավորմանը, թե ճշմարտությունները շատ են: Այստեղից ծագում է մարդկանց կարծիքների ներքին բազմազանությունը, ինչը կարող է հանգեցնել տարբեր կոնֆլիկտների: Մյուս կողմից, եթե հեռարձակման բոլոր ուղիներն ասում են միևնույն բանը, ստեղծվում է տեղեկատվության ինքնատիպ պաշտամունք, կարծիքների միօրինակություն: Այս դեպքում հասարակական գիտակցությունը լցվում է շտամպների ու ստանդարտների համակազմով, առաջանում է «արժեքային վակուում», որից հետո զանգվածային տեղեկատվական միջոցների օգնությամբ մարդկանց մանիպուլյացիայի ենթարկելը դառնում է սովորական, հեշտ խնդիր: Օրինակ, արդի տեխնոլոգիական դարաշրջանը, մի կողմից, բարձրացնում է մարդկանց նյութական բարեկեցությունը, մյուս կողմից՝ իշխանությունները մարդկանց ներշնչում են, որ յուրաքանչյուր սոցիալական դժգոհություն կամ փոփոխության պահանջ կարող է վտանգել բարեկեցության աճը: Ըստ էության, տեղեկատվական միջոցները դարձել են «քաղաքական ճիշտ կարգեր» ծրագրավորելու միջոցներ՝ ստեղծելով բազմակարծության ու թատերայնացված ժողովրդավարության պատկեր: Այս

երևույթը հաճախ բնութագրվում է որպես «հասարակության ինքնության աղտոտում» [11, շ. 39]:

Արդի աշխարհում, որտեղ մեքենաների սերունդները միմյանց ավելի արագ են փոխարինում, քան մարդկանց սերունդները, ստեղծվում է պատրանք, որ ժամանակակից տեխնիկայի մեծ նվաճումները մեզ թույլ են տալիս ստեղծել լավագույն աշխարհը: Էկրանային մշակույթի գործառնության ընթացքում տեխնիկական խնդիրները հաճախ մղվում են հետին պլան, և առաջնային են դառնում սոցիալական գործոնները: Գիտակցության մանիպուլյացիայի բարդ տեխնոլոգիաների կիրառման հետևանքով, որոնք դառնում են «հոգեբանական մոնոպոլիայի» և «հոգևոր պարտադրման» միջոցներ, փոխվում են մարդկանց դիրքորոշումները, վարքի մոդելները և իրականության ընկալումները:

Համացանցում գոյություն ունեն բազմաթիվ սերվերներ, որոնք նվիրված են ինչպես թմրանյութերի դեմ պայքարին, այնպես էլ տնային պայմաններում մարիխուանայի աճեցման միջոցներին, ինչպես հավատի հարցերում խաղաղության ու հանդուրժողականության քարոզմանը, այնպես էլ ազգային երկպառակության սերմանմանը, միջազգային ահաբեկչության տարածմանը: Եվ մենք բոլորս՝ «գլոբալ գյուղի» բնակիչներս, խրվելով ամենօրյա տարածանությունների և խնդիրների մեջ, ի գորու չլինելով դիմադրել մեր գիտակցության մանիպուլյացիային, դառնում ենք տեղեկատվական ազդեցիկ կամ տեղեկատվական պատերազմի օբյեկտները, երբ մեզ ստիպում են հակվել որևէ խմբի կողմից ուղղորդված սուբյեկտիվ տեսակետին: Էկրանը ոչ միայն «մոզական պատուհան» է, որով մենք նայում ենք աշխարհին, այլև «դուռ», որով գաղափարները թափանցում են մեր գիտակցություն: Նման դեպքերում էկրանային մշակույթը, վերածվելով հոգևոր թմրամիջոցի, կարող է զրկել անհատին ռացիոնալ և տրամաբանական մտածողությունից, քայքայել նրա հոգեբանական պաշտպանությունը: Նման ազդեցության տակ հայտնված անհատը մի քանի անգամ ավելի շատ ժամանակ է անցկացնում հեռուստացույցի կամ համակարգչի առջև, քան պահանջվում է նրա տեղեկատվություն ստանալու պահանջմունքը բավարարելու համար:

XX դարի առաջին կեսին՝ արդյունաբերական քաղաքակրթության վերելքի փուլում, տեղեկատվությունն ընկալվում էր որպես որևէ կարևոր փաստի ստացման կամ հաղորդման գործընթաց: Բայց այն, որ տեղեկատվու-

թյունն ինքնին բազմակարծիքայնության դրսևորման ձև է, առաջադրեց տեղեկատվական հոսքերից ճիշտ ընտրություն կատարելու խնդիր: Եթե սկզբնապես այդ խնդիրը փորձում էին լուծել գրաքննության՝ տեղեկատվական հոսքերի ուղղորդման միջոցով, ապա XX դարի վերջերին «ուժային մեթոդի» փոխարեն շրջանառության մեջ դրվեց կառավարելի հասարակություն ստեղծելու այլ հնարք՝ ապատեղեկատվությունը կամ, ավելի ստույգ, ուղղորդող տեղեկատվությունը:

Իմանալով մարդու հիշողության մեջ տեղեկատվության ընկալման ու մշակման առանձնահատկությունները՝ կարելի է բավական արդյունավետ մանիպուլյացիայի ենթարկել հասարակական կարծիքը: Նման մանիպուլյացիայի նպատակն է պարտադրել որոշակի արժեքներ, գաղափարներ, աշխարհայացք, կլիշեներ, որի արդյունքում հրամցվող տեղեկատվությունը մարդկանց կողմից սկսում է ընկալվել որպես իրական և ճշմարիտ: Մտքի և տրամաբանության պատնեշների աստիճանական վերացումից հետո տեղեկատվությունն անքննադատ կերպով ընդունվում է հասարակության կողմից: Օգտագործելով ՁԼՄ-ն որպես համաշխարհային բռնապետության միջոցներ՝ այս աշխարհի հզորները պասիվ մեծամասնությանը պարտադրում են նմուշներ, որոնց միջոցով նրանք դատում են իրենց ու մյուսների մասին: Նրանք ստեղծում են նոր, պատրանքային, կեղծ աշխարհ՝ մարդուն տալով մոռացություն և սեփական պարզունակ հաճույքների ու ցանկությունների բավարարման հնարավորություն:

Հետևաբար, մարդու կողմից տեղեկատվական մշակույթի օպտիմալ մակարդակի յուրացումը պետք է ուղեկցվի տեղեկատվական հասարակության սիմվոլիկ իրականության հասկացմամբ և նրանում վստահ կողմնորոշմամբ, նրա մեջ տեղեկատվական աշխարհայացքի ձևավորմամբ:

Հետմոդեռնիստական փիլիսոփայության տեսաբանները (Ժ.Բատայ, Ժ.Դեյլոգ, Ժ.Բոդրիյար) ընդգծում են, որ ժամանակակից հասարակությունում հատուկ նշանակություն է ձեռք բերում սիմվոլիկ նշանների հատուկ տեսակը՝ սիմուլյակրը¹ (լատ. *simulare* - «ձևացնել» բառից): Միմուլյակրը Էկրանային-

¹ Միմուլյակրը «պատճեն» է, որը բնօրինակը չունի իրականության մեջ, այլ կերպ ասած՝ սիմուլյակրը սեմիոտիկական նշան է, որը նշանակելի օբյեկտ չունի իրականության մեջ: Հասկացությանը ժամանակակից գործածություն է տվել ֆրանսիացի փիլիսոփա, գրող Ժորժ Բատայը (1897-1962), բայց այն լայնորեն սկսեց կիրառել ֆրանսիացի սոցիոլոգ, մշակութաբան և փիլիսոփա Ժան Բոդրիյարը (1929-2007):

ցանցային մշակույթի տեղեկատվական արդյունքն է: Դա նշան է, որը ստանում է իր սեփական կեցությունը, ստեղծում է իր իրականությունը և, ըստ էության, դադարում է նշան լինելուց՝ վերածվելով վիրտուալ օբյեկտի [12]: Այս առումով ակնհայտ է, որ համակարգչային տեղեկատվական տեխնոլոգիաների տարածումը հասարակությունում սրում է մարդու վրա դրանց ազդեցության հիմնախնդիրը՝ այն արտահայտելով որպես էլեկտրոնային դարաշրջանում սուբյեկտիվության գոյություն, որի էությունը սուբյեկտի և սիմուլյակրի միաձուլումն է, այսինքն՝ սուբյեկտի վերածումը սեփական սիմուլյակրի, որի դեպքում ֆիզիկապես, մարմնապես մնալով իրական աշխարհում՝ նա մտային առումով տեղափոխվում է վիրտուալ աշխարհ, սիմուլյակրների տարածություն, որտեղ օժտվում է նոր՝ վիրտուալ մարմնով, որն ընդհանուր ոչինչ չունի իր մարմնականության հետ:

Բացի այդ՝ հատկապես սիմուլյացիան (ձևացնելը) է դարձել զանգվածային լրատվամիջոցների տեղեկատվական տիրապետող գործունեությունը: Նման իրավիճակը հիմնավորվում է շատ փաստերով՝ կապված ընտրատեխնոլոգիաների, ռազմական, ազգային և այլ բախումների լուսաբանման, իշխանության իմիջի ստեղծման, գովազդի ճնշման հետ... Ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ զանգվածային լրատվամիջոցները փաստացիորեն դադարում են արտացոլել իրականությունը և սկսում են ստեղծել կերպարներ ու սիմուլյակրներ, որոնք էլ որոշում են հետմոդերնի մշակույթի իրականությունը:

Շուկայական տնտեսությամբ և անխուսափելի մրցակցությամբ ժամանակակից հասարակությունը բնութագրվում է տեղեկատվական-հոգեբանական ներգործության ոլորտում ավելի ու ավելի նոր տեխնոլոգիաների մեծամասշտաբ տարածմամբ ու կատարելագործմամբ (մալուխային ու արբանյակային հեռուստատեսության առաջացում, համացանցի մատչելիություն), ինչը հանգեցնում է տեղեկատվական տարածությունում մարդկանց անհավասար դրությանը:

Մի կողմից՝ հանդես են գալիս մասնագիտորեն պատրաստված և լավ վարձատրվող մասնագետներ, որոնք հստակ պատկերացնում են իրենց խնդիրներն ու ընտրողաբար են մոտենում դրանց իրականացման մեթոդներին, մյուս կողմից՝ բնակչության մեծ մասը հանդես է գալիս որպես տեղեկատվական-հոգեբանական ներգործության թիրախ կամ մանիպուլյացիայի

օբյեկտ, դառնում խամաճիկ այս կամ այն նպատակին հասնելու համար սկսված մանիպուլյատիվ խաղերում: Մանիպուլյացիա կատարելը ոչ միայն դառնում է քողարկվող իրականություն, այլև ձեռք է բերում զանգվածային բնույթ և դառնում հասարակության կառավարման ամենօրյա միջոց, «ինքնահոսի» թողնված գործընթաց, որն անընդհատ տրամադրում է ընտրված կամ պարզապես կեղծված տեղեկատվության չափաբաժիններ: Վերլուծելով ժամանակակից մարդու կյանքը՝ մենք կարող ենք դիտարկել իրենց ծագմամբ ու վերջնանպատակներով տարբեր տեղեկատվական երկու հոսքերի բախում: Առաջինն այն տեղեկատվությունն է, որը բխում է մարդուց՝ մտածող, ինքնակազմակերպման ու կատարելագործման ձգտող էակից: Երկրորդն արտաքին տեղեկատվական հոսքն է, որը կազմակերպվում է նաև անհատին ու զանգվածներին մանիպուլյացիայի ենթարկելու նպատակով, և որն ավելի ու ավելի խորն է թափանցում մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Ժամանակակից տեղեկատվական սոցիալ-քաղաքական մանիպուլյացիաների օբյեկտը մարդու նոր տեսակն է՝ «զանգվածի մարդը»: Այս առնչությամբ որոշ հետազոտողներ նկատում են, որ տեղեկատվական միջոցների կողմից սոցիալ-քաղաքական ուղղորդվող ներգործությունների ենթարկված մարդկանց տարատեսակը ճիշտ կլինի բնութագրել ոչ թե «զանգված», այլ «ամբոխ» հասկացությամբ. եթե զանգվածները որոշ սկզբունքների հիման վրա միավորվող, ինքնակազմակերպվելու և իրենց շահերին համահունչ գործելու ընդունակ մարդկանց խմբեր են, ապա ամբոխները միևնույն տեղեկատվական դաշտում պատահաբար հայտնված, միասնական շահեր ու նույնիսկ տրամադրություններ չունեցող մարդկանց խմբերն են:

Ինչպես նշվեց, ժամանակակից տեղեկատվական միջոցները մարդկանց նաև մեկուսացնում են, քանի որ դուրս են մղում ավանդական անմիջական շփումները, հանդիպումներն ու հավաքները՝ դրանք փոխարինելով հեռուստացույցի կամ համակարգչի հետ անձնական շփումներով: Դրա հետևանքով մարդիկ հայտնվում են առաջին հայացքից անտեսանելի ամբոխի կազմում: Ժամանակակից մարդն իրականությունը հաճախ պատկերացնում է ոչ թե իր անձնական ընկալումների, այլ տեղեկատվական միջոցների կողմից ձևավորված իրականությանը համապատասխան: Բայց նույնիսկ վերախմբագրված իրականության ընկալումը լիովին չի համապատասխանում մարդու աշ-

խարհըմբռնմանը, քանի որ տեխնիկական-տեղեկատվական սրբագրման է ենթարկվում ոչ միայն իրականությունը, այլև մարդկային ընկալումները:

Բայց որքան էլ սարսափազդու թվա ՁԼՄ ամենագործության և զանգվածային գիտակցության «հոգեծրագրավորման», տեղեկատվական ու հաղորդակցային մանիպուլյացիայի անսահմանափակ հնարավորությունների մասին միջոց, պետք է հիշել, որ, այնուամենայնիվ, դրանք հաղորդակցման միջոցներ են: Եվ մարդը ոչ թե պարզապես մեխանիկորեն մշակում է ստացված տեղեկատվությունը, այլ դեն է նետում անպետքը, անհատապես տեսակավորում տեղեկատվությունն ըստ կարևորության աստիճանի, որոշում նրա ընկալման հերթականությունը: Չանզվածային լսարանն ամենից առաջ անհատների ու անձնավորությունների ամբողջություն է, այլ ոչ թե հոգևոր արտադրանքը սպառող պասիվ զանգված: Ցանկացած մարդ ինքնուրույն է մեկնաբանում իրեն հասնող տեղեկատվությունը՝ գտելով ու գնահատելով այն՝ կախված սեփական աշխարհընկալումից, սոցիալական դիրքից, մշակութային զարգացումից: ՁԼՄ-ի կողմից կարծրատիպերի արմատական փոփոխություններ պարտադրելու փորձերը հաճախ բախվում են ակտիվ հոգեբանական դիմադրության, ինչը հանդիսանում է ոչ միայն տեղեկատվության, այլև նրա աղբյուրների նկատմամբ մարդու ընտրողական վերաբերմունքի արդյունքը: Սպառվող տեղեկատվության սպառման ու մեկնաբանության հարցում կարևոր նշանակություն ունի նաև այն փաստը, որ նրա ընկալողը երբեք չի գտնվում դատարկության մեջ: Նա տեղեկատվության նկատմամբ գրավում է ակտիվ դիրք. համաձայնվում է կամ առարկում, պատասխան է պատրաստում, լրացնում է տեղեկատվությունը, վերլուծում է շարժառիթները, նույնիսկ մասնակցում է էկրանին գրուցակցի մտքերի ընթացքին և այլն:

Տեղեկատվական աշխարհում փոփոխվում են մարդկանց փոխհարաբերությունները միմյանց և ամբողջ հասարակության հետ: Այդ փոխհարաբերությունների արդյունքը հանդիսացավ մասամբ էկրանային մշակույթի գործառնության մեջ երկու միտումների՝ մասսայականացման և ապամասսայականացման առկայությունը:

Էկրանային մշակույթի կապը զանգվածային մշակույթի հետ պայմանավորում է հենց էկրանային մշակույթի զանգվածային բնույթը, որի բովանդակության մեջ մտնում են համաաշխարհային մշակույթի բազմաթիվ արտեֆակ-

տեր: Աշխարհի խոշորագույն գրադարաններն ու նշանավոր թանգարանները, ճարտարապետական ու պատմական հուշարձանները, համերգասրահներն ու թատրոնները մատչելի են դառնում հանդիսատեսների ու ունկնդիրների լայն շրջանակին: Մշակութային բազմաթիվ արտեֆակտների մատչելիությունը տասնյակ միլիոնավոր մարդկանց հանգեցնում է նրանց կենսագործունեության զանգվածային ձևերի տարածմանը: Դրա հետ մեկտեղ, մշակույթի մասսայականացումն ուղեկցվում է հակադիր գործընթացներով՝ ապամասսայականացմամբ: Ժամանակակից տեղեկատվական տեխնիկական միջոցները ստեղծում են նոր համաշխարհային հանրություն՝ չգրկելով նրանց անհատականությունից: Ավելին, մշակույթի ապամասսայականացումը բարձրացնում է անձնային, անհատական սկզբի դերը: «Զանգվածային տեղեկատվության միջոցների ապամասսայականացումը,- գրում է Է.Թոֆլերը,- մեր օրերում տալիս է դերային մոդելների ու կենսաոճերի ապշեցուցիչ բազմազանությունը, որոնց հետ կարելի է համեմատել կյանքը» [13, c. 614]:

Մարդու նույնականության ձևավորումը տեղի է ունենում սոցիումի, մարդու կենսական միջավայրի աճող բազմազանության ազդեցությամբ, ինչը հատկապես բնորոշ է տեղեկատվական հասարակության կայացման փուլին: Մարդը սոցիալական ու տեխնոլոգիական դինամիկ փոփոխությունների պայմաններում հաճախ զգում է իր անպաշտպանությունը: Մարդկային կենսագործունեության գլոբալացման և մարդու ներքին անհատական աշխարհի միջև կոնֆլիկտն արդիականացնում է նույնականության հիմնախնդիրը: Ժամանակակից պայմաններում համակարգչային մշակույթի ապամասսայականացումն անձի ինքնանույնականության կարևորագույն գործոնն է: Մ.Կաստելյը նշում է, որ «պատմական այս պահին, որը բնութագրվում է կազմակերպությունների ապակառուցողականությամբ, ինստիտուտների ապաօրինականացմամբ, խոշոր հասարակական շարժումների մարմամբ և մշակութային դրսևորումների վաղանցիկությամբ, նույնականությունն իմաստների գլխավոր, երբեմն նաև միակ աղբյուրն է: Մարդիկ ավելի հաճախ կազմակերպում են իրենց իմաստները ոչ թե նրա շուրջը, թե ինչ են նրանք անում, այլ նրա հիման վրա, թե ով են իրենք, կամ սեփական պատկերացումների հիման վրա, թե ով են իրենք» [14, c. 27]: Բացի դրանից՝ մարդը կարող է ստանալ ու փոխանցել իրեն անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն անհրաժեշտ պա-

հին և ցանկացած վայրում, ակնթարթորեն կապվել իրեն անհրաժեշտ մարդու կամ հաստատության հետ: Զանգվածային տեղեկատվության այժմյան միջոցներն ավելի ու ավելի մեծ չափով են անցնում սպառողների տարբեր խմբերի ու անհատ բաժանորդների գեղագիտական պահանջների բավարարման ռեժիմի: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիան թույլ է տալիս ստանալ ոչ թե զանգվածային, այլ անհատական տեղեկատվություն, որը համապատասխանում է սպառողի պահանջներին:

Այսպիսով, զանգվածային տեղեկատվության միջոցներն անցնում են իրենց հակադրությանը՝ դառնում են նաև անհատական տեղեկատվության միջոցներ: Ցանցային ու հեռահաղորդակցման տեխնոլոգիաներն ասես ամբողջ աշխարհը պտտում են մի մարդու շուրջը: Այդ աշխարհի կենտրոնում մարդն է, անհատը, որի ձեռքի տակ կան հաղորդակցման բոլոր միջոցները, ցանկացած տեղեկատվության հանդեպ ազատ իրավունքը: Բարձր տեխնոլոգիաներն անկասելիորեն տանում են մեզ անձնավորված տեղեկատվության աշխարհ: Թվային մալուխային հեռուստատեսությունը, անձնական համակարգիչները, բջջային հեռախոսներն ապահովում են էկրանային մշակույթի ապամասսայականացումը: Նրանք հնարավոր են դարձնում անհատի կողմից մշակութային արժեքների սպառումն իր հետաքրքրություններին, ճաշակին, տրամադրությանն ու ցանկություններին համապատասխան: Մ. Կաստելլը գրում է, որ «նոր հաղորդակցային համակարգը, որն ավելի ու ավելի շատ է խոսում ունիվերսալ լեզվով, միաժամանակ գլոբալ չափերով միավորում է մեր մշակույթում բառերի, հնչյունների ու պատկերների արտադրությունն ու տարածումը և հարմարեցնում է դրանք անհատների անձնական ճաշակին ու տրամադրություններին» [14, c. 26]:

Այսպիսով, էկրանային մշակույթը, հանդիսանալով արդյունաբերական հասարակության ծնունդը և կապված լինելով գիտատեխնիկական առաջընթացի հետ, իր դրսևորումն է ստանում տեղեկատվական հասարակությունում՝ դառնալով արդիականության առանցքային մշակութաստեղծ երևույթը: Այս մշակույթը փոխում է ոչ միայն մասնագիտական գործունեության բնույթն ու բովանդակությունը, այլև մարդկանց կենցաղն ու կենսակերպը, մասնակցում նրանց արժեքային կողմնորոշումների և սոցիոմշակութային պատկերացումների ձևավորման գործընթացին:

Սեպտեմբեր, 2014թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Кастельс М.*, Галактика Интернет: размышления об Интернете, бизнесе и обществе, Екатеринбург, 2004.
2. *Маклюэн М.*, Понимание медиа: Внешние расширения человека, М., 2003.
3. *Дайсон Э.*, Жизнь в эпоху интернета, М., 1998.
4. *Гвардини Р.*, Конец нового времени, "Вопросы философии", 1990, N 4.
5. *Эко У.*, Некоторые пояснения: кино и современная живопись. Некоторые пояснения: реклама, в кн: *Эко У.*, Отсутствующая структура. Введение в социологию, СПб., 1998.
6. *Философия техники в ФРГ*, М., 1989.
7. *Фарман И.*, Модель коммуникативной рациональности (на основе социально-культурной модели Юргена Хабермаса), "Рациональность на перепутье", кн. 1, М., 1999.
8. *Степин В.*, Теоретическое знание, М., 2000.
9. *Кара-Мурза С.*, Манипуляция сознанием, М., 2000.
10. *Кутырёв В.*, Культура и технология: борьба миров, М., 2001.
11. *Бард А., Зодерквист Я.*, Нетократия. Новая правящая элита и жизнь после капитализма, СПб., 2005.
12. *Baudrillard J.*, Simulacres et simulation, Paris, 1981.
13. *Тоффлер Э.*, Третья волна, М., 1999.
14. *Кастельс М.*, Информационная эпоха: экономика, общество и культура, М., 2000.
15. *Моль А.*, Социодинамика культуры, М., 1973.

**ԷՎՐԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Վարդան Աթոյան, Արփիինե Մալքոջյան, Սոֆյա Օհանյան

Ամփոփագիր

Էկրանային մշակույթը, հանդիսանալով արդյունաբերական հասարակության ծնունդը և կապված լինելով գիտատեխնիկական առաջընթացի հետ, իր դրսևորումն է ստանում տեղեկատվական հասարակությունում՝ դառնալով արդիականության առանցքային մշակութաստեղծ երևույթը: Այս մշակույթը փոխում է ոչ միայն մասնագիտական գործունեության բնույթն ու բովանդակությունը, այլև մարդկանց կենցաղն ու կենսակերպը, մասնակցում նրանց արժեքային կողմնորոշումների և սոցիոմշակութային պատկերացումների ձևավորման գործընթացին:

**ЭКРАННАЯ КУЛЬТУРА
КАК СОЦИОКУЛЬТУРНАЯ ХАРАКТЕРИСТИКА
ИНФОРМАЦИОННОГО ОБЩЕСТВА**

Вардан Атоян, Арпине Малкджян, Софья Оганян

Резюме

Экранная культура, являясь плодом индустриального общества и будучи связанной с научно-техническим прогрессом, проявляется в информационном обществе, становясь ключевым культуuroобразующим явлением современности. Эта культура меняет не только характер и содержание профессиональной деятельности, но и образ жизни людей, участвует в процессе формирования их ценностных ориентаций и социокультурных представлений.

**THE SCREEN CULTURE
AS A SOCIOCULTURAL CHARACTERISTIC
OF THE INFORMATIONAL SOCIETY**

Vardan Atoyán, Arpine Malkjyan, Sofya Ohanyan

Resume

The “screen culture” is the child of the industrial society, and since it is connected with the scientific and technological progress, it gets manifested in the information society, becoming a pivotal culture-forming phenomenon of the modernity. This culture changes not only the character and contents of professional activities, but also people’s ways of life. It also participates in the process of forming their values orientations and sociocultural perceptions.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՏՍ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ
ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախավերդյան

Բանալի բառեր՝ համեմատական առավելություններ, տարածաշրջանային տնտեսական ինտեգրում, Եվրասիական տնտեսական միություն, արտահանման ծավալ:

Տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումը ժամանակի ընթացքում անդամակցող երկրների համար կարող է բերել բազմաթիվ տնտեսական օգուտներ: ԵՏՍ-ն երկու տիպի ազդեցություն է ունենում միացող երկրի վրա՝ ստատիկ և դինամիկ: Ստատիկ էֆեկտը վերաբերում է ԵՏՍ մտնելուց առաջ և հետո երկրի բարեկեցության փոփոխությանը: Դինամիկ էֆեկտը վերաբերում է անդամ երկրում կամ երկրներում ստեղծված արդյունքի վրա ԵՏՍ ունեցած ազդեցությանը: Շատ վերլուծաբաններ, այնուամենայնիվ, նշում են, որ ԵՏՍ ստատիկ սոցիալական հետևանքները հիմնականում փոքր են, հնարավոր է, որ լինեն նաև բացասական [1]: Ի տարբերություն վերջինիս՝ դինամիկ հետևանքները դժվար է սահմանել և էլ ավելի դժվար է չափել:

Հատկանշական է, որ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելուց հետո երեք երկրների՝ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի միջև առևտրի ծավալներն աճել են: 2009-2010թթ. այդ երկրների միջև առևտրի ծավալներն ավելացել են մեկ քառորդով, իսկ մինչև 2011թ. վերջը՝ երկու երրորդով: Օրինակ՝ Ղազախստանի ապրանքաշրջանառությունը Ռուսաստանի ու Բելառուսի հետ 2009-2011թթ. աճել է մոտ 80%-ով [2]: Դեռևս դժվար է հավաստել՝ այդ աճը պայմանավորված է վերոնշյալ երկրների միջև առևտրում մաքսատուրքերի բացակայությամբ, երրորդ երկրներից ներմուծ-

¹ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ:

² Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր:

վող ապրանքներից գանձվող բարձր մաքսատուրքերով, թե՛ առևտրի հետ-
ճգնաժամային վերականգնմամբ:

ԵՏՄ շրջանակներում առևտրի ստեղծումը և առևտրի շեղումը կախված են նաև անդամակցող երկրների առևտրի կառուցվածքից և նրանց համեմատական առավելություններից: Այսպես, 2012թ. ՀՀ արտահանման մեջ ԵՏՄ տեսակարար կշիռը կազմել է 21%, և շատ չնչին է եղել Բելառուսի ու Ղազախստանի տեսակարար կշիռը (1%): ՀՀ արտահանումը 2012թ. դեպի ՌԴ կազմել է \$279 մլն, իսկ դեպի Բելառուս և Ղազախստան՝ համապատասխանաբար \$6.7 մլն և 3.9 մլն: Ինչ վերաբերում է ՀՀ ներմուծմանը, ապա պատկերը հետևյալն է. ՀՀ ներմուծման մեջ ԵՏՄ տեսակարար կշիռը 2012թ. կազմել է 26%: ՌԴ-ից 2012թ. ներմուծվել է մոտ \$1 մլրդ-ի ապրանք, իսկ Բելառուսից և Ղազախստանից՝ համապատասխանաբար՝ \$33 մլն-ի և 8.8 մլն-ի:

Եթե հաշվի առնենք նաև, որ 2012թ. ՀՀ արտահանման մեջ 19.5%-ը կազմել է հանքաքարը, 13%-ը՝ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքները և քացախը, 12%-ը՝ մարգարիտը, թանկարժեք քարերը, մետաղները, որոնք էլ համապատասխանաբար համաշխարհային արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն (համաշխարհային արտահանման մեջ համապատասխանաբար 0.12%, 0.18% և 0.03%), ապա կարելի է արձանագրել, որ ՀՀ-ն մասնագիտացել է այս ոլորտների արտադրանքի արտադրության մեջ: Դրա մասին է վկայում նաև արտադրության միջազգային մասնագիտացման մակարդակի հիմնական ցուցանիշներից մեկը՝ արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցը [3]: Այն այլ կերպ կոչվում է նաև Բելլա Բալասսայի համաթիվ:

$$RCA_{ij} = \frac{\frac{x_{ij}}{X_i}}{\frac{x_{aj}}{X_a}}$$

որտեղ՝ X_{ij} – i երկրի j արտադրանքի արտահանման ծավալն է,

X_i – i երկրի արտահանման ընդհանուր ծավալն է,

X_{aj} – j արտադրանքի արտահանման տեսակարար կշիռն է ընտրված տարածաշրջանից (կամ ամբողջ աշխարհից),

X_a – ընտրված տվյալ տարածաշրջանից արտահանման ընդհանուր ծավալն է:

Ըստ այս համաթվի՝ երկիրը համարվում է որևէ ապրանքի արտահանման մեջ մասնագիտացված, երբ տվյալ ապրանքի՝ երկրի արտահանման մեջ տեսակարար կշիռը գերազանցում է տվյալ տարածաշրջանի կամ աշխարհի արտահանման մեջ վերջինիս տեսակարար կշռին: Երկիրն ունի համեմատական առավելություն, երբ այս գործակցի արժեքը գերազանցում է մեկը: Այս գործակցիցը ՀՀ հանքահումքային արտադրանքի համար 2012թ. կազմել է 15, ոչ ալկոհոլային խմիչքի և քացախի համար՝ 22.6, պղնձի և դրանից պատրաստված իրերի համար՝ 8.4, ծխախոտի համար՝ 14 [4]: Սրանք այն ապրանքներն են, որոնցով ՀՀ-ն ունի մրցակցային առավելություն:

Հաջորդ ցուցանիշը ներձյուղային մասնագիտացման գործակցն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$RCA_i = \frac{X_i - M_i}{X_i + M_i}$$

որտեղ՝ X_i -ն՝ յուրաքանչյուր i -րդ ճյուղի ապրանքային խմբի արտահանման արժեքն է,

M_i -ն՝ յուրաքանչյուր i -րդ ճյուղի ապրանքային խմբի ներմուծման արժեքն է,

RCA_i -ն՝ յուրաքանչյուր ճյուղի ապրանքային խմբի արտահայտված համեմատական առավելությունը:

Այս ցուցանիշը գտնվում է [-1, +1] միջակայքում: -1-ի դեպքում երկիրը բացառապես ներմուծող է, +1-ի դեպքում՝ արտահանող: Միջանկյալ ցուցանիշները ցույց են տալիս տվյալ ճյուղի մասնագիտացման մակարդակը:

Այս ցուցանիշի էլ ավելի կատարելագործված տարբերակն է Լաֆեյի համաթիվը, որը բանաձևի մեջ ավելացրել էր նաև երկրի ՀՆԱ-ն [5]:

$$LI_{ij} = \left(1000 \cdot \frac{X_{ij} - M_{ij}}{Y_i} \right) - \left(\frac{X_{ij} + M_{ij}}{\sum_j (X_{ij} + M_{ij})} \cdot \frac{1000 \sum_j (X_{ij} - M_{ij})}{Y_i} \right)$$

Պարզեցված ձևով բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

$$LI_{ij} = \frac{1000}{Y_i} \cdot \frac{2(X_{ij}M_i - X_iM_{ij})}{X_i + M_i}$$

որտեղ՝ LI_i –ն՝ Լաֆեյի համաթիվն է,

Y_i –ն երկրի ՀՆԱ-ն է:

i երկիրը տվյալ ապրանքով կամ ապրանքախմբով ունի հարաբերական առավելություն, երբ համաթիվը գերազանցում է 0-ն:

Այժմ տեսնենք, թե Հայաստանը և Ռուսաստանը որ ապրանքախմբերի արտահանման մեջ են մասնագիտացել և ունեն համեմատական առավելություն, և արդյո՞ք Հայաստանը կարողանում է օգտագործել այն վերջինիս հետ առևտրում:

Աղյուսակ 1

Արտաքին առևտրում ՀՀ և ՌԴ համեմատական առավելությունները¹

մնաճ	Խումբը	Բելլա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	ՌԴ	Հայաստան	ՌԴ
01	Կենդանի կենդանիներ	2.9	0	0	0
02	Միս և մսից ենթամթերք	0	0	-1	-1
03	Ձուկ և խեցգետնավորներ	3	1	1	0
04	Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու	0.5	0.1	0	0
05	Այլ կենդանական ծագման ապրանքներ	0.5	0.2	0	0
06	Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	0.8	0	0	0
07	Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	0.4	0.2	0	0
08	Ուտելի մրգեր և ընկույզներ	3.3	0	0	-1
09	Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	1.6	0.1	0	0
10	Հացահատիկներ	0	1.9	-1	0
12	Չիթատու սերմեր և պտուղներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ծղոտ	0	0.2	0	0
13	Դոճխեժ, բուսածյուր, խեժ	0	0	0	0

¹ Աղյուսակի կազմման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2013թ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի երկնիշ դասակարգման) ՀՀ ԱՎԾ հրապարակման (<http://armstat.am/am/?nid=82&id=1594>) տվյալները:

Վնաս	Խումբը	Բեյլա-Բալասսայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	ՌԴ	Հայաստան	ՌԴ
15	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր, մեղրամոմ	0	0.8	-1	0
16	Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	1.1	0.1	0	0
17	Շաքար և հրուշակեղեն շաքարից	0.2	0.2	0	0
18	Կակաո և դրանից պատրաստված մթերք	0.5	0.5	0	0
19	Ցորենից, ալյուրից, օսլայից և կաթից պատրաստված ապրանք, ալյուրից հրուշակեղեն	0.2	0.3	0	0
20	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	4	0.1	0	0
21	Այլ տարբեր սննդամթերք	0.4	0.3	0	0
22	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	22.6	0.2	4	0
23	Սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր	0	0.4	0	0
24	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	14.0	0.6	0	0
25	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	3.4	1.1	0	0
26	Հանքաքար, խարամ և մոխիր	15.9	0	7	0
27	Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	0.4	3.9	-5	32
28	Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ	0.2	1.4	0	0

Վնաս	Խումբը	Բելլա-Բալասսայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	ՌԴ	Հայաստան	ՌԴ
29	Օրգանական քիմիական միացություններ	0	0.4	0	0
30	Դեղագործական մթերք	0.2	0	-1	-2
31	Պարարտանյութեր	0.2	5.3	0	1
32	Ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք	0.2	0.1	0	0
33	Եթերային յուղեր, հարդարանքի և յոգարանային միջոցներ	0.1	0.2	0	-1
34	Օճառ, մակերեսային ակտիվ օրգանական միջոցներ, մաքրող միջոցներ և քսուքներ,	0.1	0.3	0	0
35	Սպիտակուցային նյութեր, սուսինձ, մոդիֆիկացված օսլա, ֆերմենտներ	0.2	0.1	0	0
36	Պայթուցիկ նյութեր, լուցկի և այլ վառվող նյութեր	0.5	1.5	0	0
37	Լուսանկարչական և կինո ապրանքներ	0	0	0	0
38	Այլ քիմիական ապրանքներ	0	0.1	0	0
39	Պլաստմասսա և դրանից իրեր	0.3	0.1	-1	-2
40	Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր	0	0.7	0	0
41	Չմշակված մորթիներ և մշակված կաշի	0	0.2	0	0
43	Բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր	0.3	0.8	0	0
44	Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	0.1	2	0	0
48	Թուղթ և ստվարաթուղթ, դրանցից պատրաստված իրեր	0	0.4	-1	0
55	Քիմիական գործվածք	0.1	0.1	0	0
61	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	0.2	0	0	-1

Վնաս	Խումբ	Բեյա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	ՌԴ	Հայաստան	ՌԴ
62	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքից	1	0	0	-1
64	Կոշիկ, զուգագույլա և նմանատիպ իրեր	0.2	0	0	-1
68	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	2.1	0.4	0	0
69	Կերամիկական իրեր	0.2	0.2	0	0
70	Սպակի և դրանից իրեր	1.8	0.2	0	0
71	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	3.6	0	3	0
72	Սև մետաղներ	3.6	1.9	2	1
73	Իրեր սև մետաղներից	0.1	0.4	-1	-1
74	Պղինձ և իրեր դրանից	8.4	1.2	3	0
75	Նիկել և իրեր դրանից	0	5	0	0
76	Ալյումին և իրեր դրանից	7.2	1.6	2	0
78	Արձիճ և իրեր դրանից	0.8	1	0	0
81	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա	14.9	1.9	1	0
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	0.2	0.1	-3	-8
85	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	0.1	0.1	-1	-5
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	0.2	0.1	-3	-8
85	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	0.1	0.1	-1	-5
86	Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր	0.5	1.2	0	0
91	Ժամացույցներ և դրանց մասեր	3.2	0	0	0
94	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	0.1	0.1	-1	-1

Ինչպես տեսնում ենք, Հայաստանն ըստ Բելլա-Բալասասայի և Լաֆեյի գործակիցների մասնագիտացել է հետևյալ ապրանքախմբերի արտադրության և արտահանման մեջ՝ «կենդանի կենդանիներ», «ձուկ և խեցգետնավորներ», «ուտելի մրգեր և ընկույզներ», «բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», «բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», «սև մետաղներ», «պղինձ և իրեր դրանից», «ալյումին և իրեր դրանից», «այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա», «հանքաքար, խարամ և մոխիր», «իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից», «ժամացույցներ և դրանց մասեր»:

ՌԴ-ն համեմատական առավելություն ունի հետևյալ ապրանքախմբերով՝ «հացահատիկներ», «հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր», «անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ», «պարարտանյութեր», «փայտ և փայտից իրեր, փայտածուխ» և «սև մետաղներ»:

Այժմ տեսնենք, թե որքանով է Հայաստանը կարողանում օգտագործել իր համեմատական առավելությունները ՌԴ-ի հետ առևտրում: Հայաստանը 2012թ. ՌԴ է արտահանել \$18 մլն արժեքով ձուկ և խեցգետնավորներ, \$22.5 մլն արժեքով ուտելի մրգեր և ընկույզներ, \$12 մլն արժեքով բանջարեղենի և պտուղների վերամշակումից մթերք, \$152 մլն արժեքով ոգելից, ոչ ոգելից խմիչքներ, քացախ, \$28 մլն արժեքով բնական, արհեստական մարգարիտ, թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ¹: Հայաստանը չի օգտագործել իր համեմատական առավելությունները հետևյալ ապրանքախմբերով՝ «ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «սև մետաղներ», «պղինձ և իրեր դրանից», «ալյումին և իրեր դրանից», «այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա», «հանքաքար, խարամ և մոխիր»: Ընդ որում՝ վերջին ապրանքատեսակով ՀՀ-ն ունի շատ մեծ համեմատական առավելություն, այն 2012թ. կազմել է ՀՀ արտահանման 19%-ը, սակայն նույն թվականին ընդհանրապես չի արտահանել ՌԴ:

¹ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2013թ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի երկնիշ դասակարգման)» <http://armstat.am/am/?nid=82&id=1594>:

Հայաստանի տնտեսության զարգացման ռազմավարությունը պետք է հիմնվի արտահանման ներուժի խթանման վրա: Խոսելով հանրապետության հատվածային տնտեսական զարգացման հեռանկարների մասին՝ նշենք, որ ներկայումս Հայաստանի տնտեսության առավել մրցունակ և կարևոր ապրանքներն են մոլիբդենը, մեղրը, այլումինը և կոնյակը, որոնք ապահովում են երկրի արտահանման եկամուտների զգալի մասը:

Այժմ տեսնենք, թե որ ապրանքների արտադրության և արտահանման մեջ է մասնագիտացել Բելառուսը: Դրանք են՝ «միս և մսից ենթամթերք», «կաթ և կաթնամթերք, թռչնի ձու», «մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «շաքար և հրուշակեղեն շաքարից», «հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք», «պարարտանյութեր», «այլ քիմիական ապրանքներ», «բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր», «փայտ և փայտից իրեր, փայտածուխ», «քիմիական գործվածք», «վերգետնյա տրանսպորտային միջոցներ», «իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից»: 2012թ. Հայաստանն օգտագործել է իր համեմատական առավելությունները՝ Բելառուս արտահանելով հետևյալ ապրանքները՝ ուտելի մրգեր և ընկույզներ (\$114 հազար), ոգելից, ոչ ոգելից ըմպելիքներ, քացախ (\$5 մլն), աղ, ծծումբ, կրաքար և ցեմենտ (\$182 հազար): Հայաստանը չի օգտագործել մնացած ապրանքախմբերով իր համեմատական առավելությունները, մասնավորապես 2012թ. ընդհանրապես չի արտահանել Բելառուս սև մետաղներ, պղինձ, այլումին, դրանցից պատրաստված իրեր, այլ ոչ թանկարժեք մետաղներ, հանքաքար, խարամ, բնական և արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր: Ընդ որում՝ թանկարժեք մետաղների ներմուծումը Բելառուսից 10 անգամ գերազանցել էր դրանց արտահանումը:

Աղյուսակ 2

Արտաքին առևտրում ՀՀ և Բելառուսի համեմատական առավելությունները¹

Ամսաթիվ	Խումբը	Բելլա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	Բելառուս	Հայաստան	Բելառուս
01	Կենդանի կենդանիներ	2.9	0.2	0	0
02	Միս և մսից ենթամթերք	0	3.4	-1	1
03	Ձուկ և խեցգետնավորներ	3	0.1	1	0
04	Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու	0.5	9.4	0	2
05	Այլ կենդանական ծագման ապրանքներ	0.5	0.2	0	0
06	Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	0.8	0	0	0
07	Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	0.4	0.7	0	0
08	Ուտելի մրգեր և ընկույզներ	3.3	0.3	0	0
09	Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	1.6	0	0	0
10	Հացահատիկներ	0	0	-1	0
11	Ալրադացային-ձավարեղենային արտադրանք, ածիկ, օսլա, ինուլին և այլն	0.1	1.6	0	0
12	Ձիթատու սերմեր և պտուղներ	0	0.6	0	0
15	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր, մեղրամոմ	0	0.6	-1	0
16	Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	1.1	4.6	0	1
17	Շաքար և հրուշակեղեն շաքարից	0.2	2.5	0	0
18	Կակաո և դրանից պատրաստված մթերք	0.5	0.3	0	0
20	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	4	0.3	0	0

¹ Աղյուսակի կազմման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2013 թվականին (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման) ՀՀ ԱՎԾ հրապարակման (<http://armstat.am/am/?nid=82&id=1594>) տվյալները:

Ձևակ	Խումբը	Բելլա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	Բելառուս	Հայաստան	Բելառուս
21	Այլ տարբեր սննդամթերք	0.4	0.1	0	0
22	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	22.6	0.2	4	0
23	Սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր	0	0.1	0	-1
24	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	14.0	0	0	0
25	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	3.4	1.5	0	0
26	Հանքաքար, խարամ և մոխիր	15.9	0	7	0
27	Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	0.4	2.2	-5	0
29	Օրգանական քիմիական միացություններ	0	0.4	0	0
30	Դեղագործական մթերք	0.2	0.1	-1	-1
31	Պարարտանյութեր	0.2	16.2	0	3
33	Եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ	0.1	0.5	0	0
35	Սպիտակուցային նյութեր, սոսինձ, մոդիֆիկացված օսլա, ֆերմենտներ	0.2	2.3	0	0
38	Այլ քիմիական ապրանքներ	0	6.5	0	3
39	Պլաստմասսա և դրանից իրեր	0.3	0.8	-1	-1
40	Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր	0	1.5	0	0
42	Կաշվե իրեր, կենդանիների աղիքից իրեր	0.3	0.1	0	0
43	Բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր	0.3	3	0	0
44	Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	0.1	1.8	0	0
46	Ծղոտից իրեր	0	0.5	0	0
48	Թուղթ և ստվարաթուղթ, դրանցից պատրաստված իրեր	0	0.8	-1	0
54	Քիմիական թելեր	0	2	0	0

Մեծ	Խումբ	Բելլա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	Բելառուս	Հայաստան	Բելառուս
55	Քիմիական գործվածք	0.1	2.9	0	0
58	Հատուկ կտորներ, ասեղնագործ կտորներ	0	0.5	0	0
61	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	0.2	0.4	0	0
62	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	1	0.7	0	0
64	Կոշիկ, զուգագուլպա և նմանատիպ իրեր	0.2	0.3	0	0
65	Գլխարկներ և դրանց մասեր	0	0.8	0	0
68	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	2.1	2.3	0	0
69	Կերամիկական իրեր	0.2	1.4	0	0
70	Ապակի և դրանից իրեր	1.8	1.4	0	0
71	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	3.6	0	3	0
72	Սև մետաղներ	3.6	1.1	2	-1
73	Իրեր սև մետաղներից	0.1	1.2	-1	1
74	Պղինձ և իրեր դրանից	8.4	0.1	3	0
76	Ալյումին և իրեր դրանից	7.2	0.5	2	0
78	Արձիճ և իրեր դրանից	0.8	0	0	0
81	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա	14.9	0	1	0
83	Այլ իրեր ոչ թանկարժեք մետաղներից	0.2	0.7	0	0
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	0.2	0.4	-3	-3
85	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	0.1	0.2	-1	-1
86	Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր	0.5	0.7	0	-1

մաս	Խումբ	Բելլա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	Բելառուս	Հայաստան	Բելառուս
87	Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ	0	1.2	-1	2
90	Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր	0.1	0.2	0	0
91	Ժամացույցներ և դրանց մասեր	3.2	0	0	0
94	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	0.1	1	-1	0

Ղազախստանը 2012թ. մասնագիտացել է հետևյալ ապրանքների արտադրության և արտահանման մեջ՝ «հացահատիկներ», «ալյուրացային-ձավարեղենային արտադրանք», «հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք», «անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ», «սև մետաղներ», «պղինձ և իրեր դրանից», «արճիճ և իրեր դրանից», «ցինկ և իրեր դրանից»: 2012թ. Հայաստանն օգտագործել է իր մրցակցային առավելությունները և Ղազախստան է արտահանել բանջարեղենի, պտուղների վերամշակումից մթերք (\$216 հազար), ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ (\$1.5 մլն), բնական և արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (\$779 հազար), միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր (\$600 հազար):

Հայաստանը չի օգտագործել մնացած ապրանքախմբերով իր համեմատական առավելությունները, մասնավորապես 2012թ. ընդհանրապես չի արտահանել Ղազախստան սև մետաղներ, պղինձ, ալյումին, դրանցից պատրաստված իրեր, այլ ոչ թանկարժեք մետաղներ, հանքաքար, խարամ, ժամացույցներ և դրանց մասեր: Ընդհանրապես, Ղազախստանի հետ առևտուրն ընդգրկում է շատ քիչ ապրանքախմբեր՝ ընդհանուր ցածր արժեքով:

Աղյուսակ 3

Արտաքին առևտրում ՀՀ և Ղազախստանի համեմատական առավելություններ¹

Ձևաթիվ	Խումբը	Բելլա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	Ղազախստան	Հայաստան	Ղազախստան
01	Կենդանի կենդանիներ	2.9	0	0	0
03	Ձուկ և խեցգետնավորներ	3	0.1	1	0
08	Ուտելի մրգեր և ընկույզներ	3.3	0	0	0
09	Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	1.6	0	0	0
10	Հացահատիկներ	0	2.9	-1	1
11	Ալրադացային-ձավարեղենային արտադրանք, ածիկ, օսլա, ինուլին և այլն	0.1	7.4	0	0
12	Զիթատու սերմեր և պտուղներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ծղոտ	0	0.5	0	0
15	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր, մեղրամոմ	0	0.1	-1	0
16	Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	1.1	0	0	0
17	Շաքար և հրուշակեղեն շաքարից	0.2	0.1	0	0
20	Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	4	0	0	0
22	Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	22.6	0.1	4	0
23	Մանրաբլիթներ, պատրաստի անասնակեր	0	0.2	0	0
24	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	14.0	0.4	0	0

¹ Աղյուսակի կազմման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2013թ. (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի երկնիշ դասակարգման) ՀՀ ԱՎԾ հրապարակման (<http://armstat.am/am/?nid=82&id=1594>) տվյալները:

Մասն	Խումբը	Բելլա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	Ղազախստան	Հայաստան	Ղազախստան
25	Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	3.4	2.8	0	0
26	Հանքաքար, խարամ և մոխիր	15.9	3.5	7	1
27	Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	0.4	3.9	-5	26
28	Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ	0.2	5.9	0	1
30	Դեղագործական մթերք	0.2	0	-1	-1
31	Պարարտանյութեր	0.2	0.2	0	0
39	Պլաստմասսա և դրանից իրեր	0.3	0	-1	-1
40	Կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր	0	0	0	-1
44	Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	0.1	0	0	-1
48	Թուղթ և սովարաթուղթ, դրանցից պատրաստված իրեր	0	0	-1	-1
49	Գրքեր, լրագրեր, տպագրական արտադրանք	0.2	2.1	0	0
52	Բամբակ	0	0.3	0	0
68	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	2.1	0.1	0	0
70	Ապակի և դրանից իրեր	1.8	0	0	0
71	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	3.6	0.6	3	1
72	Սև մետաղներ	3.6	2.8	2	2
73	Իրեր սև մետաղներից	0.1	0.1	-1	-3
74	Պղինձ և իրեր դրանից	8.4	4.4	3	2
76	Ալյումին և իրեր դրանից	7.2	0.6	2	0
78	Արճիճ և իրեր դրանից	0.8	8.8	0	0
79	Ցինկ և իրեր դրանից	0	14	0	0

Ձևակ	Խումբը	Բելլա-Բալասայի համաթիվը		Լաֆեյի համաթիվը	
		Հայաստան	Ղազախստան	Հայաստան	Ղազախստան
81	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա	14.9	4	1	0
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	0.2	0.1	-3	-6
85	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	0.1	0	-1	-4
86	Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր	0.5	0.3	0	-2
87	Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ	0	0	-1	-3
88	Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր	3.7	0.2	1	0
90	Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր	0.1	0	0	-1
91	Ժամացույցներ և դրանց մասեր	3.2	0	0	0
94	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	0.1	0	-1	-1

Մետաղական հանքահումքային ոլորտը տնտեսության վերջին տարիների ամենաարագ աճող արտահանող հատվածներից մեկն է, սակայն, ինչպես տեսանք, այս ոլորտի ապրանքները շատ քիչ ծավալով են արտահանվում կամ ընդհանրապես չեն արտահանվում Բելառուս և Ղազախստան, իսկ ՌԴ արտահանվում են միայն թանկարժեք մետաղներ, քիչ քանակությամբ պղինձ և ալյումին, այլ ոչ թանկարժեք մետաղներ: Շինանյութերի ոլորտի արտադրանքից արտահանվում են հիմնականում քարերն ու այլ ոչ մետաղական հանքահումքային արտադրանքը: 2012թ. հանքաքար ընդհանրապես չի արտահանվել ՌԴ, Բելառուս և Ղազախստան, քիչ քանակությամբ կրաքար և ցեմենտ է արտահանվել ՌԴ, Բելառուս:

Հիմնականում իրեն արդարացրել է սննդի, մասնավորապես՝ ոգելից, ոչ ոգելից խմիչքների և քացախի արտահանումը, որը 2012թ. կազմել է դեպի ՌԴ ՀՀ արտահանման 55%-ը, Բելառուս արտահանման 75%-ը և Ղազախստան արտահանման 37%-ը:

Այսպիսով, ակնհայտ է, որ ԵՏՄ անդամ երկրների հետ առևտրում Հայաստանն ունի արտահանման հսկայական չիրացված ներուժ: Կարելի է ենթադրել, որ նոր սակագնային քաղաքականության և արտաքին առևտրային կանոնների դյուրացումը կնպաստի ՀՀ-ից դեպի ԵՏՄ երկրներ արտահանման աճին: Մյուս կողմից, արտահանման աճն ինքնաբերաբար չի կարող տեղի ունենալ, այլ պահանջում է հստակ ամրագրված արտաքին առևտրային ռազմավարության կենսագործում:

Ընդ որում, ՀՀ կառավարության՝ մրցակցային առավելությունների իրացմանն ուղղված քաղաքականությանը խոչընդոտում են հետևյալ ոլորտների զարգացման ցածր մակարդակները [6]՝

- մտավոր սեփականության պաշտպանության և տեխնոլոգիայի լիցենզավորման, նոր ռիսկային նախագծերի համար վենչուրային (ռիսկային) կապիտալի մատչելիության,
- փոքր բիզնեսի համար փոխառությունների մատչելիության,
- նոր բիզնեսի ստեղծման (բայց ոչ գրանցման) պարզության:

Սա նշանակում է տեխնոլոգիայի փոխանցման բացակայություն կամ ցածր արդյունավետություն, որը ԳՀՓԿԱ-ների (գիտության և գիտահետազոտական ու փորձնական ստրուկտորական աշխատանքների) ֆինանսավորումը վեր է ածում չպահանջվող գիտական պաշարների ստեղծման ֆինանսավորման և առաջացնում է թանկարժեք գիտատեխնիկական տեղեկությունների ու «ուղեղների» անկառավարելի արտահոսք:

Արտադրողների մրցակցային առավելությունները թուլանում են նաև հետևյալ գործոնների ազդեցությամբ՝

- ընկերությունների ֆինանսական բացության ցածր մակարդակով, որն, առաջին հերթին, վերաբերում է խոշոր հումքային արտադրողներին,
- պետական վարչական ապարատից կախվածությամբ և կոռուպցիայի աստիճանով:

Արտահանման ծավալների ընդլայնմանն ուղղված հիմնական խոչընդոտներն են.

- ընկերությունների կառավարման և հատկապես արտահանման շուկաներ գտնելու թույլ կարողությունը և զարգացման ռազմավարական ծրագրերի բացակայությունը,
- թողարկվող արտադրանքի ցածր մրցունակությունը,
- արտահանման ընդլայնմանն ուղղված ԳՀՓԿԱ չֆինանսավորումը,
- համապատասխան քանակի և որակի մասնագետների պակասը,
- ընկերություններին աջակցող ինստիտուցիոնալ և իրավական թույլ դաշտը,
- ֆինանսական ռեսուրսների պակասը կամ բացակայությունը:

Հայաստանում ԵՏՄ անդամակցությունից բխող առավելությունների կիրառման հնարավորության օբյեկտիվ գնահատականը պետք է իրականացվի ըստ հետևյալ սխեմայի՝

- ազգային արտադրության մրցունակության օժանդակման պետական ուղղվածության առավել լայն սպեկտրի որոշում,
- օժանդակման ուղղությունների ճշգրտում՝ հաշվի առնելով առևտրային կազմակերպությունների առանձնահատկությունները,
- օժանդակման ուղղությունների ճշգրտում՝ հաշվի առնելով սահմանափակումները՝ կապված արտադրանքի և արտադրողների վաճառահանման շուկաների բնույթի հետ, ինչպես նաև մակրոտնտեսական իրավիճակը:

Հունվար, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Winters, L. Alan, “Lebanon’s Euro-Mediterranean Agreement: Possible Dynamic Benefits,” mimeo, International Economics Department, The World Bank, 1996.
2. <http://www.eabr.org/r/about/status/>
3. Balassa index of revealed comparative advantage, [http://www.ecares.org/ecare/personal/conconi\\$/web/rca.pdf](http://www.ecares.org/ecare/personal/conconi$/web/rca.pdf)
4. Trade Center of Unctad, http://legacy.intracen.org/appli1/TradeCom/TP_EP_CI.aspx?RP=051&YR=2009

5. Comparison of Revealed Comparative Advantage Indices with Application to Trade Tendencies of East Asian Countries, Elias Sanidas, Yousun Shin, Seoul National University, p. 15.
6. Դ. Հախվերդյան, Հայաստանի Հանրապետության տնտեսությունը կարգավորող ինստիտուտները գլոբալացման պայմաններում, Եր., Հեղ. հրատ., 2013, էջ 203-232:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ
ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Գրիգոր Նազարյան, Դավիթ Հախվերդյան

Ամփոփագիր

Հայաստանի տնտեսության զարգացման ռազմավարությունը պետք է հիմնվի արտահանման ներուժի խթանման վրա: ԵՏՄ անդամ երկրների հետ առևտրում Հայաստանն ունի արտահանման հսկայական չիրացված ներուժ: Կարելի է ենթադրել, որ նոր սակագնային քաղաքականության և արտաքին առևտրային կանոնների դյուրացումը կնպաստի ՀՀ-ից դեպի ԵՏՄ երկրներ արտահանման աճին: Մյուս կողմից, արտահանման աճն ինքնաբերաբար չի կարող տեղի ունենալ, այլ պահանջում է հստակ ամրագրված արտաքին առևտրային ռազմավարության կենսագործում:

**СРАВНИТЕЛЬНЫЕ ПРЕИМУЩЕСТВА
АРМЕНИИ В СОПОСТАВЛЕНИИ
ТОРГОВЫХ ПОТОКОВ СТРАН ЕАЭС**

Григор Назарян, Давид Ахвердян

Резюме

Стратегия экономического развития Армении должна быть основана на продвижении экспортного потенциала. Армения имеет огромный неиспользованный потенциал с точки зрения торговли со странами ЕАЭС. Можно предположить, что новая тарифная политика и содействие в проведении международных торговых правил способствуют росту экспорта из Армении в страны ЕАЭС. С другой стороны, рост экспорта не может произойти автоматически, но требует четкой стратегии для осуществления внешней торговли.

**COMPARATIVE ADVANTAGES OF ARMENIA
IN COMPARISON WITH TRADE FLOWS
OF EURASIAN ECONOMIC UNION COUNTRIES**

Grigor Nazaryan, Davit Hakhverdyan

Resume

The economic development strategy of Armenia should be based on boosting its export potential. In terms of the trade with EEU countries Armenia has a huge untapped potential. It can be assumed that the new tariff policy and facilitation of international trade rules will contribute to the growth of exports from Armenia to the other EEU countries. On the other hand, export growth cannot happen automatically, but rather it requires implementation of a clear strategy on foreign trade.

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

*Վահրամ Հովյան**

*Բանալի բառեր*¹ եգիպտահայ համայնք, համազգային կառույցներ, «արաբական գարուն», արտագաղթ Եգիպտոսից, համեմատաբար բարենպաստ արդի պայմաններ:

Պատմական ակնարկ

Թեև հայերը Եգիպտոսում հայտնվել են դեռևս մ.թ.ա. 4-րդ դարում, սակայն նրանց հոսքը դեպի այդ երկիր մեծ չափեր է ստացել 18-րդ դարի կեսից: Պայմանավորված Օսմանյան կայսրությունում հայերի կյանքի համար աննպաստ պայմաններով, ինչպես նաև կրոնական ու ազգային հալածանքներով՝ հայերը ստիպված բռնել են գաղթի ճանապարհը: Նրանց գաղթի ուղղություններից մեկն էլ Եգիպտոսն էր, որտեղ տնտեսական պայմաններն ավելի բարենպաստ էին, չկար կրոնական և ազգային հալածանք և կար բարյացակամ վերաբերմունք հայերի նկատմամբ:

Հայերի գաղթը Եգիպտոս նշանակալի չափերի հասավ հատկապես 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ հայկական կոտորածների և Ցեղասպանության ժամանակաշրջանում: Այն շարունակվեց նաև հետցեղասպանական շրջանում, որի արդյունքը եղավ այդ երկրում հաստատված հայերի թվաքանակի շարունակական մեծացումը: Այսպես, եթե մինչև 1917թ. Եգիպտոսի հայերի թիվը կազմում էր մոտ 17 հազար, ապա 1926-27թթ. այն կազմում էր 25-28 հազար: Իսկ 1950-ական թթ. այդ երկրում հաստատված հայերի թվաքանակը հասավ իր առավելագույնին՝ մոտ 60 հազար:

Եգիպտոսի հայ համայնքի ներուժը պատկերացնելու համար նպատակահարմար է խնդիրը դիտարկել երկու հարթության մեջ՝ մարդկային և ինստիտուցիոնալ:

* «Նորավանք» ԳԳՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ:

1. Մարդկային գործոն: Մարդկային գործոնը հաշվի առնելիս առաջնային նշանակություն է ստանում այն հարցը, թե ինչ նշանավոր գործիչներ է տվել Եգիպտոսի հայ համայնքն այդ երկրին, Սփյուռքին և Հայաստանին:

Եգիպտոսի հայ համայնքն այդ երկրին տվել է բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև հասարակական-քաղաքական գործիչներ: Եգիպտոսում տնտեսական գործունեություն են ծավալել հայազգի բազմաթիվ մեծահարուստ գործարարներ: Եգիպտոսի նշանավոր հայերից հիշատակության արժանի է հատկապես վարչապետ Նուբար Նուբարյանը (1878-79թթ., 1884-89թթ., 1894-95թթ.):

Եգիպտական հասարակության մեջ կյանքի տարբեր ոլորտներում (քաղաքական, հասարակական, տնտեսական) բազմաթիվ հայ անհատ նշանավոր գործիչների առկայությունը խոսում է ոչ միայն համայնքի ներուժի, այլև տեղի հասարակության մեջ վերջինիս սերտ ինտեգրվածության մասին:

Եգիպտահայ համայնքը Սփյուռքին նույնպես տվել է համազգային մակարդակով բազմաթիվ նշանավոր գործիչներ: Նրանց մեջ նշանավոր է հատկապես ազգային բարերար, հասարակական-քաղաքական գործիչ, ՀԲԸՄ հիմնադիր, Փարիզի Խաղաղության վեհաժողովում հայ ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը: Եգիպտահայ համայնքը տվել է ողջ Սփյուռքի մասշտաբով նշանավոր գործիչներ նաև գրականության, արվեստի, մշակույթի և այլ ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ, գրող, երգիծաբան Երվանդ Օտյանը, գրող Վահան Թեքեյանը և այլք:

Եգիպտահայ համայնքի՝ Հայաստանին տված նշանավոր գործիչների առումով նշենք, որ ծագումով եգիպտահայ էր Հայաստանի նշանավոր օպերային երգչուհի, «Հայաստանի սոխակ» Գոհար Գասպարյանը:

2. Ինստիտուցիոնալ գործոն: Ինստիտուցիոնալ գործոնը հաշվի առնելիս առաջնային նշանակություն է ստանում այն հարցը, թե ինչ համազգային կառույցներ են ստեղծվել և գործել Եգիպտոսում: Եգիպտահայ համայնքում են հիմնադրվել Սփյուռքի երկու նշանավոր համազգային կառույցներ, որոնք ցայսօր շարունակում են իրենց ազգանպաստ գործունեությունը (թեև վաղուց արդեն՝ ոչ Եգիպտոսում): Այդ կառույցներից մեկը Հայկական բարեգործական ընդհանուր միությունն (ՀԲԸՄ) է, մյուսը՝ Համազգային հայ կրթական և մշակութային միությունը (կրճատ՝ Համազգային): ՀԲԸՄ-ն հիմնադրվել է Կահի-

րեում 1906թ.: Նրա կենտրոնական գրասենյակը Եգիպտոսում գործել է մինչև 1922թ.: Համազգայինը հիմնադրվել է 1928թ. կրկին Կահիրեում: Նրա կենտրոնական գրասենյակը Եգիպտոսում գործել է մինչև 1947թ.:

20-րդ դարի կեսից, սակայն, սկսեց նկատվել Եգիպտոսից հայերի արտագաղթի միտում: Դրան նպաստող հանգամանքներն էին այդ երկրի ոչ ժողովրդավարական վարչակարգը, պարբերաբար տեղի ունեցող ներքաղաքական ցնցումներն ու անկայունությունները, իսլամի որոշակի վերելքը (չնայած Եգիպտոսի աշխարհիկ պետություն լինելու հանգամանքին), կյանքի ավելի բարձր որակն ու բարենպաստ պայմաններն Արևմուտքի զարգացած երկրներում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Արևմտյան Եվրոպայի երկրներում: Սույն գործոնների ազդեցությամբ եգիպտահայությունը սկսեց գաղթել դեպի Արևմուտքի զարգացած երկրներ [1]¹:

Թվարկված հանգամանքներին կարելի է ավելացնել նաև հայրենադարձությունը, ինչը պայմանավորված էր Խորհրդային Հայաստանի կողմից վարվող համապատասխան քաղաքականությամբ: 1947-48թթ. մեծ հայրենադարձության ընթացքում Եգիպտոսից Հայաստան է գաղթել մոտ 4000 հայ [2]:

Արդյունքում՝ 20-րդ դարի կեսից սկսած, Եգիպտոսի հայ համայնքի թվաքանակը սկսեց նվազման կայուն միտում արձանագրել: Եթե 1960-ական թթ. Եգիպտոսի հայ համայնքի թվաքանակը կազմում էր 45 հազ. [3], 1974թ. այն կազմում էր մոտ 10 հազ. [4]:

Եգիպտոսի հայ համայնքի թվաքանակի նվազումն անխուսափելիորեն հանգեցրեց նրա ներուժի, ինչպես նաև եգիպտական հասարակության մեջ ինտեգրվածության աստիճանի նվազմանը: 20-րդ դարի կեսից Եգիպտոսի քաղաքական-պետական համակարգում բարձրագույն դիրքերի հասած հայեր գրեթե չկան: Տնտեսական ոլորտում նույնպես չկան խոշոր բիզնեսի հայազգի ներկայացուցիչներ: Հայերը հիմնականում գործունեություն են ծավալում մանր և միջին բիզնեսում²:

¹ Սույն երևույթը միայն Եգիպտոսի հայ համայնքին հատուկ չէր: Այն ընդհանուր միտում էր ողջ Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների համար (Լիբանան, Սիրիա, Իրան, Թուրքիա և այլն): Եվ այդ միտումը շարունակվում է առ այսօր:

² Հարկ է նշել, որ հայերի տնտեսական թուլացումը Եգիպտոսում սկսվել է դեռևս 20-րդ դարի առաջին կեսին՝ կապված երկու համաշխարհային պատերազմների, համաշխարհային տնտեսական ճգնաժամի, Եգիպտոսում ազգայնականության վերելքի հետ, ինչը դրսևորվում էր խտրական քաղաքականությամբ նաև տնտեսության բնագավառում: Այս ամենի հետևանքով զգալիորեն թուլացել են հայ խոշոր ձեռնարկատերերի դիրքերն այդ երկրում:

Ներկայիս թվաքանակը և սփռվածությունը

Համաձայն պաշտոնական տվյալների՝ Եգիպտոսի հայ համայնքի թվաքանակը ներկայումս կազմում է 6 հազ.¹: Հարկ է հաշվի առնել մի կարևոր հանգամանք: Եգիպտոսում հայերը, ինչպես Միջին Արևելքի այլ երկրներում (Թուրքիա, Իրան, Լիբանան), ունեն ոչ թե ազգային, այլ կրոնական համայնքի կարգավիճակ: Պաշտոնական վերոհիշյալ վեց հազար թվաքանակը վերաբերում է միայն հայ առաքելականներին: Մինչդեռ հայ կաթողիկեները և ավետարանականները դուրս են մնում հաշվառումից:

Հայ կաթողիկեների թվաքանակը Եգիպտոսում կազմում է մոտ 1500 մարդ [5, էջ 42]: Եգիպտոսում կա նաև հայ ավետարանականների փոքրաթիվ համայնք: Հետևաբար, եթե հայ համայնքի թվաքանակի մեջ, բացի հայ առաքելականներից, ներառենք նաև հայ կաթողիկեներին և ավետարանականներին, ապա արժանահավատ է թվում նաև ոչ պաշտոնական աղբյուրների այն տեղեկությունը, համաձայն որի՝ Եգիպտոսում հայերի թվաքանակը կազմում է 7-8 հազ.²:

Եգիպտոսում հայերն ավանդաբար կենտրոնացած են եղել երկու քաղաքներում՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում: Մայրաքաղաք Կահիրեն, այնուամենայնիվ, հանդիսանում է հայկական շատ ավելի խոշոր կենտրոն: Այստեղի հայ համայնքը թե՛ մարդկանց և թե՛ կազմակերպչական կառույցների քանակով անհամեմատ գերակշռում է Ալեքսանդրիայի հայ համայնքին:

Կազմակերպչական կառույցները

Եգիպտոսում գործող հայկական կառույցները, ըստ պատկանելության, կարելի է բաժանել երկու մասի՝ համազգային կառույցների Եգիպտոսի մասնաճյուղեր և տեղական՝ Եգիպտոսի հայ համայնքի կողմից ստեղծված կառույցներ:

Միյուրոքում համազգային բնույթի կառույցներն ընդհանրապես, ըստ գործունեության ոլորտի, բաժանվում են մի քանի խմբերի՝ քաղաքական, հոգևոր-եկեղեցական, բարեգործական, մշակութային, մարզական:

- *Քաղաքական կառույցներ:* Եգիպտոսում հայկական ավանդական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Ռամ-

¹ Հայերը Եգիպտոսում, <http://egypt.mfa.am/hy/community-overview-eg/>

² Վերջին օրերի ցույցերն ավելի գոտեպնդեցին եգիպտահայերին, <http://www.lin.am/196946.html>

կավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ), Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը (ՄԴՀԿ), չունեն պաշտոնական գրանցում: Դրա փոխարեն նրանք այստեղ ներկայացված են իրենց ենթակա մշակութային և մարզական միությունների և մամուլի օրգանների միջոցով: Եգիպտոսում ՀՅԴ մամուլի միջոցն է «Հուսաբեր»-ը, ՌԱԿ-ինը՝ «Արև»-ը և ՄԴՀԿ-ինը՝ «Ջահակիր»-ը:

- *Հոգևոր-եկեղեցական կառույցներ:* Եգիպտոսում գործում են երեք հայկական համազգային եկեղեցիներն էլ՝ Հայ Առաքելական եկեղեցին, Հայ Կաթողիկե եկեղեցին և Հայ Ավետարանական եկեղեցին: Հայ Առաքելական եկեղեցու Եգիպտոսի թեմը ենթակա է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին: Այստեղ գործում է հինգ Հայ Առաքելական եկեղեցի: Հայ Կաթողիկե եկեղեցին Եգիպտոսում ունի երեք եկեղեցի: Ինչ վերաբերում է հայ ավետարանական համայնքին, ապա հայ ավետարանականները փոքր քանակով բնակվում են Ալեքսանդրիայում: Այստեղ գործում է մեկ Հայ Ավետարանական եկեղեցի:
- *Բարեգործական կառույցներ:* Եգիպտոսում գործում են ՀԲԸՄ-ը և Հայ օգնության միությունը (ՀՕՄ)՝ ի դեմս «Հայ կարիքի խաչ» կազմակերպության¹:
- *Մշակութային կառույցներ:* Մշակութային բնույթի համազգային կազմակերպություններից Եգիպտոսում գործում է Համազգային հայ կրթական և մշակութային միությունը (Համազգային):
- *Մարզական կառույցներ:* Եգիպտոսում գործում է Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ)՝ ի դեմս «Արարատ» և «Նուբար» ակումբների:

Բացի համազգային կազմակերպությունների Եգիպտոսի մասնաճյուղերից, այստեղ գործում են տեղական՝ հայ համայնքի կողմից ստեղծված և ղեկավարվող կազմակերպություններ: Դրանք են դպրոցները, լրատվամիջոցները, հասարակական-մշակութային միությունները և այլն: Եգիպտոսի հայկական դպրոցները երեքն են: Ինչ վերաբերում է մամուլի միջոցներին, ապա, բացի կուսակցական օրգաններ հանդիսացող վերն արդեն հիշատակված թերթերից, Եգիպտոսի հայ համայնքն ունի նաև ամենօրյա մեկժամանոց

¹ Եգիպտոսի հայ համայնք, <http://old1.hayernaysor.am/1360068671>

ռադիոժամ՝ հայերեն լեզվով: Եզիպտոսում գործում են նաև հայկական հասարակական-մշակութային միություններ, ինչպես, օրինակ, «Տիգրան Երկաթ», Հայ գեղարվեստասիրաց միություն, «Հուսաբեր» մշակութային միություն և այլ կառույցներ:

Որոշ վերապահումներով Եզիպտոսում գործող հայկական կառույց կարելի է համարել նաև Կահիրեի համալսարանի բանասիրության ֆակուլտետի կազմում 2007թ. դեկտեմբերի 13-ին բացված Հայագիտական կենտրոնը: Այն հիմնվել է Եզիպտոսում ՀՀ դեսպանության և եզիպտահայ համայնքի ջանքերով, ֆինանսավորվում է ՀՀ կառավարության և եզիպտահայ կառույցների կողմից: Հայագիտական կենտրոնն իրականացնում է ինչպես կրթական, այնպես էլ գիտահետազոտական գործունեություն, կազմակերպում է միջազգային գիտաժողովներ, հրատարակում հայագիտական աշխատություններ, համագործակցում Հայաստանի գիտական կառույցների հետ: Կենտրոնի հետաքրքրության ոլորտում են գտնվում հայոց լեզուն, հայոց պատմությունը, հայ-արաբական հարաբերությունները և այլն [5, էջ 39, 41-42]:

Հարկ է նշել, որ արտագաղթի հետևանքով Եզիպտոսի հայ համայնքի թվաքանակի նվազումը բացասական ազդեցություն է թողնում նաև համայնքային կառույցների վրա: Վերջիններս դրա արդյունքում թուլանում են, իսկ երբեմն էլ փակվում: Օրինակ՝ արտագաղթի հետևանքով Կահիրեի երբեմնի հայ ավետարանական համայնքը գրեթե ամբողջությամբ սպառվել է, որի հետևանքով դադարել է գործել տեղի Հայ Ավետարանական եկեղեցին [6]: Արդյունքում՝ ներկայումս Եզիպտոսի հայ ավետարանական համայնքը սահմանափակվում է միայն Ալեքսանդրիայի փոքրաթիվ հայ ավետարանականներով և Իրաքի հայ ավետարանականների հետ միասին մտնում է Մերձավոր Արևելքի թույլ հայ ավետարանական համայնքների խմբի մեջ [7]:

Արդի դրությունը

Արդի փուլում հայ համայնքն իր սակավաթվության և թույլ ներուժի հետևանքով լուրջ գործոն չէ Եզիպտոսի կյանքի քաղաքական և այլ բնագավառներում:

Դրանով էր պայմանավորված այն, որ 2011 թվականից արաբական երկրների կյանքը փոթորկած «արաբական գարունը» Եզիպտոսի հայ համայնքի վրա էական ազդեցություն չունեցավ: Վերջինս չէր մասնակցում այդ իրադարձություններին՝ գտնվելով չեզոք դիրքերում: Միակ ազդեցությունն

այն էր, որ Եգիպտոսի ընդհանուր տնտեսական վիճակի վատթարացման հետևանքով ընկավ նաև եգիպտաբնակ հայերի բարեկեցության մակարդակը: Մասնավորապես, Ազգային առաջնորդարանը դժվարությունների հանդիպեց իրեն պատկանող հողային կալվածքների վաճառքից և վարձակալությունից հասանելիք գումարները ստանալու հարցում¹:

Հայ համայնքի համար մտահոգիչ հանգամանք էին Եգիպտոսի նախկին նախագահ Հոսնի Մուբարաքի հրաժարականից հետո «Մուսուլման եղբայրներ» կուսակցության իշխանության գալը և նրա առաջնորդ Մուհամեդ Մուբսիի՝ Եգիպտոսի նոր նախագահ ընտրվելը: «Մուսուլման եղբայրների» իշխանությունը կարող էր նշանավորվել Եգիպտոսում արմատական իսլամի վերելքով, որը կարող էր ստանալ հակաքրիստոնեական բնույթ և դրսևորվել քրիստոնյաների նկատմամբ հալածանքների և խտրականության քաղաքականությամբ: Դրա նախանշաններն արդեն երևում էին Մուհամեդ Մուբսիի կառավարման կարճ ժամանակահատվածում: Սակայն Եգիպտոսում տեղի ունեցած նոր հեղաշրջման արդյունքում Մուհամեդ Մուբսիի հեռացումը իշխանությունից (2013թ. հուլիսի 3-ին) և այդ երկրում հարաբերական կայունության հաստատումը փարատեցին այդ մտահոգությունները, քանի որ իշխանության եկած նոր ուժերն առաջնորդվում են անկախ կրոնական տարբերություններից օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքով:

Ներկայումս Եգիպտոսի հայ համայնքի գործունեությունը հիմնականում սահմանափակվում է համայնքային կյանքով, համահայկական միջոցառումներին մասնակցությամբ և Հայաստանի հետ կապերով:

Համայնքային կյանքը կազմակերպվում է.

- մշակութային և մարզական միությունների կողմից կազմակերպվող միջոցառումներով,
- հայկական կառույցներում տարբեր միջոցառումների՝ գրքերի շնորհանդեսների, ավարտական հանդեսների և այլնի կազմակերպմամբ²,

¹ «Համոզուած եմ իմ տարած աշխատանքով, եթէ նոյնիսկ տարակարծութիւն կը ծագէր» - Գեորգ Երզնկացեան (Հարցազրոյց), <http://egypt.mfa.am/hy/events/item/2011/12/08/kokointerview/>

² Տե՛ս, օրինակ, Մելքոնեան մանկապարտէզի ամավերջի հանդէսը՝ բովանդակալից եւ ներկայանալի, <http://egypt.mfa.am/hy/events/item/2012/05/26/Melkoniankg/>;

ՀԲԸՄ Գահիրէ կը պատուէ «Տեղեկատու» ամսագրի նախորդ խմբագրին, <http://egypt.mfa.am/hy/events/item/2012/05/13/HGBUhonoringAraxy/>

- համազգային տոների՝ Հայաստանի անկախության տոնի (սեպտեմբերի 21), Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման օրվա (ապրիլի 24) և այլնի նշմամբ¹:

Համայնքային կյանքի աշխուժացմանն իր նպաստն է բերում Եգիպտոսում ՀՀ դեսպանությունը՝ նախաձեռնելով տարբեր միջոցառումներ և աջակցելով շատերի իրականացմանը²:

Համազգային միջոցառումներից եգիպտահայ համայնքը մասնակցում է Հայրենիք-Սփյուռք համաժողովներին, Համահայկական խաղերին, համահայկական մշակութային փառատոներին, համահայկական համաժողովներին և այլն: Օրինակ՝ եգիպտահայ թերթերի և հայկական ռադիոժամի ներկայացուցիչները մասնակցում են Հայ լրագրողների համաժողովներին:

Հայաստանի հետ կապերը դրսևորվում են.

- եգիպտահայ աշակերտների՝ ուսման նպատակով Հայաստան այցելությամբ,
- եգիպտահայ դպրոցների մանկավարժների մասնակցությամբ ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպվող սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրերին,
- եգիպտահայ պատանիների մասնակցությամբ ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից ամեն տարի կազմակերպվող «Արի տուն» ծրագրին,
- եգիպտահայ մշակութային միությունների մասնակցությամբ Հայաստանում կազմակերպվող մշակութային ձեռնարկներին և այլն:

Հոկտեմբեր, 2014թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Հովյան Վ., Հայկական սփյուռքի փոխակերպումը. մարտահրավերներ և հնարավորություններ, «Գլոբուս», 2013թ., թիվ 5, էջ 43-47:
2. Ավագյան Քնարիկ, Հայրենադարձության կազմակերպման նախապայմանները և գործընթացը Եգիպտոսում (1947-1948թթ.) (Եգիպտահայ Գառնիկ Սվազյանի ներգաղ-

¹ Տե՛ս, օրինակ, Հայոց Ցեղասպանության 98-րդ տարելից,

<http://egypt.mfa.am/hy/news/item/2013/04/24/genocide98/>

² Տե՛ս, օրինակ, Հայոց ցեղասպանության նվիրված միջոցառում Կահիրեի Ռոթարի ակումբում,

<http://egypt.mfa.am/hy/news/item/2013/04/22/rotarygenocide/>; «Սումգայիթ. Սովորական

ցեղասպանություն» ֆիլմի ցուցադրություն ՀՀ դեսպանությունում,

<http://egypt.mfa.am/hy/news/item/2013/03/18/sumgaitdocumentary/>

թի գաղափարախոսության դասերը), «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, Լիմուշ, 2009, էջ 137-138:

3. *Գասպարյան Ս.*, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 246:
4. «Հայ սփյուռք» հանրագիտարան, խմբագիր՝ Այվազյան Հ. և ուր., Երևան, 2003, էջ 154:
5. *Դանիելյան Է.Լ.*, Հայաստան-Եգիպտոս. հայագիտական կամուրջ, «Գլոբուս. ազգային անվտանգություն», 2011, թիվ 1:
6. *Հովյան Վ.*, Եգիպտոսի հայ ավետարանական համայնքը, «Գլոբուս. ազգային անվտանգություն», 2011, թիվ 3, էջ 44:
7. *Հովյան Վ.*, Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքները, «21-րդ ԴԱԸ», 2012, թիվ 4, էջ 98-99:

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Վահրամ Հովյան

Ամփոփագիր

Հոդվածում համառոտ անդրադարձ է կատարվել եգիպտահայ համայնքին, նրա անցյալին ու ներկային, համազգային կառույցներին ու նրանց գործունեությանը, Հայաստանի հետ եգիպտահայ համայնքի կապերին:

АРМЯНСКАЯ ОБЩИНА ЕГИПТА

Ваграм Овян

Резюме

В статье вкратце представляется армянская община Египта, ее прошлое и настоящее, общинные структуры и их деятельность, связи с Арменией.

ARMENIAN COMMUNITY OF EGYPT

Vahram Hovyan

Resume

The article provides a brief review on the Armenian community of Egypt, its past and present realities, pan-national structures in the country and their activities, as well as relations of the Egyptian Armenian community with Armenia.

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎՐԱ

Արթուր Աթանեսյան, Մարիա Զասլավսկայա, Արեմ Մկրտչյան, Գագիկ Թումանյան****

Բանալի բառեր՝ միգրացիա, համայնքներ, հաղորդակցում, վերազգային միգրացիոն ցանցեր:

Որոշ տեսամեթոդական մոտեցումներ

Ժամանակակից հասարակությունները բնութագրվում են մի շարք հատկություններով, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման ազդեցության արդյունքում առաջ եկող սոցիալական հաղորդակցման միջնորդավորվածությամբ և դրանով իսկ՝ մարդկանց միջև հարաբերությունների փոխակերպմամբ: Ժամանակակից հասարակությունների համար բնութագրական է դառնում ատոմիզացիան՝ մարդկանց միջև սոցիալական հեռավորության մեծացումն ու անհատական շահերի գերակայությունը կոլեկտիվ գործունեության և շահերի հանդեպ: Այս ամենի հետևանքով փոխակերպվում է ավանդական համայնքը՝ որպես հայ հասարակության և հայկական ինքնության պահպանման կարևորագույն օղակ: Մյուս կողմից, արդի Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների արդյունքում շարունակվող աշխատանքային միգրացիան և արտագաղթը՝ մշտական բնակման նպատակով, նույնպես փոխակերպում են համայնքային սոցիալական կապերն ու հարաբերությունները Հայաստանի ներսում՝ դրանք տեղավորելով Հայաստանից դուրս, ժամանակակից հաղորդակցման մեթոդների օգտագործման միջոցով ստեղծելով վերազգային (տրանսազգային) հաղորդակցման, կապերի և փոխհարաբերությունների նոր՝ վերազգային մակարդակ:

* ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.:

** ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, ս.գ.դ.:

*** ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ասպիրանտներ:

Վերոնշյալ սոցիալական գործընթացներն իրենց բնույթով փոխակերպում են հայաստանյան հասարակության ներսում տեղի ունեցող սոցիալական կապերն ու հարաբերությունները՝ դրանք դարձնելով վերազգային, ընդգրկելով Հայաստանից դուրս գտնվող հին և նորաստեղծ հայկական համայնքները:

Ընթացիկ միգրացիոն հոսքերը հատկանշվում են համաշխարհային վերազգային էթնիկ տարածություններ ձևավորելու ունակությամբ: Նման տարածությունների ձևավորումը բնորոշ է հայերին [1, p. 69-85], որոնց կանոնավոր միգրացիոն տեղաշարժերը պատմականորեն ուղեկցվել են տարածաշրջանային անկայունություններով, ինչպիսիք են պատերազմական իրավիճակները և տարատեսակ այլ կոնֆլիկտները: Պատմական Հայաստանից և դեպի պատմական Հայաստան ուղղություններով միգրացիոն գործընթացների համար խթան հանդիսացած խոշորամասշտաբ պատմական իրադարձությունների շարքում, թերևս, ամենաակնեղը 19-րդ դարի վերջին տասնամյակը և 20-րդ դարի առաջին տասնամյակը ներառող՝ Օսմանյան կայսրության կողմից իրագործված Հայոց ցեղասպանությունն է, ինչպես նաև 20-րդ դարի վերջում ԽՍՀՄ փլուզումը, որը հանգեցրեց տնտեսական, սոցիալական, քաղաքական համակարգերի կազմաքանդմանը՝ առաջ բերելով նոր միգրացիոն հոսքեր: Հայկական վերջին միգրացիոն ալիքները դեռևս գործում են, որոնց հիման վրա կառուցակցված նոր միգրացիոն ցանցերն ու ճյուղերը ներկայումս գործառնման փուլում են:

Վերազգային ցանցերի ուսումնասիրության մոտեցումներից մեկը ապատարածականացման մոտեցումն է, որը կիրառվում է էթնիկ խմբերի [2] մոբիլության նկարագրության համար և դառնում է համախմբման նոր ձևերի (ներառյալ հին ձևերի փոփոխությունը), ինչպես նաև սոցիալական ցանցերի կառուցակցման հիմք: Սոցիոլոգիական հետազոտությունները, որոնք միգրացիան դիտարկում են որպես միգրացիոն տարածությունների կառուցակցման հիմնարար եղանակ, կիրառելի են նաև վերազգային միգրացիոն ցանցերի դեպքում [3]:

Սոցիալական համախմբվածության հայեցակարգը հաճախ կիրառվող մոտեցումներից է, որն օգնում է հասկանալ վերազգային սոցիալական ցանցերի գործառնման ներքին մեխանիզմները: Սոցիալական համախմբվածու-

թյունը սահմանող և կոնցեպտուալացնող կարևոր մոտեցումները մշակվել են Ջ.Ջենսոնի և ավելի ուշ՝ Փ.Բեռնարդի կողմից, ովքեր վեց բաղկացուցիչ տարր են համաբաշխում առանձնացված երեք կատեգորիաներում.

1. տնտեսական (ներառվածություն և հավասարություն),
2. քաղաքական (լեզվտիմություն և մասնակցություն),
3. սոցիոմշակութային (հանդուրժողականություն և պատկանելության գիտակցում) [4]:

Այնուհետև, ինչպես նշում են Բաուվայսը և Ջենսոնը, սոցիալական կապիտալի և սոցիալական ցանցերի կարևոր բաղկացուցիչներից մեկը համայնական և ընտանեկան միավորների միջև ծավալվող փոխգործողությունն է, ինչպիսին են, օրինակ, քաղաքացիական ներգրավվածությունը, միութենական գործունեությունը և համատեղ նախաձեռնությունների հետ կապված խնդիրների լուծման դյուրինությունը [5]:

Միգրացիոն ցանցերի վերազգային գործառնության ուսումնասիրման ժամանակակից մոտեցումներից մեկը սփյուռքի ուսումնասիրություններում հայրենիք-սփյուռք կապի դիտարկումն է՝ որպես միգրացիոն ցանցի գործառնման արդյունավետության չափման մոտեցում: Այս համատեքստում կարևորվում են հայրենիքի և ձևավորված սփյուռքի (արտերկրում գործող տարբեր ազգային համայնքների) միջև տնտեսական, քաղաքական և մշակութային ազդեցությունները [6, p. 29-59]:

Այս իմաստով առանձին հետազոտություններում հատուկ ուշադրության է արժանացել այն, թե արդյոք ուղարկող երկիրը միգրանտների հին և նոր սերունդների կողմից դեռևս ընկալվում է որպես բնօրրան, մասնավորապես, երբ համեմատության եզրեր ենք անցկացնում միգրանտների ծագման երկիր-հայրենիքի և այն երկրի միջև, որտեղ հին և նոր սերնդի միգրանտները փաստացիորեն ապրում են [7, p. 117-137]:

Միգրացիոն ցանցերի և սփյուռքը ներկայացնող համայնքների ուսումնասիրությանը նվիրված ժամանակակից հետազոտությունները մեծ տեղ են հատկացնում ուղարկող երկրի տնտեսության և զարգացման վրա սփյուռքի ազդեցության դիտարկմանը [8, p. 154-171; 9, p. 549-599]: Այսպես, զոյություն ունեն ուղարկող երկրի վրա միգրացիոն ցանցերի ազդեցության որոշ առանձնահատկություններ, որոնք կարող են պայմանավորել ուղարկող երկրի

տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքը և դրանց հետ կապված գործընթացները՝ դառնալով միգրանտների ծագման երկրի տնտեսական քաղաքականության և այլ ձեռնարկումների խթանիչներից մեկը [10, p. 1-90; 11, p. 76-90]: Որոշ դեպքերում ուղարկող պետությունն իր տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով մշակում է հատուկ բարենպաստ քաղաքականություն և ռազմավարություն՝ արտերկրում գործող հայրենակիցների համայնքներին իր զարգացման մասնակիցը դարձնելու նպատակով [12, p. 75-95]:

Միգրացիոն ցանցերը և նրանց գործառույթները, հանդիսանալով հիմնականում ընդունող երկրի միգրացիոն քաղաքականությանը վերաբերվող քննարկումների խնդրո առարկա, գտնվում են պետական որոշ մարմինների, ինչպես նաև միգրացիոն խնդիրների շուրջ գործառնող միջազգային մասնագիտացված կազմակերպությունների ուշադրության կենտրոնում [13, p. 1-8]:

Արդի ուսումնասիրությունների ուղղություններից մեկն է միգրացիոն գործընթացների հետևանքով արտերկրում ձևավորված ազգային համայնքների դերակատարման խնդիրը ծագման երկրի քաղաքական կյանքում [14, p. 281-296]: Մասնավորապես, ուսումնասիրությունների մի մասում քննարկվում է միգրանտների հիմնական բնակության երկրի և ծագման երկրի միջև քաղաքական հարաբերությունների զարգացմանը նպաստելու հանգամանքը, որտեղ ազգային համայնքները դիտվում են որպես միջնորդ բնակության և ծագման երկրների միջև: Որոշակի պայմաններում ազգային համայնքն արտերկրում ծագման պետության համար կարող է դառնալ միջոց՝ այլ պետություններում իր շահերն ամրապնդելու, արտաքին քաղաքական նպատակներն իրականացնելու համար [15, p. 232-252, 16, p. 103-126]: Սփյուռքի համայնքների ուղղությամբ իրականացված հանգամանալից ուսումնասիրությունների թվում են նաև ընդունող երկրում սփյուռքի ներկայացուցիչների կողմից էթնիկ ցանցերի միջոցով իրագործվող քաղաքական լոբբինգի վերաբերյալ դիտարկումները [17, p. 340-357]:

Հետազոտությունների այդ ուղղության մեջ էական դեր ունեն Հայաստան-Սփյուռք ուսումնասիրությունների համապատասխան գիտական մշակումները: Տվյալ հարցի վերաբերյալ առկա մոտեցումների շարքում կարելի է առանձնացնել հայկական սփյուռքի՝ որպես ՀՀ և հայ ազգային շահերն արտերկրում պաշտպանող ինստիտուցիոնալ համակարգի, գործառնմանն ուղղված ուսումնասիրությունները, ինչպես նաև ՀՀ տնտեսական ու քաղա-

քական կյանքում հայկական սփյուռքի ունեցած դերին և հնարավորություններին նվիրված հետազոտությունները [18, p. 503–512; 19; 20, p. 15–32; 21]:

Սույն հետազոտության¹ նպատակն է բացահայտել միգրացիոն գործընթացների հետևանքով հայաստանյան համայնքների ներսում անդամների միջև ավանդական սոցիալական փոխկապվածությունների, ներքին համայնքային սոցիալական ցանցերի փոխակերպման, վերազգային միգրացիոն ցանցերի ձևավորման և գործառնման առանձնահատկությունները:

Հետազոտության հիմնական խնդիրն է բացահայտել հայկական վերազգային միգրացիոն ցանցի երկու օղակների փոխկապվածության բնույթը և վերհանել այն իրական-գործառնական և սիմվոլիկ-պայմանական նպատակները, որոնք միավորում են միգրացիոն ցանցի ներքին և արտաքին օղակների ներկայացուցիչներին և նպաստում ցանցի գործառնմանը: Ակնկալվել է բացահայտել աշխատանքային միգրանտների կապը ՀՀ ներհամայնքային խնդիրների լուծման հետ, ազդեցությունը Հայաստանի համայնքների բնակիչների վրա: Կարևորվել է Հայաստանի համայնքներում առկա ընկալումների և գնահատումների բացահայտումը՝ այդ համայնքների բնակիչների կարծիքն իրենց հարազատների, բարեկամների, համազուգուցիների մասին, որոնք ապրում և աշխատում են արտերկրում և կարող են դիտվել որպես ոչ միայն ավանդական տնտեսական, այլև քաղաքական, սոցիալ-հոգեբանական աջակցության աղբյուր իրենց ներքին խնդիրների լուծման համար: Ուշադրություն է դարձվել ՀՀ համայնքների և արտերկրում հայկական միգրացիոն ցանցերի ինտիտուցիոնալ և անհատական ներկայացուցիչների միջև կապի և հաղորդակցման միջոցների, այդ կապի հաճախականության, կապն իրականացնելու նպատակների և դրդապատճառների բացահայտմանը, որի օգնությամբ հնարավոր է նկարագրել վերազգային միգրացիոն ցանցերի գործառնման ներքին մեխանիզմները, եղանակները:

Հետազոտության ընթացքում կիրառվել է հայաստանյան վերազգային միգրացիոն ցանցերի տեղային ենթացանցերի համալիր սոցիոլոգիական հետազոտության մեթոդական հարացույցը՝ ներառյալ կիսաձևայնացված հար-

¹ Սույն հոդվածում ներկայացված է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի կողմից հատկացված 13-5D408 գիտական դրամաշնորհի շրջանակներում (2013-2015թթ.) իրականացված ուսումնասիրության արդյունքների մի մասը:

ցազրույցների, խորին հարցազրույցների և առանցքային տեղեկատուների հետ հարցումների մեթոդները: Որպես հետազոտության գլխավոր համախմբություն սահմանվել են ՀՀ և ԼՂՀ այն համայնքները, որոնք առավել ներգրավված են վերազգային գործընթացներում: Ընտրանքի ծավալը կազմել է 782 տնային տնտեսություն, որն ապահովում է միջինը 4,2% ընտրանքի սահմանային սխալը: Իրականացվել է քառաստիճան կլաստերային շերտավորված ընտրանք: Տնային տնտեսությունների բաշխումն ըստ բնակավայրերի իրականացվել է շրջանի (մարզի) բնակչության և բնակավայրի մեծությանն ուղիղ համեմատական: Ընտրանքի չորրորդ աստիճանում հարցվողի ընտրությունն իրականացվել է համապատասխան «ունիկալ հարցվողի» ռազմավարությանը, այսինքն՝ ընտրվել է տնային տնտեսության առավել տեղեկացված ներկայացուցիչը:

Հետազոտության ընթացքում իրականացվել է նաև շուրջ 72 խորին հարցազրույց Վայոց ձորի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի վարչական շրջանների, ինչպես նաև ԼՂՀ համայնքների բնակիչների, այդ թվում՝ 12 տեղային համայնքների գյուղապետերի՝ որպես առանցքային տեղեկատուների հետ:

Հայաստանյան համայնքները և էմիգրացիան

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակչության զգալի մասն անորոշ պատկերացումներ ունի իր համայնքի ապագայի վերաբերյալ, ինչը պայմանավորված է առկա սոցիալ-տնտեսական խնդիրներով և դժվարություններով: Հարցվածները հիմնականում համանման պատասխաններ են տվել իրենց համայնքի հեռանկարների վերաբերյալ.

«Ես չեմ կարող այս հարցին պատասխանել, մի բան, որ չկա, ես ոնց կարող եմ ասել՝ կփոխվի՞, թե՞ չի փոխվի: Հնարավոր էլ չի, որ փոխվի: Եթե մի մարդ աշխատանք չունի, նա չի կարող հետազգայի մասին մտածել: Համայնքի վիճակն էլ պիտի գնալով վատանա: Քանի էրեխեքը մեծացան, էնքան կարիքները շատանալու են»:

«Էս վիճակով ես մեր երեխաների համար ապագա չեմ պատկերացնում: Եթե մի երեխան աշխատանք չունի, մի գործ չունի, ի՞նչ ապագա: Նա ի՞նչ կարող է իր էրեխին սովորեցնել»:

Առանցքային տեղեկատուները նշել են նաև, որ տեղական համայնքներում արտագաղթի հիմնական պատճառը ոչ թե աշխատանքի պակասն է, այլ այն հանգամանքը, որ առաջարկվող աշխատանքային պայմաններն այստեղ անշահավետ են:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների շրջանում ապագայի նկատմամբ ընկալումները որոշակիորեն կապվում են միգրացիայի հետ: Համայնքի ապագայի տեսլականը հարցվածների պատկերացումներում, ի թիվս այլ գործոնների, ամբողջանում է նաև սպասելիքներով, որոնք, ըստ վերջիններիս, կապված են արտաքին միգրացիոն ցանցում ընդգրկվածների ցուցաբերած աջակցության հետ, մասնավորապես կարևորվում է ֆինանսական օժանդակությունը:

Պատասխանելով հետևյալ հարցին. *«Եթե հնարավորություն ունենաք, կսկսե՞ք Ձեր համայնքից: Հիմնավորե՞ք Ձեր պատասխանը»*, հարցվածներից շատերը նշեցին, որ իրենց ապագան տեսնում են Հայաստանում, սակայն հավելեցին նաև, որ խնդիրը իրավիճակային բնույթ ունի և կախված է իրենց արտաքին ռեսուրսներից և ցանցերից: Հարցվածների պատասխաններից կարելի է եզրակացնել, որ եթե նրանք արտերկրում աշխատող և գումար ուղարկող որևէ ազգակից չունենան, ապա տեղի համայնքն ապագա չի ունենա: Մյուս կողմից, տեղացիներից շատերը ցանկություն էին հայտնում մնալ և աշխատել իրենց համայնքում, բայց վճռորոշ գործոնը, որն ազդում է նրանց գնալու կամ մնալու որոշման վրա, դա համապատասխան աշխատանքն է. այստեղ հատկանշական է մեջբերել հարցվածներից մեկի պատասխանը.

«Ոչ, ես սիրում եմ իմ այստեղի աշխատանքը, ես նախընտրում եմ աչքերել գյուղում իմ հողի վրա, իմ տան կողքին, ես ուրիշ տեղ չունեմ գնալու»:

Խոսելով համայնքային կյանքի և համայնքի ներսում ընկալումային փոխակերպումների մասին՝ պետք է նշել, որ ըստ համայնքի բնակիչների՝ վերջին փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել գլխավորապես սոցիալ-տնտեսական, սոցիալ-կառուցվածքային, բարոյական և հոգեբանական մակարդակներում: Նշենք, որ այժմ հարցվողներին առավել հուզում են տնտեսական և միջավայրի բարեկարգվածության խնդիրները, իսկ քաղաքական և մշակութային հիմնախնդիրները պակաս ուշադրության են արժանանում: Ինչպես նշում էին առանցքային տեղեկատուները, ԽՍՀՄ փլուզումից

հետո համայնքային կյանքում տարբերությունը հարուստների և աղքատների միջև է՛լ ավելի է ընդգծվել, ինչը պայմանավորված էր հետխորհրդային հասարակություններում ձևավորված նոր սոցիալ-տնտեսական հարաբերություններով: Ինչպես նշեց հարցվողներից մեկը.

«Գյուղական բնակչությանը կարելի է բաժանել երկու խմբի՝ հարուստներ և աղքատներ: Հարուստներն ավելի են հարստանում և առանձնանում մյուսներից՝ ունենալով իրենց կարգավիճակին հարիր սիմվոլիկ բնութագրիչներ, ինչպիսիք են իրենց տների բարձր դարպասները, որոնք բաժանում են այդ տները համայնքի մյուս տներից և թույլ են տալիս նրանց չշփվել հարևանների հետ»:

Հարցվածների մեծ մասը, հետխորհրդային փոխակերպումները կապելով ընդունված արժեհամակարգի և, մասնավորապես, բարոյականության քայքայման ու կենսական չափորոշիչների հետընթացի հետ, կարծիք է հայտնել, որ տեղային համայնքներում հետխորհրդային փոխակերպումները գլխավորապես բացասական հետևանքներ են ունեցել: Պատասխանելով հարցին, թե ինչ տարբերություններ կան ներկայիս գյուղացու և այն գյուղացու միջև, որն ապրել է այստեղ նախկինում, հարցվածներից շատերը միանման պատասխաններ են տվել: Մասնավորապես, ինչպես հարցվածներից մեկը նշեց.

«Շատ տարբերություններ կան, ներկայումս շատ խնդիրներ են առաջացել, որոնք չենք ունեցել նախկինում: Նախկինում կյանքն ավելի բարվոք էր, բայց հիմա ամեն բան դժվարացել է, աշխատանք չկա: Այս փոփոխություններն ամենուրեք իրենց ազդեցությունն են թողել, գործազրկությունը բացասական անդրադարձ է ունեցել տեղացիների բնավորության վրա»:

Խոսելով արտագաղթի հիմքում ընկած պատճառների մասին՝ հարցվածներն առաջին հերթին նշել են տնտեսական շարժառիթները, որոնց թվում են գյուղատնտեսական արտադրանքի իրացման անբարենպաստ պայմանները, տեղական շուկայի փոքր լինելը, ՀՀ կառավարության կողմից տրամադրվող սահմանափակ հնարավորությունները: Ինչպես հարցվածներից մեկը նշեց. «Համայնքի բնակիչներից շատերը հիմա մեկնում են համայնքից: Դա պայմանավորված է աշխատատեղերի պակասով: Մի շնչի համար գոնե քառասուն-հիսուն հազար դրամ պիտի ունենալ, որ հնարավոր լինի գոյատևել: Դրա համար էլ մարդիկ ձգտում են դեպի դուրս: Եթե ընտանիքից մեկը գոնե հարյուր հիսուն հազար եկամուտ ունենա, չի լքի գյուղը»:

Հարցվածներից շատերը նշում էին, որ միգրացիոն գործընթացների պատճառով զգացվում է բնակչության որակական անկում, ինչը համայնքի ներսում գուգորդվում է սոցիալական և կառուցվածքային փոփոխություններով: Ինչպես հենց հարցվողներն են արտահայտվում, փոխվում է համայնքի «կառուցվածքային որակը»: Մասնավորապես, համայնքի առավել նախաձեռնող բնակիչները դիմում են միգրացիայի, իսկ մնացած բնակիչները լավագույնս չեն ներկայացնում համայնքը, քանի որ նրանք նախկինում երբեք չեն ունեցել կարևոր դեր ու գործառույթներ համայնքում: Արդյունքում՝ համայնքի կերպարը փոխվում և անգամ կորչում է: Ինչպես այս առնչությամբ նշել է հարցվածներից մեկը.

«Բոլորը գնացին: Գյումրին արդեն այն չէ, ինչ առաջ էր: Բոլոր լավ մարդիկ գնացին, իսկ նրանք, ովքեր մնացել են, ուղղակի չունեն ֆինանսական միջոցներ արտասահման տեղափոխվելու համար»:

Հատկանշական է նաև, որ որոշ շրջաններում (օրինակ՝ Գեղարքունիքում) միգրացիան ընկալվում է որպես առավելապես բացասական գործոն, քանի որ այն բացասաբար է ազդում մարդկային ռեսուրսների վրա: Այս տեսակետը լայնորեն կիսում են համայնքների տարեց ներկայացուցիչները, ովքեր պնդում են, որ միգրացիան փոխում է մարդկանց՝ նրանց դարձնելով ավելի հիասթափված, ծուլ և թուլացնում է մարդկանց ցանկությունը՝ աշխատել իրենց հողում, իրենց երկրի համար:

Շատ հարցվողներ հաստատել են, որ արտագաղթի հետևանքով իրենց տեղական համայնքները կորցրել են որակյալ աշխատողներ և մասնագիտացված աշխատանքային ռեսուրսներ, և այս փոփոխություններն ուղղակիորեն ազդում են լոկալ ներուժի վրա.

«Տեղացին աշխատասեր է, բայց հենց լավ արդյունք չի ստանում՝ հուսահատվում է և թողնում-հեռանում է»:

«Մեր գյուղացիները ստեղծող, աշխատող, արարող մարդիկ են: Վատն էլ այն է, որ ստիպված թողնում-գնում են այստեղից»:

Բացի այդ, հարցվողների կողմից նշվեց, որ համայնքի առավել մոբիլ և ակտիվ անդամների էմիգրացիան իր անմիջական բացասական ազդեցությունն ունի նաև համայնքային խնդիրների լուծման և որոշումների ընդունման վրա: Քանի որ նվազ ակտիվ և նվազ հմուտ բնակչությունն է դառնում մեծա-

մասնություն, համայնքի գործերի կազմակերպման հարցում լրացուցիչ խնդիրներ են ծագում: Մարդկային ռեսուրսների բացասական տեղաշարժն ազդում է տեղական կառավարման, ինչպես նաև տեղական տնտեսության վրա:

Հետաքրքիր է նշել համայնքների աշխատանքային շուկաների վրա միգրացիոն գործընթացների հնարավոր ազդեցության մասին, երբ միգրացիոն ցանցը հնարավորություն է տալիս համեմատել համայնքում և արտերկրում առաջարկվող միևնույն տեսակի աշխատանքի եկամտաբերությունը: Շատ դեպքերում համայնքի անդամները միգրացիոն ցանցերի միջոցով մշտապես տեղեկացվում են Հայաստանից դուրս առաջարկվող հաստիքների և հնարավորությունների մասին, որոնք հաճախ ներկայացվում են որպես շահավետ (անգամ եթե դա օբյեկտիվորեն այդպես չէ): Ինչպես նշեց հարցվածներից մեկը.

«Միշտ ասում են՝ աշխատատեղ չկա, մարդիկ գնում են աշխատելու: Բայց, օրինակ, գյուղում հովիվ ու նախրապան չունենք ու այդ պատճառով անասուն չենք կարողանում պահել: Գնացել ենք եզդիներին խնդրել, երկու ընտանիք ենք բերել գյուղ, որ մեզ մոտ հովիվ ու նախրապան աշխատեն: Կամ՝ մեկին առաջարկեցինք գյուղի աղբահանությամբ զբաղվել՝ սարսափելի վիրավորվեց, բայց արի ու տես, որ դրսում այդ նույն աշխատանքը կկատարեն: Անգամ անասնապահությունից են հրաժարվում: Հողերն էլ քիչ են վարում վառելիքի թանկացման պատճառով»:

Մյուս կողմից, ինչպես նշեց մեկ այլ հարցված գյուղապետ.

«Կենսականն այսօր միայն նյութականն է, որն օրեցօր պակասում է: Ով աշխատող ձեռք ունի՝ հեռանում է, գյուղում մնացել են անձարները: Այս հսկայական տները, որ տեսնում եք, դատարկ են: Մրանց տերերը Ռուսաստանում են ապրում: Առիթից առիթ են գալիս: Նյութական միջոցներն այսօր միայն Ռուսաստանից են գալիս, արտագնա աշխատանքի միջոցով»:

Հատկանշական է, որ մեկնաձևերի մեջ կան այնպիսի միգրանտներ, որոնք արտասահմանյան աշխատաշուկայում հասնելով որոշակի կարգավիճակի և ունենալով որոշակի ազդեցություն համայնքի բնակիչների վրա՝ նպաստում են սեզոնային միգրացիոն հոսքերում վերջիններիս ներգրավմանը: Տեղական համայնքներում այդպիսի նախաձեռնող անձանց անվանում են «հրավիրողներ» կամ «տանողներ»: Վերջիններս, արտերկրի աշխատաշուկայում տիրապետելով որոշակի ռեսուրսների, նախընտրում են աշխատուժ

ներկրել այն համայնքից, որից մեկնել են և որի բնակիչների հետ կապված են ազգակցական կամ այլ մերձավորական կապերով (հարևան, ընկեր և այլն): Այս երևույթը համայնքի բնակիչների ընկալումներում միարժեքորեն համարվում է երկուստեք օգտակար գործընթաց:

«Մենք գյուղից մարդ ունենք, ով տարեկան տասը հոգու տանում է, իսկ մնացածները տարբեր մարդկանց մոտ են գնում: Հիմնականում սեզոնային աշխատանքի են մեկնում, որ օգնեն հարազատներին»:

«Ավելի լավ աշխատանք գտնելու նպատակով մեկնածներից ոչ ոք իրապես չի օգնում իր համայնքին առաջնային խնդիրների լուծման համար: Երբեմն, երբ նրանց ընկերներից մեկը վատառողջ է լինում կամ դժբախտության մեջ է հայտնվում, թեթևակի օգնություն են ցուցաբերում: Անգամ երբ նրանք կանչում են իրենց ընկերներին կամ հարազատներին աշխատելու համար, հիմնականում լավություն անելու համար չէ, որ կանչում են, այլ դիտում են իրենց համայնքի բնակիչներին որպես էժան աշխատուժ»:

Պետք է փաստել, որ միգրանտները բավական մեծ ներդրում ունեն հայրենիքում մնացած ընտանիքների տնտեսական կյանքում: Ինչպես երևում է *Աղյուսակ 1*-ից, միգրանտ ունեցող ընտանիքների գրեթե կեսի համար միգրանտն ընտանիքի եկամտի հիմնական մասի ձևավորողն է, սակայն ընտանիքների մոտ մեկ հինգերորդ մասի համար միգրանտներն ընդհանրապես չունեն տնտեսական ներդրումներ:

Աղյուսակ 1

Միգրանտի ներդրումն ընտանիքի ընդհանուր եկամտի ձևավորման մեջ

	%
1. Ապահովում է ընտանիքի եկամտի հիմնական մասը	48.6
2. Ապահովում է ընտանիքի եկամտի փոքր մասը	31.1
3. Ոչ մի ներդրում չունի	20.3
Ընդամենը	100.0

Հետաքրքրական է, որ միգրանտներն առավել ներգրավված են ընտանիքին վերաբերող կարևոր որոշումների ընդունման գործընթացում: Ինչպես երևում է *Աղյուսակ 2*-ից՝ հարցվողների 80%-ից ավելին նշել է, որ նրանց ընտանիքի միգրանտ անդամները շարունակում են ակտիվորեն մասնակցել ըն-

տանեկան որոշումների կայացման գործին, կայացնում են վերջնական որոշումներ ընտանիքում (26%) կամ էլ մասնակցում են խորհուրդներով (54,5%):

Աղյուսակ 2

Միգրանտի մասնակցությունն ընտանեկան որոշումների ընդունմանը

	%
1. Ընդհանրապես չի մասնակցում	19.5
2. Մասնակցում է իր խորհուրդներով	54.5
3. Կայացնում է վերջնական որոշում	26.0
Ընդամենը	100.0

Երբ միգրանտն ընտանիքի հայրն է կամ ավագ որդին, նրանց ավանդական առաջնորդող դերն ընտանիքում գլխավորապես մնում է նույնը և տեղեկատվահաղորդակցական ցանցի միջոցով իրականացվում է հեռավորությունից: Տեղեկատվական և այլ ժամանակակից հեռահաղորդակցական տեխնոլոգիաների՝ հեռախոսագանգերի, գումարային փոխանցումների, տեղեկատվության փոխանակման և խորհրդատվությունների միջոցով տղամարդ միգրանտներն իրենց մասնակցությունն են ապահովում ընտանիքի և համայնքի որոշումների կայացմանը: Ինչպես նշել է հարցվածներից մեկը.

«Սովորաբար ամեն հարց մենք հեռախոսով քննարկում ենք նրա հետ, նա ֆիզիկապես չի կարող մասնակցել, բայց փոխարենը մենք ամեն հարց պարզաբանում ենք նրա հետ»:

Հետաքրքիր է նշել, որ ըստ հարցվածների՝ նրանց բարեկամները և ընկերները պահում են կապերն իրենց հետ ոչ այնքան ֆինանսատնտեսական պատճառներով, որքան ավելի հաճախ՝ հուզական բնույթի շարժառիթներով. միգրանտները կարոտում են իրենց երկիրը, բնակավայրը, իրենց տունն ու ընտանիքը:

Նշենք, որ ընդհանուր առմամբ արտագնա աշխատանքներով զբաղված քաղաքացու՝ ընտանիքի անդամների հետ կապը հիմնականում սերտ է, հաճախ է իրականացվում: Ինչպես տեսնում ենք *Աղյուսակ 3*-ից՝ հարցվողների ավելին քան 36%-ը ամեն օր շփվում է իրենց ազգականների հետ, և ընդհանուր առմամբ, հարցվողների 70%-ից ավելին շփվում է առնվազն շաբաթը մեկ անգամ կամ ավելի հաճախ:

Աղյուսակ 3

Արտագնա աշխատանքային միգրանտների հետ շփման հաճախականությունը

	%		%
• Երբեք	.3	•	
• Ամեն օր	36.6	• Ամիսը մի քանի անգամ	18.3
• Շաբաթը մի քանի անգամ	21.5	• Ամիսը մեկ	7.7
• Շաբաթը մեկ անգամ	11.6	• Հազվադեպ	4.0
Ընդամենը			100

Վերտույն հաղորդակցության եղանակները, այդ թվում հեռախոսակապը, Skype-ը, սոցիալական ցանցերը, ինչպես, օրինակ՝ Facebook-ը կամ հատկապես դրան փոխարինող ռուսական Odnoklassniki.ru, vkontakte.ru սոցիալական կայքերը, ակտիվորեն օգտագործվում են միգրանտների ընտանիքների կողմից: Անգամ երբ օգտվողները չունեն տարրական համակարգչային գիտելիքներ, բավական հաճախ նրանք օգտվում են Skype-ից:

Մյուս կողմից, շփման առավել արդիական միջոց է մնում հեռախոսակապը, միգրանտների և նրանց ընտանիքների (համայնքների) ներկայացուցիչների միջև շփման նպատակով այն միջինն օգտագործվում է շաբաթը մեկ անգամ: Ինչ վերաբերում է համացանցային միջոցներին, ինչպիսին են Skype-ը կամ սոցիալական ցանցերը, ապա դրանք օգտագործվում են միջինը տարին մի քանի անգամից մինչև ամիսը մի քանի անգամ:

«Փառք Աստծո, կա հեռախոսը, որով ես կապվում եմ արտասահմանում աշխատող իմ ամուսնու հետ: Ամուսնուս հետ խոսում ենք գործից ու փողից, հետո ուզում եմ իմանալ՝ արդյո՞ք նա դեռ սիրում է ինձ»:

Ինչ վերաբերում է միգրացիոն գործընթացների ազդեցությանը ներհամայնքային կապերի և հարաբերությունների վրա, ապա հարցվածներից առավել լավատեսները նշում են, որ իրենք դեռևս ամուրի համայնք են կազմում, որը շարունակում է իր կենսագործունեությունը բնականոն հունով: Համայնքային իրադարձությունները դրդում են բնակիչներին համախմբվել, օգնել միմյանց դժվար պահերին, այնպես որ՝ այս հարցերի շուրջ որևիցե մտահոգություն չկա: Ինչպես հարցվածներից մեկը նշեց.

«Միշտ էլ այդպես է լինում: Երբ հարկավոր է՝ գյուղի բնակիչները համախմբվում են. հարազատները և հարևաններն այցելում են հարսանեկան և թաղման արարողություններին: Երեխաների դաստիարակման հարցում ըն-

տանիքը դեռևս իր դիրքերում է, և հեռուստատեսությունը, բարեբախտաբար, մեծ ազդեցություն չի գործում նրանց վրա»:

Մակայն, մյուս կողմից, հարցվածների մի մասը նկատում է հակառակ միտումներ՝ միգրացիայի հետևանքով ներհամայնքային կապերի խեղում, համագործակցության պակաս, համայնքային ինքնության փոխակերպում ընդհուպ մինչև դրա կորուստը: Մասնավորապես, մեկնածներից շատերը դադարում են մասնակցել համայնքի կյանքին, իսկ արտագնա աշխատանքով զբաղվող և արտագաղթող երիտասարդ սերունդը, համայնքի բնակիչների հավաստմամբ, կորցնում է իր ազգային ինքնությունը.

«Եթե իրենց անձնական հարցը չէ, դժվար է համախմբել: Իսկ, ասենք, թաղումների կամ հարսանիքների ժամանակ բոլորն են խմբվում, քանի որ փոքր գյուղ է և իրար բոլորը ճանաչում են»:

«Ժամանակակից երիտասարդները ուրիշ կերպ են մտածում: Ծույլ են, ոչ մի բանի ձգտում չունեն: Վերջին քսան տարիների դաստիարակությունը վատ անդրադարձավ նրանց վրա: Գերադասում են նպաստ ստանալ ու վատ ապրել, քան թե աշխատել: Համայնքում աղքատության մշակույթ է ձևավորվել»:

Երիտասարդներին առնչվող խնդիրները կապված են միգրացիոն հոսքերում նրանց ակտիվ ներգրավվածության փաստի հետ, ինչը լուրջ մտահոգություններ է առաջացնում տեղի բնակիչների շրջանում, քանզի հարցվածները նշում են, որ երիտասարդության զգալի մասն իր ապագան տեսնում է համայնքից և, առհասարակ, Հայաստանից դուրս: Կենտրոնացած լինելով սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման վրա՝ երիտասարդները քիչ ուշադրություն են դարձնում համայնքային ինքնության պահպանմանը: Բնակչության երիտասարդ մասի միգրացիան խախտում է կապը սերունդների միջև՝ առաջացնելով անջրպետ, ինչն ուղեկցվում է տեղի համայնքային ինքնության որոշ կարևոր տարրերի կորստով.

«Երիտասարդները, որոնք դպրոցն ավարտելուց հետո չեն կարողանում աշխատանք գտնել, հոգ չեն տանում իրենց տեղային ինքնության համար: Երիտասարդներն այստեղ ստիպված են կամ զբաղվել գյուղատնտեսությամբ, կամ մեկնել Ռուսաստան»:

«Չնայած երիտասարդները տեղյակ են տեղի ավանդույթներից և հետևում են դրանց, այնուամենայնիվ, միակ բանը, որի մասին մտածում են, թողնել-գնալն է»:

Մյուս կողմից, չնայած վերոնշյալ կարծիքին և միտմանը, հատկապես գյուղաբնակ երիտասարդները հիմնականում բնութագրվում են որպես, առաջին հերթին, հյուրընկալ և ընտանիքապաշտ, այնուհետև՝ ընկերասեր և աշխատասեր:

Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ակներև է կապն աշխատանքային միգրանտին ընդունող երկրի և հայաստանյան համայնքներում ապրող միգրանտի ընտանիքի քաղաքական հայացքների միջև. այն համայնքի բնակիչները, որոնց ընտանիքի անդամ(ներ)ը մեկնել են և աշխատում են այս կամ այն երկրում, հակված են այսպես թե այնպես պաշտպանել միգրանտին ընդունած երկրի շահերը (ներառյալ վերջինիս գերակայությունը, քաղաքական գործունեությունը և գաղափարախոսությունը) և համապատասխանաբար խրախուսում են Հայաստանի քաղաքական կողմնորոշումը (հատկապես համագործակցային բնույթի) այդ երկրի նկատմամբ: Ինչպես հարցվածներն են նշում.

«Մեր երկրի և մեր համայնքի ապագան կապված է Ռուսաստանի հետ. հայերը լավ հարաբերությունների մեջ են ռուսների հետ և նախընտրում են այնտեղ մեկնել գումար աշխատելու համար»:

«Իմ ավագ որդին արտասահմանում է աշխատում, նրա հետ այնտեղ այլ մարդիկ էլ են աշխատում, և մեր բարեկեցությունն ուղղակիորեն կապված է այն երկրի բարեկեցության հետ, որտեղ նա աշխատում է: Մենք օրհնում ենք այդ երկիրը, որն օգնում է մեզ լավ ապրել»:

Մայիս, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Mkrtichyan A.* (2004), Ethnonationalität und ethnokulturelle Konflikte bei der Bildung von Diasporagemeinden, In: Berliner Blätter: Ethnographische und ethnologische Beiträge, Heft 33, Münster: LIT.
2. *Appadurai A.* (1997), Modernity at Large: Cultural Dimensions in Globalization, Minnesota, University of Minnesota Press.
3. *Kivisto P., Faist Th.* (2010), Beyond a Border: The Causes and Consequences of Contemporary Immigration. Pine Forge Press.
4. *Jenson J.* (2010), Defining and Measuring Social Cohesion, Commonwealth Secretariat and UN Instituted for Social Development; Bernard Paul (1999), Social Cohesion: A Critique CPRN Discussion Paper F09, Canadian Policy Research Networks.
5. *Beauvais C., J. Jenson* (2002), Social Cohesion: Updating the State of the Research CPRN, Discussion Paper F22, Canadian Policy Research Networks.

6. *Kaloudis G.* (2008), The Influence of the Greek Diaspora on Greece and the United States. *International Journal on World Peace*, Vol. XXV, No. 3, September.
7. *Golob T.* (2010), The Meaning of «Home» and «Homeland» in Slovene Diasporic Communities. *Lithuanian Ethnology: Studies in Social Anthropology & Ethnology*, Issue 10.
8. *Trotz A. D., and Mullings B.* (2013), Transnational Migration, the State, and Development: Reflecting on the "Diaspora Option". *Small Axe: A Caribbean Journal of Criticism*, No. 41, July.
9. *Munshi K.* (2003), Networks in the Modern Economy: Mexican Migrants in the U. S. Labor Market. *The Quarterly Journal of Economics*, May.
10. *Katseli L. T., Lucas R. E.B. and Xenogiani Th.* (2006), Effects of Migration on Sending Countries: What Do We Know? *OECD Development Centre Working Paper No. 250*, June.
11. *Careja R.* (2013), Emigration for Development? An Exploration of the State's Role in the Development Migration Nexus: The Case of Romania. *International Migration*, Vol. 51 (5).
12. *Brinkerhoff J. M.* (2009), Creating an Enabling Environment for Diasporas' Participation in Homeland Development. *International Migration*, Vol. 50 (1).
13. Networks and their Influence on Migration Policy Conclusions from the Romanian-Spanish Migration Space. *Focus Migration, Policy brief*, 2008, N 11, October.
14. *Zhu Zh.* (2007), Two Diasporas: Overseas Chinese and Non-resident Indians in Their Homelands' Political Economy. *Journal Of Chinese Political Science*, vol. 12, no. 3, Fall.
15. *Waxman D., Lasensky S.* (2013), Jewish Foreign Policy: Israel, World Jewry and the Defence of "Jewish Interests". *Journal of Modern Jewish Studies* Vol 12, No. 2 July.
16. *Ziegler Ch. E.* (2006), The Russian Diaspora in Central Asia: Russian Compatriots and Moscow's Foreign Policy. *DEMOKRATIZATSIYA*, Vol. 14, No. 1, Winter, Heldref Publications.
17. *Singh A.* (2012), The Diaspora Networks of Ethnic Lobbying in Canada. *Canadian Foreign Policy Journal*, Vol. 18, No. 3, September.
18. *Zarifian J.* (2014), The Armenian-American Lobby and Its Impact on U.S. Foreign Policy. *Society*, Springer, N 51.
19. *Gyulumyan G.* (2008), Enhancing the Role of the Diaspora in Promoting Armenia's Sustainable Development. *Duke Center for International Development, Terry Sanford Institute of Public Policy, Duke University*, available at http://www.aiprg.net/UserFiles/File/annual08/papers/Gohar_Gyulumyan.pdf, accessed 22.02.2015.
20. *Kotanjian H.* (2004), Armenian Security and U.S. Foreign Policy in the South Caucasus. *The Quarterly Journal*, VOL. III, NO 2.
21. Armenia-Diaspora Relations: 20 Years since Independence (2010). *Policy Forum Armenia*, available at <http://www.pf-armenia.org/sites/default/files/documents/files/PFA%20Diaspora%20Report.pdf>, accessed 22.02.2015.

**ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎՐԱ**

*Արթուր Աթանեսյան, Մարիա Զատլավսկայա,
Արեմ Մկրտչյան, Գագիկ Թումանյան*

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացված է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի հատկացրած գիտական դրամաշնորհի շրջանակներում (2013-2015թթ.) իրականացված ուսումնասիրության արդյունքների մի մասը: Արդյունքները վերաբերում են հայաստանյան տեղական համայնքների ներքին խնդիրների ծագման և լուծման, համայնքային ինքնության փոխակերպման վրա միգրացիոն գործընթացների ազդեցությանը, ինչպես նաև համայնքի գործերին միգրանտների մասնակցության և միգրացիոն ցանցերի ներսում շփման միջոցների և նպատակների հիմնահարցերի բացահայտմանն ու քննարկմանը:

**ВОЗДЕЙСТВИЕ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ
НА ВНУТРИОБЩИНСКИЕ ПРОБЛЕМЫ В АРМЕНИИ**

*Артур Атанесян, Мария Заславская,
Арем Мкртчян, Гагик Туманян*

Резюме

Статья отражает часть результатов исследования, проведенного в рамках научного проекта, осуществленного при финансовой поддержке Государственного комитета по науке Министерства образования и науки РА (2013-2015гг.). В работе обсуждаются проблемы участия мигрантов в решении внутриобщинных вопросов в Армении, а также возникновение тех или иных проблем в результате эмиграции населения. Анализируются вопросы трансформации общинной идентичности и взаимосвязей внутри общины, а также способы и цели общения и взаимодействия между мигрантами и представителями локальных общин Армении, из которых мигранты выехали.

**THE IMPACT OF MIGRATION PROCESSES
ON THE LOCAL COMMUNITY ISSUES IN ARMENIA**

*Arthur Atanesyan, Maria Zaslavskaya,
Arem Mkrtchyan, Gagik Tumanyan*

Resume

The article presents some conclusions of the research conducted in the framework of a grant provided by the State Committee of Science of the Ministry of Education and Science of Armenia (2013-2015). The research results pertain to the impact of labor migration on both the causes and solutions for the modern problems of local Armenian communities. The local identity transformations and changes in relations between community members are discussed, along with peculiarities of communication between the local community members and their emigrant representatives, who still have certain influence on their local communities, including through financial support, participation in local events, in their family affairs, and dissemination of information.

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Էդուարդ Լ. Դանիելյան՝

Բանալի բառեր՝ Հայկական լեռնաշխարհ, Հայաստան, Դրախտ, Արարատ-Մասիս, Արգիշտի, Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Շահապիվան, Վաչագան Բարեպաշտ:

Հայ Առաքելական եկեղեցին դարեր շարունակ պաշտպանել է իր զավակների հոգևոր կյանքն ազգային արժեքներին սպառնացող վտանգներից, մասնավորապես՝ աղանդավորությունից, որը դեռևս վաղ միջնադարում իր բազմաշերտ և խայտաբղետ դրսևորումներով մտահոգիչ էր եկեղեցական հայրերի, հայ պատմիչների ու պետական գործիչների համար: Դրանով էին պայմանավորված Հայ եկեղեցու ընդունած որոշ կանոններն ու հայ պատմիչների և փիլիսոփաների՝ այդ ուղղությամբ կատարվող ուսումնասիրությունները:

Հայաստանում անցյալում և ներկայում աղանդավորականության դրսևորումները տարբերվելով՝ մի հարցում նմանվում են: Դրանք արտահայտվում են հասարակության մեջ եղած սոցիալական և հասարակական դժվարությունների առկայության պայմաններում իրականությունից դժգոհ, հոգևոր առումով տառապող և հաճախ նաև անձնապես դժբախտ մարդկանց և նրանց մերձավորների շրջանակներում: Մարդուն տրված կյանքի իր հատվածը անդառնալի շռայլություն է ծախսել աղանդավորական փնտրտուքների վրա, երբ ուրիշն է նրա տեղը մտածում, հոգու չբացահայտված գանձերը տնօրինում, աշխարհի հետ շփման ամբողջ տեղեկատվական ոլորտը լցնում օտարամոլ բարբառանքով՝ հոգեորսության գոհին դարձնելով դավադիր ծրագրերն իրագործելու գործիք:

Այս խնդրում՝ անցյալի և ներկայի միջև նաև կա մի էական տարբերություն: Միջնադարում Հայաստանում եղած աղանդավորական շարժումները

՝ «Նորավանք» ԳԿՀ խորհրդական, պ.գ.դ.:

կամ տեղական ծագում ունեին (պավլիկյան, թոնդրակյան), կամ էլ արտաքինից ներթափանցման հետևանք էին՝ սոցիալ-քաղաքական անբարենպաստ իրավիճակի հետևանքով: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում տեղական ծագման աղանդավորության նշույլ չկա: Վերջին տասնամյակների ընթացքում սնկի նման աճած՝ ներմուծված արհեստածին աղանդավորական կազմակերպությունների ի հայտ գալիս անհարիր է Հայոց՝ հազարամյակների խորքային բովանդակությամբ առլեցուն ավանդական հոգեկերտվածքին:

Պատմական ճշմարտության վկան ստեղծագործ ժառանգությունն է: Հնագիտական պեղումները և սեպագիր արձանագրություններն ու աստվածաշնչային հաղորդումները վեր են հանում Հայոց մշակութային ժառանգության ավելի քան ութհազարամյա ազգային¹ հոգևոր ակունքները Հայկական լեռնաշխարհում: Քրիստոնեությունը Առաքելական քարոզչությամբ (մ.թ. I դ.) ընձյուղվելով հավատի վկայության լուսեղեն ակունքներին, Հայաստանում՝ առաջինը աշխարհում, հռչակվեց պետական կրոն (301թ.): Լուսապաշտության ժառանգականության հոգևոր սկզբունքով վեր հառնեցին հայ մշակույթի անգուգական կոթողները՝ Մեսրոպատառ այբուբենը, Ոսկեդարյան գրականությունը, եկեղեցական ճարտարապետությունը և երաժշտությունը, խաչքարային արվեստը և մանրանկարչությունը, զարթոնք ապրեցին գիտության տարբեր ճյուղերը (պատմագրություն, փիլիսոփայություն և աստվածաբանություն, աստղագիտություն և տիեզերագիտություն, աշխարհագրություն, տոմարագիտություն և մաթեմատիկա, բժշկագիտություն):

Հայոց հոգևոր և պատմամշակութային ժառանգության իմաստավորման, պահպանման և բազմապատկման ճանապարհը Հայրենաճանաչողությունն է:

Հնում և միջնադարում հայորդի բազում սերունդներ են անցել այդ լուսավոր ճանապարհով, որի փարոսներն են Հայոց գիտաուսումնական և մշակութային կենտրոնները՝ Մեծ Հայքի Բարձր Հայք (Դարանաղի գավառի Անի տաճար), Արցախ (Ամարաս, Գանձասար, Շուշի), Այրարատ [Շիրակի

¹ Հեթանոսական՝ հուն. *էթնոս* բառից, որ նշանակում է *ազգ*, ցեղ: Հմմտ.՝ հին ժամանակներում «հեթանոս», «հեթանոսական» նշանակել է *ազգ*, *ազգային*, իսկ միջնադարում «հեթանոս» էին կոչում ոչ քրիստոնյաներին [1, էջ 74]:

Անիի կաթողիկոսարանի բարձրագույն հոգևոր (վարդապետարան) և իմաստասիրական դպրոցներ], Սյունիք (Գլաձորի¹ և Տաթևի² համալսարաններ), Տուրուբերան, Վան-Վասպուրական, Տայք, Գուգարք, Արցախ նահանգներում, Կիլիկյան Հայաստանում (Միս, Հռոմկլա, Դրագարկ) և այլն:

Հայոց հավատքի հոգևոր ակունքներում են Արայան և Վահագնյան ու Քրիստոսաշունչ լուսապաշտական վկայության հիմնասյուները, որպիսիք են Դրախտը, Հավիտենական Ուխտը և Արարատ-Մասիսի գագաթին հանգրվանած Նոյան տապանը, Հայկյան հայրենապաշտությունը, սուրբ ծեսերի/օրենքների Արատտան, Արմանումը, Հայասա-Հայքը, Արգիշտի և Տիգրան Մեծ արքաների փառքը, Հայ Առաքելական եկեղեցին, Արգար ու Տրդատ Մեծ թագավորների Քրիստոսակոչ գործունեությունը, Վարդան Մամիկոնյանի առաջնորդած Ավարայրի Սուրբ Նահատակները, Վաչագան Բարեպաշտ թագավորի ու Հայոց բազում սերունդների կերտած Հայրենաշունչ հոգևոր արժեքները:

Հայոց պատմությամբ իմաստնանալու և հզորանալու կաճառը հոգեւըված է Հայոց ձորից ճառագող Հայկյան և հետագա Հայկագուն բազում սերունդների լուսավոր հաղթանակներով [8]: Նորագույն վկան Արցախյան ազատամարտի հաղթանակն է, որն անձնագոհաբար կերտող ազատամարտիկներն օժտված էին հայրենասիրության բարձր գիտակցությամբ ու գիտելիքների մեծ պաշարով:

Հայրենիքը ճանաչում ենք իր բնաշխարհով ու պատմությամբ՝ վկայված բազում սերունդների ստեղծագործ ժառանգությամբ և հայրենանվեր գործերով:

¹ Միխթար Երզնկացին Գլաձորի համալսարանը կոչել է «Մայր իմաստության» և «Իմաստության տուն», իսկ Հակոբ Թագորացին՝ «երկրորդ Աթենք և մայրաքաղաք ամենայն իմաստից», «իմաստության գահ» [2, էջ 133; 3, էջ 104; 4, էջ 795]:

² Տաթևի համալսարանն ունեցել է երեք մասնագիտական բաժին կամ լսարան՝ ներքին ու արտաքին գրոց, գրչության արվեստի և երաժշտության: Առաջին լսարանում ուսումնառության բնագավառներն ընդգրկում էին մայրենի լեզու, փիլիսոփայություն, աստվածաբանություն, քերականություն, տրամաբանություն, ճարտասանություն, մատենագիտություն, պատմություն, աստղաբաշխություն, աշխարհագրություն, բնագիտություն, մանկավարժություն, մարդակազմություն, թվաբանություն, տոմարագիտություն, գրականության պատմություն, «ներքին և արտաքին» գրքերի մեկնություն: Երկրորդ լսարանը ներառում էր մանրանկարչական-ծաղկարարական արվեստ և գրչագրության, կազմարարության և ձեռագրագիտության արհեստներ: Համալսարանի սաները հմտանում էին մագաղաթի մշակման, թղթի կոկման, թանաքի պատրաստման գործում: Տաթևում գրված, ընդօրինակված, ծաղկված և կազմված բազմաթիվ ձեռագրեր են պահպանվել: Երրորդ լսարանում դասավանդվել են երաժշտական առարկաները: Ուսման ժամկետը եղել է 7-8 տարի: Անտիկ փիլիսոփայական, ինչպես նաև քրիստոսաբանական երկերի հետ մեկտեղ դասավանդման ընթացքում օգտագործվել են Հովհան Որոտնեցու փիլիսոփայական երկերը, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը», աստվածաշնչյան մեկնությունները, «Ոսկեփորիկը» և այլ աշխատություններ [5-7]:

Հայրենաճանաչումը սկզբնավորվում է շրջակա բնաշխարհից՝ Արարատ-Մասիսի և Արագածի ձյունափայլ լեռնագագաթներով, Սևանի կապույտ ջրերով, Գառնիով ու Գեղարդով, Մաղասաբերդով ու Ամբերդով, Ս.Էջմիածնով ու Զվարթնոցով, Հաղպատով ու Սանահինով, Ամարասով ու Գանձասարով, Զավախքով ու Փարվանայով, Գարդմանով, Նախիջևանով ու Գողթանով, Գլաձորով ու Տաթևով, Առուձով ու Օձունով, Օշականով ու Մուղնիով, Եղվարդով ու Այրիվանքով...

Հայոց պատմության ուղիները տանում են դեպի Փոքր Հայք ու Բարձր Հայք, Տայք ու Տարն, Ծոփք ու Սասուն, Վասպուրական ու Մոկք, Վան ու Մուշ, Սպեր ու Կարին, Տիգրանակերտ ու Միս, Բաղեշ ու Արծկե, Կարս ու Բագավան, Արճեշ ու Մանազկերտ՝ դեպի Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակով լի Արևմտյան Հայաստան ու Կիլիկիա, ուր ապրել ու ստեղծագործել են մեր նախնիները:

Պատմական հիշողությունը հայորդիներին հոգևոր թելերով սնում է Մայր հողի ուժով, արյան կանչով վեհացնում Բագավանի ու Աշտիշատի, Անի-Կամախի ու Երիզայի, Մշո ու Վարազա, Անիի ու Աղթամարի տաճարներով ու եկեղեցիներով, Աստղաբերդի, Արտագերսի ու Դարույնքի, Վահկայի ու Բաղեշի անառիկ ամրոցներով: Եվ դեռ ինչքան գանձեր ու գոհարներ են պահված Հայոց աշխարհում... Հայրենիքի հանդեպ սերն առնականանում է հայրենանվեր ոգով դաստիարակության և ճանաչողության ճանապարհով, որդիական նվիրումով:

Հայրենաճանաչումը տանում է դեպի աշխարհաճանաչում և սնում հայրենասիրության գաղափարը: Գարեգին Նժդեհն իր հոգու լույսով պատգամել է, որ յուրաքանչյուր սերունդ արժանի է դառնում Հայրենիքին հայրենաճանաչումով և հայրենապաշտությամբ: Գարեգին Նժդեհն իր պայծառ հայացքով Հայոց Հայրենիքի անցյալի ճանաչման մեջ է տեսել Հայ ազգի ապագան, որի ճանապարհի փարոսն է օտար բռնակալների դեմ ռազմի դաշտում և մտավոր մաքառումներում ազատության գործին ծառայած և իրենց անմնացորդ նվիրած Հայոց մեծ նախնիների փառքը. «Պատմություն - դա անավարտ վեպ չէ, այլ՝ չաւարտած ճակատամարտ: Եվ իր էջերը՝ ռազմադաշտե՛ր, որոնք արինով են ներկում եկող-անցնող սերունդները: Ազգերը միայն այն չափով են կենսունակ ու ստեղծագործ, ինչ չափով վերապրած եւ իմաստաւորած են

իրենց անցեալը, իրենց պատմութիւնը: Պատմագրել՝ նշանակում է կռուի մտնել ժամանակի հետ՝ թոյլ չտալու համար, որ նա մարդկային ազգի անցեալն սպանի: Ժողովրդի անմահութեան կոթողն է պատմութիւնը: Վա՛յ այն ժողովրդին, որի անցեալն իր համար լոկ մի գերեզման է անխօս: Չկա՛յ անելի մեծ ծառայութիւն՝ իր ժողովրդին, քան պատմագրումը նրա անցեալ կեանքի: Նոր Խորենացիներ, Եղիշէներ թող ճակատագիրը չզլանայ մեզ» [9, էջ 339]:

Հայ ազգի պատմական փորձը և ապագայի հանդեպ եղած պատասխանատվությունը հասարակության թե՛ քաղաքական և թե՛ հոգևոր կյանքում կարծես թե չպետք է տեղ թողնէր այնպիսի երևույթների համար, որոնք ունենում են պառակտիչ հետևանքներ: Սակայն փաստերն անողոք են, և այսօր աղանդավորության խնդիրը օրակարգում է հայտնվել, որի լուծման համար կարևոր նշանակություն ունի պատմական փորձի ուսումնասիրությունը:

Միջնադարում աղանդավորության հետ առնչվող խնդիրներն ընդգրկել են թե՛ տեսական և թե՛ կիրառական ոլորտները: Տեսական ոլորտում աստվածաբանական հարցերն էին, իսկ կիրառականում՝ քրիստոնեական դավանաբանության վրա հիմնված եկեղեցական ժողովներում ընդունվող կանոնները, որոնք միջոցներ էին սահմանում աղանդավորության դեմ:

Հայ Առաքելական եկեղեցու հայրերը հավատքով և գիտությամբ սրբորեն պահպանել են քրիստոնեական դավանաբանությունը: Եկեղեցական ժողովներում հոգևոր հայրերի մշակած կանոններից և հայ պատմիչների պահպանած վկայություններից երևում է, որ վաղ միջնադարում Հայաստան էին ներթափանցել գնոստիկյան ուսմունքների տարրերը, «անապատականների», «բորբորիտների» և «մծղնե» շարժումները [10, էջ 83-93]:

V դարի հայ մատենագիրները՝ Կորյունը, Սովսես Խորենացին և Եզնիկ Կողբացին, հենվելով քրիստոնեական դավանաբանության վրա, մերժում էին հերետիկոսների գաղափարները: Այսպես, համոզվելով, որ «բորբորիանոսների» աղանդը տարածվել էր Հայաստանում, Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը փորձեցին խրատներով համոզել աղանդավորներին հրաժարվել իրենց մոլորությունից, սակայն կիրառված միջոցներն անգոր էին նրանց դարձի բերելու համար, ուստի, ինչպես նշում է Կորյունը, նրանց դեմ խստագույն պատիժներ կիրառվեցին, իսկ երբ պարզվեց, որ այդ էլ չի օգնում, նրանց

«խանձեալս, մրեալս և գունակ գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորզէին» [11, էջ 6-8]:

Վաղ միջնադարում Տիեզերական եկեղեցու առջև ծառայած խնդիրներից էր նեստորականության դեմ ծավալված դավանաբանական պայքարը, որն իր գագաթնակետին հասավ Եփեսոսի՝ Երրորդ Տիեզերական ժողովում (431թ.), երբ Թեոդորոս Մոպսուեստացու աշակերտ Նեստորը դատապարտվեց ու աքսորվեց: Սկզբնաղբյուրների հաղորդումներից երևում է, որ Նեստորի ուսմունքը սպառնում էր նաև Հայ Առաքելական եկեղեցուն:

Նեստորի ուսմունքի և Եփեսոսի ժողովում նրան դատապարտելու վերաբերյալ բավական մանրամասն գրել է Մովսես Խորենացին (V դար): Նախ, Պատմահայրը հիշատակել է Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում Նեստորի անարժանաբար պատրիարք (428-431թթ.) դառնալու մասին. «Ընդ այն ժամանակս եկաց յաթոռ եպիսկոպոսութեանն Բիւզանդացոց անարժանաբար ամբարիշտն Նեստոր»: Մովսես Խորենացին նշել է Նեստորի ամբարիշտ լինու պատճառը՝ «...հրեական իմացմանց հետեւեալ՝ հայիոյեաց զամենասուրբ Կոյսն՝ մարդածին լինել եւ ոչ Աստուածածին: Քանզի ծնեալն ի նմանէ առեալ սկիզբն՝ այլ որդի ասէր շնորհօք ի Մարիամայ, եւ այլ որդի ի Յօրէ յառաջ քան զյաւիտեանս, որպէս զի լինել երկուս որդիս, որով Երրորդութիւնն չորրորդութիւն լինի» [12, էջ 342]:

«Հրեական իմացմանց հետեւեալ» ասելով Մովսես Խորենացին նկատի է ունեցել Հին Ուխտի վրա հիմնված հուդայական դավանաբանությանը հետևող մեկնությունները, որոնք առավել ցայտուն դրսևորվել են Փիլոն Եբրայեցու (Ադեքսանդրացի) (թ. ծ. ա. 25 - մ.թ. 50թ.) մի շարք երկերում: Այս առումով պերճախոս են Մովսես Խորենացու խոսքերը թե՛ Հին Կտակարանի («... աստուածայնոյն Գրոյ զիրսն ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհելեացն և իւրոց անարժան կարգելոց բանից: Չորոց մեք սկսեալ ճառեցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք զահաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենեւին անսուտ») [12, էջ 17] մասին և թե՛ իր երկի շնորհիվ պահպանված՝ Հայոց Աբգար թագավորի Քրիստոսին ուղղված նամակի բովանդակությունը, ուր մասնավորապես, դիմելով Հիսուս Քրիստոսին, Աբգարը գրել է. «...Նաեւ լուայ, զի Հրեայք տրտնջեն զքէն եւ կամին չարչարել զքեզ...» [12, էջ 149]:

Նեստորի հանդես գալու և ստեղծած ուսմունքի գաղափարական ակունքները բացահայտելուց հետո Մովսես Խորենացին Եփեսոսի ժողովի ընդունած վճռի մասին գրել է. «Վասն որոյ ժողովեալ սրբոց հարցն յԱսիա ի ծովահայեացն Եփեսոսս գրաւորական վերածնութեամբ, Կելեստինոս Հռոմայ, Կիրղոս Աղեքսանդրի, Յոբնաղիոս Երուսաղեմի, Յովհաննէս Անտիոքայ, Մեմնոն Եփեսոսի, Պաւղոս Հեմեսու, Թեոդոտիս Անկիւրիայ եւ այլք բազումք, համանգամայն երկերիւր հարք, նգովեալ զՆեստոր՝ խոստովանեցին մի Որդի Աստուծոյ, զՏէր մեր Յիսուս Քրիստոս, եւ Աստուածածին զամենասուրբ կոյսն Մարիամ» [12, էջ 342]:

Հայ Առաքելական եկեղեցու հայրերին մեծ անհանգստություն էր պատճառում մծղնեական շարժումը: Ըստ եկեղեցական կանոնների, հերետիկոսները քարոզում էին իրենց ամբարիշտ մտքերը, գործում էին «այլանդակ գործս» [13, էջ 191]: Մծղնեական շարժման դեմ պայքար ծավալելու խնդիրը գտնվում էր 447թ. հրավիրված Շահապիվանի եկեղեցական ժողովի ուշադրության կենտրոնում: Ժողովի ընդունած կանոնների մի մասն ուղղված էր մծղնեական աղանդի դեմ: Ժողովը պահանջում էր ամենադաժան միջոցներ կիրառել աղանդավորների, նրանց հովանավորողների, հարողների և համակրողների դեմ [13, էջ 429-432]:

Հայ իրականության մեջ հականեստորական պայքարը, պատմագիտական և աստվածաբանական գրականության հետ մեկտեղ, արտացոլվել է նաև եկեղեցական ժողովների թղթերում: Բարգեն կաթողիկոսի (506-513թթ.) հրավիրած Դվինի ժողովում (506թ.) մերժվեց նեստորականությունը, և համապատասխան թղթեր ուղարկվեցին Պարսկաստանում ապրող ուղղափառներին [14, էջ 134]: Բարձր գնահատելով Բարգեն կաթողիկոսի ժողովի թղթերը՝ Երվանդ Տեր-Մինասյանը գրել է. «Այստեղ մեր առաջ է Հայոց եկեղեցու առաջին ժողովական որոշումը, որով նա բացարձակ կերպով մերժում է նեստորականությունը, գուցե նրա հետ կապելով նաև քաղկեդոնականությունը...» [15, էջ 77]:

Քաղաքական հանգամանքների բերումով, նեստորականությունը մինչև VII դարի սկզբները մնաց Սասանյանների հովանավորության տակ, սակայն Տիգրանի 615/6թ. ժողովում Պարսից արքա Խոսրով II Փարվեզը, Բյուզանդական կայսրության դեմ պայքարի սրման ժամանակաշրջանում՝ քաղաքական

նպատակներով, քննության առարկա դարձնելով դավանանքի խնդիրը, ժողովից վտարեց նեստորականներին, սխալ համարեց Քաղկեդոնի ժողովի որոշումը և ճշմարիտ համարելով առաջին երեք Տիեզերական ժողովների որոշումները, որոնց առավել հավատարիմ էր մնացել Հայ Առաքելական եկեղեցին, հրաման արձակեց. «Եթե ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին» [16, էջ 151]:

Հայ Առաքելական եկեղեցին դարեր շարունակ եղել է հայ ժողովրդի հոգևոր ու գաղափարական առաջնորդը: Հայ եկեղեցու սուրբ նվիրյալների՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Ծնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Տաթևացու և նրանց հետնորդների ստեղծագործական ժառանգությունը հոգևոր մեծ լիցք է հաղորդել հազարամյակների խորքից եկող հայ մշակույթին՝ հարստացնելով համաշխարհային հոգևոր գանձարանը: Հայ դպրությունը և գիտությունը սնվել են Մայր եկեղեցու գրկում: Հոգևոր կատարելության ճանապարհը լուսավորված է Աստուծո իմաստությամբ [17, էջ 223]:

Ի տարբերություն միջնադարյան մի շարք երկրների, որտեղ հալածվում և երբեմն դաժանորեն մահապատժի էին ենթարկվում գիտական մտքի խոշորագույն կրողները, Հայաստանում եկեղեցին ինքն էր դարձել գիտության և կրթության օրրան, որի հոգևոր հայրերից շատերը նշանավոր աստվածաբաններ և գիտնականներ էին: Իսկ պատմության դժնդակ ժամանակներում եկեղեցին հզոր ազգապահպան և հայրենապահ վեմ եղավ հայ ժողովրդի համար: Վարդանանց սրբազան պատերազմից ցայժմ՝ Արցախյան հերոսամարտը, Հայ եկեղեցին իր հոգևոր զավակների հետ է:

Հայ Առաքելական եկեղեցին, շնորհիվ Արարատի լեռներում հազարամյակների խորքից եկող ճշմարիտ աստվածապաշտության վկայության ակունքների և քրիստոնեական սրբազան ավանդության՝ հայրախոսական հզոր հիմքի, հավատքի վահանով մշտապես պահպանել է իր զավակների հոգևոր անաղարտությունը:

Փետրվար, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Հր. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1997:
2. *Ղ. Ալիշան*, Միսական, Վենետիկ, 1893:
3. «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1950:
4. Հայ ժողովրդի պատմություն, հ. III, 1976:
5. *Ստեփանոս Օրբելեան*, Պատմութիւն նահանգին Միսական, Թիֆլիս, 1910:
6. *Ա. Ալպոյաճեան*, Պատմութիւն հայ դպրոցի, հ. I, Կահիրե, 1946:
7. *Գ. Գրիգորյան*, *Ս. Հախվերդյան*, Սյունիքի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2001:
8. Մեր հաղթանակները, հ. Ա-Դ, Երևան, «Նորավանք», 2008-2012:
9. *Գարեգին Նժդեհ*, Հատընտիր, Երևան, 2006:
10. *Հր. Բարթիկյան*, Աղանդավորական շարժումները Հայաստանում ըստ միջնադարյան հայ և օտար հեղինակների (IV-V դարերում), «Լրաբեր», 1984, N 10, էջ 83-93:
11. *Կորյուն*, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941:
12. *Մովսէս Խորենացի*, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991:
13. «Կանոնագիրք Հայոց», աշխատ. Վազգեն Հակոբյանի, խմբ. Հակոբ Անասյանի, Երևան, 1964:
14. Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901:
15. *Ե. Տէր-Մինասեանց*, Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908:
16. Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:
17. *Եղիշէ*, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 222:

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էդուարդ Լ. Դանիելյան

Ամփոփագիր

Հայ Առաքելական եկեղեցին դարեր շարունակ պաշտպանել է իր զավակների՝ հոգևոր կյանքն ազգային արժեքներին սպառնացող վտանգներից, մասնավորապես՝ աղանդավորությունից: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում տեղական ծագման աղանդավորության նշույլ չկա: Վերջին տասնամյակների ընթացքում սնկի նման աճած՝ ներմուծված արհեստածին աղանդավորական կազմակերպությունների ի հայտ գալն անհարիր է Հայոց՝ հազարամյակների խորքային բովանդակությամբ առլեցուն ավանդական հոգեկերտվածքին: Այսօր աղանդավորության խնդիրը կրկին հայ հոգևոր դաստիարակչական օրակարգում է հայտնվել, որի լուծման համար կարևոր նշանակություն ունի պատմական փորձի ուսումնասիրությունը:

ИЗ ИСТОРИИ ЗАЩИТЫ АРМЯНСКИХ ДУХОВНЫХ ЦЕННОСТЕЙ

Эдуард Л. Даниелян

Резюме

Армянская Апостольская церковь веками защищала духовную жизнь своих чад от угроз расшатывания национальных ценностей, в частности от сектантства. Сегодня в Республике Армения и Республике Арцах нет и следа сектантства местного происхождения. Появление в последние десятилетия разрастающихся словно грибы импортированных и искусственнорожденных сектантских организаций диссонирует с армянским традиционным укладом духовной жизни, наполненным глубинным содержанием тысячелетий. Проблема сектантства вновь оказалась в повестке дня духовного воспитания армян, и исторический опыт имеет важное значение для решения этой проблемы.

FROM THE HISTORY OF DEFENSE OF ARMENIAN SPIRITUAL VALUES

Eduard L. Danielyan

Resume

For many centuries the Armenian Apostolic Church defended the spiritual life of its adherents from perils posed onto their national values, particularly from sectism. Currently there is no sign of any locally originated sects whatsoever both in the Republic of Armenia and the Artsakh Republic. However, artificially created and imported sectarian organizations mushroomed in the recent decades, and this phenomenon is incompatible with the millennia-old traditional Armenian spiritual mindset imbued with in-depth meaningfulness. Currently the problem of sects is once again in the agenda of Armenian spiritual upbringing, and the study of historical experience appears important for finding solutions to this problem.

ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

*Կարինե Հակոբյան**

Բանալի բառեր՝ ազգ, էթնոս, ազգ-պետություն, ազգայնականություն, ինքնավարություն, արդիականություն, քաղաքական ազգ:

Ազգերի կազմավորման հարցի վերաբերյալ կան միմյանց հակադիր երկու մոտեցումներ՝ ավանդական կամ մշակութային-պատմական և «մոդեռնիստական», քաղաքական, որը ձևավորվել է 20-րդ դարի 80-ական թթ.: Համաձայն ավանդական մոտեցման՝ «ազգը» բնական և կենսաբանական արմատներ ունեցող սոցիոմշակութային երևույթ է, որի կազմավորումը կապված է հազարամյակներ առաջ գոյություն ունեցող պետությունների հետ: Իսկ ըստ «մոդեռնիստական» տեսության՝ ազգերը սկսել են կազմավորվել «մոդեռնի» դարաշրջանում, մասնավորապես, Ֆրանսիական մեծ հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանում՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական նոր հարաբերությունների արդյունքում: Եթե առաջին դեպքում ազգակերտման մեջ կարևորվում է մշակույթի դերը, ապա երկրորդ դեպքում մեծ նշանակություն է ձեռք բերում քաղաքական գործոնը, մասնավորապես՝ քաղաքական վերնախավը և ազգայնականությունը:

«Մոդեռնիստական» տեսությունը, ձևավորվելով 20-րդ դարի վերջին, ունեցել է, սակայն, իր ակունքները: Այսպես, օրինակ, Ժան-Շակ Ռուսոն, անդրադառնալով ազգերի կազմավորման մշակութային և քաղաքական եղանակների միջև գոյություն ունեցող տարբերությանը և մնալով Նոր ժամանակի գաղափարներին հավատարիմ, «ազգը» բնութագրում է որպես հասարակական դաշինքի և քաղաքական կամքի դրսևորում, որի գլխավոր նպատակն ազատության և արդարության ձեռքբերումն է: Ռուսոյի համոզմամբ՝ «ազգ»

*ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի հայցորդ, «Բարեփոխում» կրթամշակութային հասարակական կազմակերպության նախագահ:

կարող է համարվել այն ժողովուրդը, որն ունի սահմանադրություն: Ինչպես տեսնում ենք, Ռուսոյի հայեցողության մեջ «ազգ» հասկացությունն արդեն հանդես է գալիս որպես «պետության» հոմանիշ [1, էջ 66]:

Ազգերի ձևավորման քաղաքական ճանապարհը «մոդեռնիստական» տեսությունից դեռևս մեկ դար առաջ կարևորել է Էռնեստ Ռենանը՝ Սորբոնի համալսարանում կարդացած իր «Ինչ է ազգը» հայտնի դասախոսության մեջ: Գիտնականն օգտագործելով «Ժամանակակից ազգ» եզրույթը՝ մատնանշում է ազգերի կազմավորման այն ձևերն ու ուղիները, որոնք բնորոշ են արդիականության (մոդեռնի) դարաշրջանում ձևավորված ազգերին: Ռենանը նշում է, որ հին ազգերը չեն ունեցել այն գործառույթներն ու հայրենիքի այն գաղափարը, որը բնորոշ է Ֆրանսիական հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանում ձևավորված եվրոպական ազգերին: Նա նաև նկատում է, որ ազգակերտման գործում որքան հիշողությունն է կարևոր, նույնքան էլ, և երբեմն ավելի՝ մոռացումը: Նրա համոզմամբ՝ ազգային միասնությունը հաճախ իրականացել է ուժի գործադրմամբ, և Ֆրանսիայի հյուսիսային ու հարավային հատվածները միավորվել են գրեթե մեկ դար տևած բռնության և ահաբեկչության հետևանքով: Մինևույն ժամանակ, Ռենանն ազգային համախմբման համար կարևոր է համարում ընդհանուր նպատակի և ոգու գործոնը: «Մենք տեսնում ենք, թե ինչպես մեր օրերում Իտալիան իր պարտություններով միավորվեց, իսկ Թուրքիան ուժասպառ է եղել իր հաղթանակներով: Յուրաքանչյուր պարտություն Իտալիային առաջ է մղում, յուրաքանչյուր հաղթանակ կործանում է Թուրքիային, որովհետև Իտալիան ազգ է, իսկ Թուրքիան՝ ոչ» [2, c. 93]: Իսկ ի՞նչ է, ի վերջո, ազգն ըստ Ռենանի: Ջարգացնելով «ընդհանուր ոգու» գաղափարը՝ նա գրում է. «Ազգը ոգի է և հոգևոր սկզբունք: Կան երկու գործոններ, որոնք, ըստ էության, կազմավորում են այդ ոգին, այդ ոգեղեն սկզբունքը. մեկն անցյալն է, մյուսն՝ ապագան, մեկը հիշողության միջոցով անցյալի հարուստ ժառանգությանը տեր լինելն է, մյուսն ընդհանուր համաձայնությունն է և միասին ապրելու, իրենց հասած անբաժան ժառանգությունից համատեղ օգտվելու և այն շարունակելու ցանկությունը [2, c. 100]: Ռենանն ազգերի ձևավորման գործում հավասարապես կարևորում է քաղաքական և մշակութային գործոնները և դրանք չի հակադրում մեկը մյուսին:

Ազգակերտման մշակութային և քաղաքական գործոնները, որպես մեկ ամբողջության առանձին բաղադրիչներ, ներկայացված են գերմանացի փիլիսոփա Ֆրիդրիխ Մեյնեքեի «Պատմականության (հիստորիցիզմ) առաջացումը» աշխատության մեջ, որում արդեն գործածվում է «քաղաքական ազգ» եզրույթը: Սակայն ազգերը բաժանելով երկու խմբի՝ մշակութային և քաղաքական, գիտնականն, այդուհանդերձ, գտնում է, որ դրանք իրականության մեջ անբաժան են և չեն կարող գոյություն ունենալ միմյանցից զատված [3, c. 11-18]:

20-րդ դարի 30-ական թվականների սկզբին ազգերի և ազգայնականության հարցերով սկսեցին զբաղվել նաև ամերիկացի գիտնականները: Այդ հիմնախնդիրների ակադեմիական ուսումնասիրության «հայրը» համարվում է Կարլթոն Հեյլսը: Նրա կարծիքով՝ ժամանակակից կյանքում ազգայնականությունը երկու շատ հին երևույթների՝ հայրենասիրության և ազգային պատկանելության միասնությունն է: Միևնույն ժամանակ, Հեյլսն իր ուսումնասիրություններում արդեն նշում է ազգայնականության անցանկալի զարգացումների և անկանխատեսելի հետևանքների մասին: «Մենք, դժբախտաբար, ամբողջովին չգիտենք ազգայնականություն երևույթի բնույթը,- գրում է գիտնականը,- այլապես, կկարողանայինք ճիշտ հետևություններ անել» [4, p. 302]:

Հարկ է նկատել, որ ազգայնականության վերաբերյալ հասարակական բացասական կարծիքի ձևավորման գործում մեծ դեր են խաղացել ծայրահեղ դաժանությամբ հայտնի Առաջին համաշխարհային պատերազմը և, այնուհետև, 20-րդ դարի 30-ական թվականներին գլուխ բարձրացրած ֆաշիստական տրամադրությունները: Սակայն, թերևս, կար մեկ այլ պատճառ ևս, որը Եվրոպայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում գիտնականներին ստիպում էր վերանայել ազգայնականության նշանակությունը: Դա համընդհանուր ընդունված արժեքները կասկածի ենթարկելու, դրանք վերանայելու և այնուհետև մերժելու՝ այդ ժամանակաշրջանին բնորոշ մտայնությունն էր: Նիհիլիզմը, որն արդեն 19-րդ դարի վերջին իր տեսական մարմնավորման բարձրակետին էր հասել Նիցշեի աշխատություններում, 20-րդ դարի 30-ական թթ. ներթափանցել էր հասարակական և քաղաքական կյանքի բոլոր շերտերը: Այդ թվականներին ամերիկացի մեկ այլ գիտնական՝ Հանս Կոնը, գրում է, որ «որոշ հասկացություններ անհրաժեշտ է ինչպես պատմական, այդպես էլ արդիական առումով վերիմաստավորել: Այդ հասկացությունների շարքում է ազգայնակա-

նությունը, որը, մարդկության շահերից ելնելով, վերանայման կարիք ունի» [5, ք. 355]: Սակայն բանն այն է, որ ցանկացած երևույթ իր ծայրահեղ դրսևորման մեջ ունակ է ձևախեղվելու, և այդ առումով ազգայնականությունը բացառությունն չէ: Ազգայնականության (նացիոնալիզմ) ծայրահեղ դրսևորումներն են ազգայնամոլությունը (նացիզմ) և ցեղամոլությունը (ռասիզմ), որոնք, բնականաբար, ճիշտ չէ ազգայնականության հետ նույնացնելը:

1944թ. լույս է տեսնում ազգայնականության բնույթի և ծագման վերաբերյալ Կոնի առաջին աշխատությունը, իսկ 1955թ. հրատարակվում է նույնքան նշանակալի «Ազգայնականությունը. դրա իմաստն ու պատմությունը» գիրքը: Այս ուսումնասիրություններում Կոնը զարգացնում է «քաղաքացիական արևմուտքի» և «էթնիկ արևելքի», «արևմտյան և ոչ արևմտյան ազգայնականության» իր տեսությունը [6, ք. 47-51]: Կոնի համոզմամբ՝ պետության լավագույն ձևը, երբ յուրաքանչյուր ազգ ունենում է իր սեփական պետությունը, համեմատաբար նոր ժամանակների երևույթ է: Ի տարբերություն Կարլթոն Հեյլսի, որն ազգայնականությունը դիտարկում է որպես քաղաքական կրոն, որի առաքելությունը «ոչ թե ժողովուրդներին միավորելն է, այլ տարանջատելը, ոչ թե քաղաքակրթություններ ստեղծելը, այլ՝ ոչնչացնելը», Կոնը պնդում է, որ ազգայնականությունը համատեղելի է ազատականության հետ, քանի որ այն օժանդակում է անձի ազատությանը և նպաստում է ազգերի միջև փոխհարաբերությունների հաստատմանը [7, ք. 651]: Նրա կարծիքով՝ ժամանակակից ազգայնականության ակունքները պետք է փնտրել հրեական և հունական քաղաքակրթությունների մեջ, որոնք նաև ժամանակակից արևմտյան քաղաքակրթության ակունքներն են: Կոնի կարծիքով՝ թեև այդ ժողովուրդներին հայտնի չի եղել ազգային պետության գաղափարը, սակայն կան երեք հատկանիշներ, որոնք ժամանակակից ազգայնականությանը փոխանցվել են հրեաներից. առաջինը ընտրյալ ազգի գաղափարն է, երկրորդը՝ ազգային հիշողության կարևորումն ու ապագայի հանդեպ լավատեսությունը և երրորդը՝ ազգային առաքելության գիտակցությունը [8, Կ. 2-3]:

Ազգերի կազմավորման հարցում հասարակական և քաղաքական գործոնները 20-րդ դարի 50-ական թթ. սկզբին կարևորել է ամերիկացի գիտնական Կարլ Դոյչը: Նրա հաղորդակցական (կոմունիկատիվ) տեսությունը մեծ նշանակություն է ունեցել ազգային ինքնության և ազգայնականության

ուսումնասիրությունների բնագավառում՝ «մոդեռնիստական» տեսության ձևավորման համար: «Ազգայնականությունը և սոցիալական հաղորդակցությունը» աշխատության մեջ գիտնականը փորձում է ազգային ինքնության հիմնախնդիրն ուսումնասիրել հասարակական հաղորդակցության և փոխլրացման (կոմպլեմենտարության) համատեքստում: Ազգերի կազմավորումը, նրա կարծիքով, կապված է «մոդեռնի» հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալական փոփոխությունների, մասնավորապես՝ սոցիալական հաղորդակցության կարողությունների մեծացման և դրա շնորհիվ հասարակության համախմբվելու ավելի մեծ հնարավորությունների հետ: Դոյշի համոզմամբ՝ դրանք այն հասարակական փոփոխություններն են, որոնք տեղի են ունեցել 19-րդ դարում և բնորոշ են ժամանակակից ազգերին [9, p. 4]:

Պետք է նկատել, որ Դոյշի սոցիալական հաղորդակցության տեսությունը հիմնավորված է թվում միայն ներհասարակական կամ ներազգային հարաբերությունների պարագայում, սակայն, երբ այն դիտարկում ենք *միջազգային հարաբերություններում, ապա այն ազգակերտման գործոն լինելուց փոխակերպվում է համաշխարհայնացման գործոնի՝ խթանելով արդեն ոչ թե ազգային, այլ միջազգային մերձեցումն ու միավորումը:*

Ազգերի և ազգայնականության վերաբերյալ գիտական բանավեճում երկու միմյանց հակադիր մոտեցումների միջև առկա սահմանագիծը ոչ միշտ է հստակ ընդգծված: Էլի Կեդուրիի «Ազգայնականություն» աշխատությունն այն ուսումնասիրություններից է, որ, թերևս, գտնվում է հենց այդ սահմանագծին: Ազգայնականության հիմքում, նրա համոզմամբ, ազգային ինքնությունն է, որի կրողը մարդն է: Նա քննադատում է ազգայնականության ծայրահեղ դրսևորումները և կարևորում է մշակույթի նշանակությունը: Հեղինակի կարծիքով՝ անընդունելի է մշակույթները միմյանց խառնելը, որովհետև մշակույթի արժեքը նրա եզակիությունն ու ինքնատիպությունն է: Միննույն ժամանակ, Կեդուրին նշում է, որ քաղաքական գործիչների կողմից ազգայինի գաղափարը կիրառվում է տարբեր կերպ, և հաճախ այն փոխակերպվում է ռասայական խտրականության գաղափարախոսության: Քննադատելով այդպիսի ազգայնականությունը՝ նա իր գրքում հատկացրել է առանձին գլուխներ Օսմանյան փլուզվող կայսրության մեջ հայության և Իրաքում հրեաների բնաջնջման թեմաներին [10, p. 78-90]: Կեդուրիի կարծիքով՝ «ազգայնականությունն» աշխարհիկ երևույթ է և չի ներառում կրոնական ու հոգևոր գաղա-

փարախոսությունները և շարժումները: Այդ առումով նա ազգայնականությունը համարում է «մոդեռնի» դարաշրջանին և ժամանակակից ազգային պետություններին բնորոշ երևույթ:

1983թ. հրատարակվում է Էռնեստ Գելների «Ազգերը և ազգայնականությունը» աշխատությունը և գրեթե միաժամանակ՝ Բենեդիկտ Անդերսոնի, Էրիկ Հոբսբաումի ու Թերենս Ռեյնջերի՝ նույն տեսակետները զարգացնող հետազոտությունները: Նոր հայեցակարգն արագ մեծ տարածում է ունենում ոչ միայն գիտության բնագավառում, այլև զանգվածային լրատվամիջոցների և կրթական ծրագրերի միջոցով՝ լայն հասարակության շրջանում: Ընդհանուրը, որը միավորում է «մոդեռնիստական» հոսանքի ներկայացուցիչներին, այն է, որ նրանք բոլորն ազգերի կազմավորումը կապում են «մոդեռնի» դարաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետ: Բենեդիկտ Անդերսոնի բնորոշմամբ՝ «ազգը երևակայական համայնք է [11, p. 3-5], որը ձևավորվում է քաղաքական վերնախավի և մտավորականության կողմից՝ օգտագործելով ազգայնականության հնարավորությունները: Այդ մոտեցման համաձայն՝ ազգի անդամները համախմբված են ոչ թե կենսաբանորեն և պատմականորեն, այլ գիտակցաբար և քաղաքականապես:

Գելների համոզմամբ՝ ազգային միավորմանը նպաստել են նոր զարգացող արդյունաբերական հարաբերությունները և, մասնավորապես, տպագրության գյուտի շնորհիվ՝ գրագիտության ու մշակույթի տարածումը: Եթե համաձայնենք գիտնականի այն տեսակետի հետ, որ «ազգը», որպես մշակութային հավաքականություն, ձևավորվել է 18-րդ դարի վերջին [12, c. 146], ապա հարց է առաջանում. ովքե՞ր են այդ դեպքում ստեղծել հին մշակույթները և քաղաքակրթությունները, ովքե՞ր են այդ մշակույթների հեղինակները: Չէ՞ որ մշակույթը և ազգը պայմանավորված են միմյանցով. մի հանգամանք, որը չի հերքում նաև Գելները:

Ակնհայտ է, որ Գելների և «մոդեռնիստական» հոսանքի մյուս ներկայացուցիչների թիրախը մշակութային ազգն է: Գելների նպատակը ոչ այնքան ժամանակակից ազգի քաղաքական-քաղաքացիական, ինչպես նաև տնտեսական նոր հատկանիշների բացահայտումն է, որքան ապացուցելը, որ ազգը՝ հենց որպես սոցիոմշակութային հավաքականություն, «մոդեռնի» դարաշրջանի ծնունդ է:

«Մոդեռնիստական» հոսանքի մյուս անվանի ներկայացուցիչը՝ Էրիկ Հոբսբաումը, նույնպես համոզված է, որ ազգերը «մոդեռնի» դարաշրջանի ծնունդ են և մինչ այդ գոյություն ունեցած կրոնական, լեզվական և տարածքային հանրությունները չպետք է համարել ազգություն, որովհետև նրանց և «տարածքային քաղաքական կազմակերպության» միջև չի եղել այն սերտ կապը, որը համարվում է ազգի կարևոր ցուցանիշը: Ըստ Հոբսբաումի՝ տարածքային-ազգային պետությունները ստեղծվել են ազգայնականության շնորհիվ [13, p. 47]: Նա նշում է, որ միայն մի քանի պետությունների դեպքում կարելի է բացառություն անել. դրանք են Ռուսաստանը, Մերքիան, Անգլիան, Կասսիլիան, հնարավոր է՝ նաև Ֆրանսիան և Իռլանդիան, որտեղ «հաստատուն տարածքային, քաղաքական կազմակերպությանը», այլ խոսքով՝ «ազգային պետությանը» պատկանելության գիտակցումն ուժեղ է եղել: Նրա կարծիքով՝ այդ կապի բացակայությունն է, որ ազգայնականներին դրդել է ստեղծել իրենց «երևակայական համայնքները»: «Եթե 19-րդ դարի սկիզբն առաջադիմական, ժողովրդավարական, զանգվածային և քաղաքական ազգայնականության ժամանակաշրջան էր, - գրում է Հոբսբաումը, - ապա 19-րդ դարի երկրորդ կեսից էթնոլեզվական ազգայնականության կողմից սկսվում է թշնամանք սերմանող «հորինված ավանդույթների» հեղեղը. դրոշներ, զինանշաններ, հիմներգեր, հուշակոթողներ, պատերազմում զոհվածների հիշատակի օրեր, շքերթներ և այլ ծիսակատարություններ, որոնց միջոցով բավարարվում են հասարակության նոր պահանջումները» [13, p. 102]:

«Մոդեռնիստական» հոսանքի այսպես կոչված «գործիքային» («ինստրումենտալ») ճյուղի ներկայացուցիչը Ջոն Բրոյլին է, որն ազգայնականությունը դիտարկում է որպես քաղաքական շահերի և հետաքրքրությունների սպասարկման միջոց: Իր «Ազգայնականությունը և պետությունը» գրքում նա փորձում է հիմնավորել այն դրույթը, որ ազգայնականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ քաղաքական վերնախավի ձեռքին գործիք: Գրքի նախաբանում Բրոյլին գրում է. «Ազգայնականության մեջ կարևորելով մշակույթի, գաղափարախոսության, ինքնության և հասարակական խավերի դերը՝ մենք անտեսում ենք ամենահիմնականը, այն, որ ազգայնականությունը նախաևառաջ քաղաքականություն է և այդ քաղաքականությունն իշխանության հասնելու համար է» [14, p. 1]: Միննույն ժամանակ, Բրոյլին ազգայնական

գաղափարախոսությունը համարում է ազգի բարոյական ոգին բարձրացնելու կարևոր գործիք: Արժևորելով ազգային խորհրդանիշների, սովորույթների և մշակույթի դերը՝ նա նշում է, որ ներկայիս փոխակերպվող հասարակության մեջ «պանծալի անցյալը վերականգնելու գործում ոչ մի գաղափարախոսական հոսանք իր ազդեցության ուժով չի կարող համեմատվել ազգայնական քարոզչության ազդեցության հետ» [14, p. 68]:

Ազգային ինքնության և ազգերի կազմավորման հարցերի շուրջ ծավալված գիտական բանավեճի մյուս թևը՝ ավանդական հայեցակարգի կամ ազգերի պատմականության կողմնակիցները, հերքելով ազգերի կազմավորման «մոդեռնիստական-կոնստրուկտիվիստական» տեսությունը, հիմնականում նշում են, որ ազգն էթնոկենսաբանական արմատներ ունեցող սոցիոմշակութային երևույթ է: Այդ թևի ներկայացուցիչներն են այսօր Ջոն Արմսթրոնգը, Էնթոնի Սմիթը, Պիեր վան դեն Բերգը, Կլիֆորդ Գիրցը, Ջոն Հաթչինսոնը, Ադրիան Հասթինգսը, Սթիվեն Գրոսբին, Միրոսլավ Խրոխը և ուրիշներ: Էնթոնի Սմիթն իր «Էթնոսիմվոլիզմ և ազգայնականություն. մշակութային մոտեցում» գրքում այդ թևը մեկ բառով կոչում է «փրիմորդիալիզմ» (անգլերեն «*primordial*»՝ նախնադարյան բառից): Այնուհետև նշում է այդ ուղղության ճյուղավորումները, ինչպես, օրինակ՝ «փերենիալիստների» («*perennial*»՝ հավերժական), ովքեր շեշտում են ազգի շարունակականությունը և հարատև լինելը: Ազգերի հարատևության կողմնակիցները գտնում են, որ ազգը որպես կեցություն առաջնային է և ազգայնականության սկզբնաղբյուրն է: Այն ինքն իրեն սիրելու, այսինքն՝ ազգասիրության, ինչպես նաև ազգայնականության հեղինակն է: Իր հայտնի «Ազգերն ազգայնականությունից առաջ» գրքում Ջոն Արմսթրոնգը զարգացնում է ազգի շարունակականության և հավերժության գաղափարը՝ որպես հին ազգերի օրինակներ նշելով հրեաներին և հայերին և չբացառելով այդ շարքում հույներին և պարսիկներին [15, p. 4-5]:

Ի տարբերություն «փերենիալիստների», «նոր փերենիալիստներն» ազգը համարում են պատմության ակունքներից եկող էթնոմշակութային երևույթ, սակայն ազգայնականությունը՝ ոչ: Նրանց համոզմամբ՝ ազգայնականությունը, որն, առաջին հերթին, քաղաքականություն է և գաղափարախոսություն, բնորոշ է «մոդեռնի» դարաշրջանին: Եվ այդուհանդերձ, նրանք նույնպես գտնում են, որ ինչպես ամեն երևույթի առաջացումը, այդպես էլ ազգերի

ծագումը եղել է ի վերուստ կանխորոշված, և այն ենթակա չէ բացատրության, որովհետև առարկան ի գորու չէ հասկանալու իրեն ստեղծողին: Ազգի հարատևության մասին ուսմունքն առաջացել է մարդու և բնության փոխշաղկապվածության և մեկ ամբողջություն լինելու գաղափարից. ազգը հավերժական է այնքան, որքան ինքը՝ բնությունը: Այդ համատեքստում, բնականաբար, էթնոսի ձևավորման գործում կարևոր է համարվում տվյալ տեղանքի ազդեցությունը, ինչպես նաև «հայրենիք» հասկացության մեջ առանձնահատուկ կարևորվում է աշխարհագրական տեղանքի՝ որպես տվյալ էթնոսի ծննդավայրի և բնակավայրի, գաղափարը: Ազգերի բազմազանությունը կամ բազմամշակութային աշխարհի առկայությունը պայմանավորված է երկրագնդի աշխարհագրական և կենսաբանական բազմազանությամբ, որն առաջանում է նաև երկրագնդի տարբեր հատվածներում արևի ջերմության և լուսավորության տարբերություններից: Երկրագնդի տարբեր տարածություններում ապրող էթնիկ հանրությունները հանդիսանում են այն բնական հումքը, որի հիման վրա, պետության առկայության պայմաններում, ձևավորվում են ազգերն իրենց ուրույն սոցիոմշակույթով: Հետևաբար, էթնիկ բազմազանությունը, որ ազգային բազմազանության հիմքն է, բնությունից բխող, ի սկզբանե գոյություն ունեցող և հարատև երևույթ է: 18-րդ դարի վերջին այս հայեցակետը մենք տեսնում ենք Իոհան Հերդերի «Մարդկության պատմության փիլիսոփայության գաղափարներ» ծավալուն աշխատության մեջ: Նրա պատկերացմամբ՝ ազգային պետությունը բնական երևույթ է, որը, մի կողմից, կապված է տեղանքի, մյուս կողմից՝ ընտանիքի հետ: Բնական պայմանների հետ կապված է նաև ժողովրդի ոգին: Հերդերը գրում է. «Երկրագնդի վրա ինչպես բույսերն են աճում և հասունանում իրենց համար նախատեսված տեղանքներում, այդպես էլ՝ կենդանական աշխարհն ու մարդիկ: Մարդու յուրաքանչյուր ցեղատեսակ կարող է բնականոն զարգանալ միայն երկրագնդի իր տեղանքի վրա» [16, c. 42]:

Աշխարհագրական դիրքի, տեղանքի և, ընդհանրապես, բնության ազդեցության՝ որպես էթնոսների առաջացման և ազգերի կազմավորման գործոնի, գաղափարը կարևոր տեղ ունի 20-րդ դարի երկրորդ կեսի ռուս պատմաբան և ազգագրագետ Լև Գումիլյովի աշխատություններում: «Էթնոսը աշխարհագրական երևույթ է, որը կապված է լանդշաֆտի հետ, - գրում է գիտնականը:-

Եվ քանի որ երկրագնդի վրա լանդշաֆտները տարբեր են, ուրեմն միմյանցից տարբերվում են նաև էթնոսները»: Նրա համոզմամբ՝ «էթնոսները կենսաֆիզիկական կազմավորումներ են, որոնք միշտ այս կամ այն սոցիալական կաղապարի մեջ են: Այդ պատճառով հարցադրումը, թե որն է առաջնահերթ՝ կենսաբանականը, թե՞ սոցիալականը, անհիմն է, քանի որ մեկն առանց մյուսի գոյություն չունի»: Ինչ վերաբերում է էթնոսի ինքնությանը, ապա, Գումիլյովի կարծիքով, դրա չափորոշիչներն են ոչ թե լեզուն, պետականությունը, տնտեսությունը, այլ բնական ճանապարհով ձևավորված նրա վարքի կարծրատիպը: Սակայն կենսամիջավայրը (բիոսֆերան) փակ համակարգ չէ, այն ստանում է էներգիա, ինչպես արևից, ընդերքից, այդպես էլ տիեզերքից՝ լինելով գալակտիկայի մեկ մասնիկ [17, c. 13-19]: Գումիլյովը էթնոգենեզի ասպարեզում համարվում է «պասիոնար» տեսության հեղինակը (լատիներեն *պասիոն*՝ կիրք բառից): Գործողության մղող այդ էներգիան, ըստ Գումիլյովի, վերաբերում է իշխելու և նոր տարածքներ (ոչ միայն ֆիզիկական) գրավելու ձգտմանը: Նրա կարծիքով՝ Ալեքսանդր Մակեդոնացին աշխարհը գրավելու իր ձգտման մեջ, անշուշտ, եզակի երևույթ չէր. Կոռնելիուս Սուլլան, Էռնան Կորտեսը, Նապոլեոնը վտանգում էին իրենց կյանքը ոչ միայն նյութական հարստության համար: Բայց այդ դեպքում՝ հանուն ինչի՞, հարցնում է գիտնականը [17, c. 2]: Գումիլյովը գործողության մղող այդ շարժառիթին տալիս է լայն իմաստ՝ այն կապելով էներգիայի ավելցուկի հետ:

Ազգերի կազմավորման և ազգային ինքնության հիմնախնդրի ուսումնասիրությունների բնագավառում կարևոր դերակատարում ունեցող մյուս գիտնականը Կլիֆորդ Գիրցն է, որի կարծիքով՝ ազգի ինքնության մեջ առաջնայինը մշակույթն է: Դա այն առանձնահատուկ ինքնությունն է, որը հավաքականության կողմից ընդունված է և դրսևորվում է հանրայնորեն: Ազգային և անհատական հատկանիշները դիտարկելով ընդհանուր մշակույթի տեսանկյունից՝ նա եզրահանգում է, որ «մարդը կենդանի արարած է, որի վարքագիծն ամբողջովին պայմանավորված է նրա կենսափորձն իմաստավորող մշակութային այն ծրագրերով, ինչպիսիք են բառերի, ժեստերի, նկարների, երաժշտական հնչյունների և ցանկացած այլ՝ նյութական աշխարհի զգայական ընկալման և արտահայտման իմաստային խորհրդանիշների համակարգերը: Խորհրդանշական համակարգերի միջոցով մշակութային այդ

ծրագրերը կարգավորում և հաստատում են նաև նախնիներից ժառանգած կենսավորվածը» [18, c. 55-56]:

«Էթնոխորհրդանշական» տեսության հեղինակ Էնթոնի Սմիթը նշում է, որ ազգը չի կարող լինել ձևավորված համարվել, քանի դեռ այն իր ընդհանուր մշակույթով և պատմությամբ ձևավորված չէ որպես սոցիալական հավաքականություն: Նրա կարծիքով՝ ազգայնականությունն առաջանում է, առաջին հերթին, ժողովրդի հայրենասիրության և ազգակցության զգացումի հիման վրա: Նրա համոզմամբ՝ այդպիսի ազգերի օրինակ կարող են համարվել հրեաները և հայերը [19, pp. 8, 45]:

Հայ ժողովրդի մշակույթին և պատմությանն անդրադարձել է նաև Սթիվեն Գրոսբին, որը զարգացնում է ժողովրդի և երկրի (հողի) կապի գաղափարը՝ տարածքային գործոնը դարձնելով հավաքական ինքնության և ազգային պատկանելության կարևոր բաղադրիչ: Գիտնականի համոզմամբ՝ Հունաստանում և Արամեական քաղաք-թագավորություններում երկրամասի և ժողովրդի միասնության, միասնական հավատքի և օրենքների, ինչպես նաև կենտրոնացված ղեկավարության բացակայությունն այնպիսի փաստեր են, որոնք թույլ չեն տալիս այդ ժողովուրդներին համարել ազգություն: Մինչդեռ 4-րդ և 5-րդ դարերի քրիստոնեական Հայաստանը կազմավորված ազգի վառ օրինակ է, քանի որ այնտեղ առկա են բոլոր հատկանիշները, որոնք այսօր համարվում են ազգային առանձնահատկություններ՝ տարածքային սահմանների առկայությունը, հայրենիքի գաղափարը, ընդհանուր լեզուն, մշակույթը և ազգակցության ու ազգային պատկանելության զգացումը [20, pp. 33, 229-265]:

1990-ական թթ. վերջին «մոդեռնիստական» տեսությունը քննադատվել է նաև աստվածաբան և փիլիսոփա Ադրիան Հասթինգսի կողմից: Անգլիայի պատմական փաստերի հիման վրա նա փորձում է ապացուցել «մոդեռնիստների» տեսության անհիմն լինելը՝ գտնելով, որ, օրինակ, անգլիական ազգայնականությունը գոյություն է ունեցել դեռևս 14-րդ դարում, երբ անգլիական վերնախավը հրաժարվեց լատիներենից՝ այն փոխարինելով անգլերենով: Այնուհետև նա նշում է, որ հայ ժողովուրդը և եթովպացիները, որպես մշակութային ազգեր, շատ ավելի վաղ են ձևավորվել, քան Արևմտյան Եվրոպայի ազգերը: Ազգակերտման գործում նա կարևորում է լեզվի և գրականության դերը [21, p. 42]: Ազգերի ծագումը հնադարյան ժամանակաշրջանի հետ է

կապում նաև Դորոն Մենդելսը: Նա նույնպես, ինչպես և ազգի վաղեմությունն ընդունող մյուս գիտնականները, «ազգերը՝ ազգայնականությունից առաջ» հայեցակետի կողմնակիցն է: Սակայն Մենդելսը ոչ միայն ազգն է համարում հնագույն ժամանակների երևույթ, այլև ազգայնականությունը: Նրա կարծիքով՝ հին հրեաներն ունեցել են ազգայնական գաղափարախոսություն, որը դրսևորվել է հրեական պետությունը վերականգնելու ձգտման մեջ: Սակայն, հեղինակի կարծիքով, անտիկ շրջանի ազգայնականությունն, ի տարբերություն ժամանակակից ազգայնականության, ժողովրդի էթնիկ ինքնությունն արտահայտելու և պահպանելու միջոց է եղել [22, p. 13-14]:

Հայ ժամանակակից փիլիսոփայության մեջ «մոդեռնիստական» տեսությունը քննադատել է նաև Համլետ Գևորգյանն իր «Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ» գրքում: Նա գտնում է, որ եվրոպական ժամանակակից հասարակագիտական-քաղաքագիտական միտքը հաճախ, թեպետ և ոչ միշտ, գերազնահատել է պետության դերը ազգը բնորոշող հատկանիշների ձևավորման գործում: Անդրադառնալով պատմական ազգերի գոյության փաստին՝ գիտնականը որպես ապացույց հղում է անում հայ ժողովրդի պատմությանը՝ նշելով, որ «հայ ժողովրդի պարագայում մենք կարիք չունենք վիճարկելու Հոբսբաումի (և արևմուտքի տեսաբանների գերակշիռ մասի) այն դրույթը, որ պետությունը վճռական դեր է կատարում (միջավայր և պայմաններ է ստեղծում) ազգի կազմավորման համար: Այս դեպքում ևս Հոբսբաումի պնդումը հայերի մասին չի դիմանում պատմական-փաստական քննադատության: Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և հայկական պետության առաջացումը պատմաբանները վերագրում են մ.թ.ա. 6-րդ դարին, Արարատյան թագավորության ժամանակաշրջանին» [23, էջ 22-23]:

Ամփոփելով ազգային ինքնության և ազգերի կազմավորման ժամանակաշրջանի շուրջ ծավալված գիտական բանավեճի երկու հակադիր տեսությունների ուսումնասիրությունը՝ կարելի է նշել, որ նախորդ դարի 80-ական թթ. ձևավորված և այնուհետև լայն տարածում ստացած «մոդեռնիստական-կոնստրուկտիվիստական» տեսության հիմքում դրված խնդիրն, ըստ էության, արհեստածին է: Միայն հին քաղաքակրթությունների և մշակույթների գոյության փաստը բավարար պետք է լիներ, որպեսզի ազգերի հնադարյան ծագումը կասկածի ենթարկող հարց ընդհանրապես չառաջանար: Բանն այն է, որ

այն առանձնահատկությունը, որը Գելները վերագրում է, այսպես կոչված, «նոր ազգերին»՝ նույն սոցիոմշակույթին պատկանելը կամ ընդհանրական մշակույթի առկայությունը (մայրենի լեզու, ընդհանուր հայրենիքի գաղափար և այլն), բնորոշ են նաև հնադարյան ազգերին:

Ազգի և ազգայնականության փոխհարաբերության հիմնախնդրի և երկրնտրանքի առնչությամբ պետք է նշել, որ «ազգերն ազգայնականությունից առաջ, թե՛ հակառակը», ի սկզբանե անպատասխան հարցադրում է: Ըստ էության, հոգին և մարմինը, կամ նյութը և գաղափարը, իսկ տվյալ դեպքում՝ ազգը և ազգայնականությունը միմյանցով պայմանավորված և միմյանց փոխակերպվող երևույթներ են: Գործառական փոխազդեցությունների մեջ են նաև հայրենասիրությունն ու ազգայնականությունը: Ազգային ինքնությունը պահպանելու և ազգի շարունակականությունն ապահովելու համար ազգ-պետությունը պետք է կարողանա դաստիարակել ազնիվ ու հայրենասեր սերունդ: Այդ գործում կարևոր դերակատարում ունի պետության կրթական և դաստիարակչական գործառույթը: Որքան էլ ազգայնականությունը պարուրված լինի քաղաքական և տնտեսական տարբեր շահերով և շահարկումներով, միևնույն է, նրա առանցքը մնում է ազգակցության և հայրենիքի հանդեպ սիրո զգացումը, առանց որի այն գոյություն ունենալ չի կարող: Հակիրճ սահմանմամբ՝ ազգայնականությունն ազգային շահի գերակայությունն է անձնական շահի նկատմամբ: Սակայն դա ոչ թե նշանակում է, որ ազգայնականը պետք է մերժի անձնական շահի գաղափարը և մարդու իրավունքները, այլ նշանակում է, որ նա ազգային շահը համարում է գերակա արժեք և այն դիտարկում է որպես անձնական շահի երաշխավոր (գարանտ): Դա նաև չի նշանակում, որ ազգայնականը պետք է ատի մյուս ազգերին: Պարզապես, այն ազգին, որին նա պատկանում է, սիրում է ավելի, քան մյուսներին: Ազգայնականությունը բազմագործառույթային երևույթ է, որում կարելի է առանձնացնել միմյանց փոխշաղկապված երեք հիմնական գործառույթներ. ազգայնականությունն առաջին հերթին զգացմունք է (ազգասիրություն, հայրենասիրություն), հասարակական գիտակցության բաղադրիչ, երկրորդ՝ գաղափարախոսություն և քաղաքական ծրագիր է, երրորդ՝ ազգային շարժում է: Այս գործառույթները փոխկապակցված են միմյանց, քանի որ, օրինակ, հայրենասիրությունը, որն առկա է ազգային գիտակցության մեջ, դրսևորվում է նաև

գաղափարախոսության մեջ և անհրաժեշտ նախապայման է ազգային շարժումների առաջացման և հաջողության համար: Առանց հայրենասիրության ազգայնականությունը դառնում է ձև առանց բովանդակության: Եթե ազգը չլինի, ազգայնականությունը չի ունենա գործառույթ և կկորցնի իր իմաստը, քանի որ ազգայնականության գործառույթն ազգի վերարտադրության ապահովումն ու նրա մշակութային ինքնության և քաղաքական ինքնավարության պահպանությունն է: Երբ ազգ-պետության մեջ ազգայնականությունը, որպես պետական գաղափարախոսության բաղադրիչ, մերժվում է, խախտվում է ժողովրդավարության և ազատականության միջև հավասարակշռությունը: Առաջանում է անձնական և ազգային շահերի միջև բախում, ինչն, իր հերթին, խոչընդոտում է ազգ-պետության և նրանում ձևավորված քաղաքական ազգի արդյունավետ գործառույթունն ու բնականոն զարգացումը՝ խախտելով նաև մշակութային, քաղաքական և քաղաքացիական ոլորտների ներդաշնակությունը: Այդ առումով հայ ժամանակակից հասարակությունը կարելի է բնութագրել որպես ազգային ինքնորոշման սկզբունքի հիման վրա նոր կազմավորված, սակայն չամրապնդված քաղաքական ազգ, դեռևս դանդաղ ձևավորման ընթացքում գտնվող քաղաքացիական ազգ և պատմական հիշողությամբ գոյատևող մշակութային ազգ: Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև հետխորհրդային տարածքի մյուս ազգային պետությունների և քաղաքական ազգերի ձևավորման ընթացքում առաջացած հակասությունները, թերևս, հնարավոր է հասկանալ և մեկնաբանել ժամանակակից համաշխարհայնացման գործընթացների և տեղի ունեցող հասարակական արագընթաց փոփոխությունների ու փոխակերպումների համատեքստում: Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև հետխորհրդային մյուս պետությունների սահմանադրությունները ստեղծվել են արևմտյան ազատական գաղափարախոսության սկզբունքների հիման վրա: Հայաստանի Հանրապետության, որպես նոր կազմավորված ազգ-պետության, որդեգրած քաղաքականությունը, հիմնված լինելով ծայրահեղ ազատականության գաղափարի վրա, ազգի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում աստիճանաբար նվազեցնում է պետության դերակատարումը: Եվ քանի որ պետությունը և մշակույթը (ազգը) պայմանավորված են միմյանցով՝ այդ գործընթացն իր բացասական անդրադարձն է ունենում նաև ազգային ինքնության

պահպանության և վերարտադրության վրա: Միևնույն ժամանակ, ընտանիք հաստատությունը, որն ազգի վերարտադրության մյուս գլխավոր գործոնն է, նույնպես ենթարկվում է էական փոփոխությունների և կորցնում է իր նախկին իմաստը: Սոցիալական այս փոփոխություններով է հնարավոր բացատրել այն հանգամանքը, որ ազգերի կազմավորման մոդեռնիստական տեսությունն այսօր արդեն քննադատում են ոչ միայն ազգերի պատմականության կողմնակիցները, այլև, հակառակ տեսանկյունից, համաշխարհայնացման գաղափարախոսները, ովքեր, անցնելով «մոդեռնիստներից» մեկ քայլ առաջ, մերժում են ոչ միայն պատմական ազգերի, այլև ընդհանրապես ազգերի, ներառյալ՝ քաղաքական ազգերի գոյությունը:

Մարտ, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Ռուս ժան-ժալ*, Հասարակական դաշինքի մասին, Ե., Աշոտ Բլբուլյան, 2000:
2. *Ренан Э.*, Что такое нация? Собрание сочинений в 12-ти томах, т. 6, Киев, под ред. Михайловского, 1902.
3. *Мейнеке Ф.*, Возникновение историзма, М., Росспэн, 2004.
4. *Hayes C.*, The Historical Evolution of Modern Nationalism, N.Y., Published by Richard R. Smith Inc., 1931.
5. *Snyder L.*, The New Nationalism, N.Y., Cornell U. Press, 1968.
6. *Kohn H.*, The Idea of Nationalism: A Study in Its Origins and Background, N.J., New Brunswick, 2008.
7. *Wolf K.*, Hans Kohn's Liberal Nationalism: The Historian as Prophet, //www. JSTOR.org/
8. *Кон Г.*, Национализм: его смысл и история, М., 1955.
9. *Deutsch K.*, Nationalism and Social Communication. An Inquiry into the Foundations of Nationality., 2-nd ed. Cambridge, Mass. and N.Y, 1966.
10. *Kedourie E.*, Nationalism, Fourth expanded edition, Blackwell, Oxford, UK, 1993.
11. *Anderson B.*, Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, L., Verso, 1983.
12. *Геллнер Э.*, Пришествие национализма. Нации и национализм, М., Праксис, 2002.
13. *Hobsbawm E.*, Nations and Nationalism Since 1780, Cambridge, 1990.
14. *Breuilly J.*, Nationalism and the State, second edition, Manchester University Press, 1993.
15. *Armstrong J.*, Nations Before Nationalism, Chapel Hill Press, 1982.
16. *Гердер И.*, Идеи к философии истории человечества, М., Наука, 1977.
17. *Гумилев Л.*, Конец и вновь начало. Популярные лекции по народоведению, М., Наука, 1990.
18. *Гирц К.*, Интерпретация культур, М., РОССПЭН, 2004.
19. *Smith A.D.*, Ethno-Symbolism and Nationalism, A cultural approach, L., Routledge, 2009.

20. *Grosby S.*, Religion and Nationality in Antiquity, European Journal of Sociology, 1991.
21. *Hastings A.*, The Construction of Nationhood: Ethnicity, Religion and Nationalism, Cambridge University Press, 1997.
22. *Mendels D.*, The Rise and Fall of Jewish Nationalism, N.Y., Doubleday, 1992.
23. *Գևորգյան Հ.*, Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Ե. Նոյան տապաս, 1997:

ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Կարինե Հակոբյան

Ամփոփագիր

Հոդվածը նվիրված է ազգայնականության արդի արևմտյան հայեցակարգերի համադրմանը և ազգի ու ազգային ինքնության երկու տարբեր մոտեցումների առանձնահատկությունների վերլուծությանը: 20-րդ դարավերջին սկսված փիլիսոփայական և պատմական դիսկուրսը շարունակվում է նաև մեր օրերում: Հոդվածում նոր փաստարկների օգնությամբ հիմնավորվում է մոդեռնիստական տեսության կոնստրուկտիվիստական էությունը: Մոդեռնիստների՝ ազգերի հին պատմությունը ժխտելու միտումը դիտարկվում է արդի գլոբալիզացիոն գործընթացների և, մասնավորապես, նիհիլիզմի գաղափարախոսության համատեքստում:

ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ НАЦИЙ

Карине Акопян

Резюме

Статья посвящена сопоставлению современных западных концепций национализма и выявлению специфики двух разных подходов в изучении проблем нации и национальной идентичности. Философский и исторический дискурс, начавшийся в конце XX века, продолжается и в наши дни. В статье с помощью новых аргументов обосновывается конструктивистская суть модернистской теории. Стремление модернистов отрицать древнюю историю наций рассматривается в контексте современных глобализационных процессов и, в частности, идеологии нигилизма.

THE PROBLEM OF ETHNICITY FORMING***Karine Hakobyan***

Resume

The paper analyzes the contemporary concepts of nations and nationalism. Philosophical and historiographical debates about ethnicity, nations and nationalism began in the late 20th century and continue to date. The article presents the critiques of modernist approach to nationalism and new arguments for the historical and cultural nature of nations. The modernist tendency of denying ancient history of nations is considered in the context of contemporary globalization processes and particularly, in the context of the ideology of nihilism.

ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ԱՆՏԵՍՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արամ Մարդարյանց՝

Բանալի բառեր՝ հոգևոր ինքնավարություն, կենսափիլիսոփայություն, գոյավիճակ, հոգու արիություն, շահերի կենսագործում, կենսակերպ:

Մարդկության անցած ուղին ուսուցանում է, որ պետության զարգացման և բարգավաճման գլխավոր երաշխավորը մարդկային գործոնն է: Այն երկրները, որոնց ազգային ծրագրերի իրականացման գործընթացները նախընտրեցին արդյունահանող ճյուղերի կառուցման ճանապարհը, այդպես էլ չկարողացան հաղթահարել աղքատությունը: Իսկ այն երկրները, որոնք ոչ միայն սեփական, այլև փոխառու միջոցներն ուղղեցին հոգևոր ինքնավարության ամրապնդման և հմուտ մասնագետների պատրաստման գործին, կարողացան քայլել համընդհանուր բարեկեցության ճանապարհով: Եվ նրանց աճող սերնդի ազգանպաստ դաստիարակման, հոգևոր-մշակութային, գիտակրթական վերելքով ձևավորվեցին քաղաքացիական հասարակության կերտման անկյունաքարերը: Հետևաբար, ազգային կապիտալի ներդրման ամենաարդյունավետ ճանապարհը սկսվում է ազգանվեր և առաջադեմ մասնագետների պատրաստման գործընթացից: Ներկայիս զարգացած և առաջավոր երկրներում գիտական որոնումների հրամայականներից է դարձել մարդկային ստեղծագործական կարողությունների իմաստավորման գործը: Ապագա տաղանդներին ու հանճարներին հայտնաբերելուն զուգընթաց, ստեղծարար ուժերի բացահայտման ջանքերը հասնում են ընդհուպ մինչև սոցիալական, գաղափարական, մշակութային, ազգային-էթնիկական և նույնիսկ գենետիկ գործոնների քննությանը: Հոգևոր-ստեղծարար կարողություններով հայտնի հայ ժողովրդի հիմնական ճանապարհը եղել և մնում է հոգևոր-մշակութային գործնական ուղղվածությունը: Ներկայումս մեր ստեղծագործական ներուժին

¹Նիժնի Նովգորոդի Ն.Ի. Լոբաչևսկու անվան պետհամալսարանի ասպիրանտ:

տեր դառնալն ուղղակի պարտադիր հանգամանք է դարձել: Խնդիրը վերաբերում է անկախ պետականության կերտման մշակութային արժեքների համալիրին: Դրանք, որպես նոր իրողություններ, ժողովրդի կենսակերպում լուրջ փոփոխություններ են պարտադրում, ստեղծված պայմաններին հարմարվելու կարողություններ ենթադրում: Սեփական ճակատագիրը տնօրինելու ունակություն, ինքնավարության խնդիրների հանդեպ համարժեք վերաբերմունք է պահանջվում: Երևույթ, որի բովանդակությունը մշակութային է, քանզի առնչվում է ժողովրդին բնութագրող այնպիսի հատկանիշների հետ, ինչպիսիք են վարքագիծը, սովորույթները, մտածելակերպը և այլն:

Մարդկային պատմությունը վկայում է, որ երբեմն երկրներն առանց պատերազմի պարտություն են կրել, որի հետևանքները զգացել են երկար ժամանակ: Նրանք ապրել են իրենց պատմության սարսափելի մի փուլ, քանզի խախտվել է հավասարակշռությունը: Ստեղծվել է անվերահսկելի մի իրադրություն, երբ երկրները հայտնվել են այլ ներգործության ոլորտում՝ ընկնելով օտար տերությունների իշխանության և ազդեցության տակ: Հետևաբար, բոլոր ազգերը չէ, որ կարողացել են պահպանել գոյությունը և հասնել մինչև մեր օրերը: Պատմությունը հիշատակում է ժամանակին իշխող ու նշանավոր ազգեր, որոնք օժտված են եղել քաղաքական ինքնուրույն իշխանությամբ և հզոր ռազմական ուժով: Մակայն քաղաքական անկախությունը կորցնելուց հետո նրանք աստիճանաբար ձուլվել են ուրիշ ժողովուրդներին ու անհետացել: Մակայն եղել են ժողովուրդներ, որոնք քաղաքական անկախությունը կորցնելուց հետո էլ կարողացել են գոյատևել՝ պահպանելով իրենց կերպն ու իմաստությունը, ազգային դիմագիծը, շարունակելով իրենց պատմական առաքելությունը: Այդպիսի ճանապարհ կերտեց հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ պայքարել է քաղաքական անկախության համար, երբ իր գոյության ողջ ընթացքն առավելապես ուղեկցվել է ոչ թե հանգիստ կյանքով, այլ արժանապատիվ հարատևման պայքարով՝ կերտելով իր անձնագիրը, ինքնատիպ բազմադարյա մշակույթը, առաքինի կերպարը, հազարամյա նպաստը բերելով համամարդկային արժեքների կերտման գործընթացին: Քաղաքական ինքնուրույնությունը կորցնելով հանդերձ՝ հայ ժողովուրդը կարողացել է պահպանել հոգևոր ինքնավարությունը: Եվ հենց դրա շնորհիվ է, որ վայելել է առաջադեմ մարդկության սերն ու համակրանքը: Այդ

ամենի վկայությունն է հայ ժողովրդի Մատենադարանն իր հանրահայտ ու հազվագյուտ ձեռագիր մատյաններով: Բազմաթիվ մատյաններ իրենց վրա առ այսօր կրում են ավերածությունների և անմեղ գոհերի արյան հետքերը: Մատյանը հանդիսացել է զենք, ինքնապաշտպանության միջոց, հզոր վահան, կյանքի իմաստ, որի շնորհիվ ժողովուրդը պայքարել է հանուն ազատության, ազգապահպանության և հոգևոր ինքնավարության:

Մերօրյա կենսապայմանները թելադրող բոլոր իրադարձություններն ու երևույթները նույնպես բնութագրվում են իրենց արտաքին կերպարանքով ու ներքին իմաստով: Եվ եթե արտաքին կերպարանքն ընդամենը մարմինը և ձևն է, ապա ներքին իմաստը հոգին է ու բովանդակությունը: Սովորաբար, յուրաքանչյուր իրադարձություն և երևույթ միայն արտաքին ձևի և ներքին իմաստի ներդաշնակության պարագայում է էականորեն դրսևորվում և արդյունավետ լինում: Հայ ժողովրդի արժանապատիվ հարատևման և առաջընթացի հնարավորությունը ևս պայմանավորված է եղել նրա կենսունակության արտաքին ձևի և ներքին բովանդակության ներդաշնակությամբ: Ձևի և իմաստի ներդաշնակությունը ճանաչելի է դարձնում դրանք կրողներին: Եվ երբ չեն ըմբռնվում ներքին իմաստը, հոգին, կամ երբ այդ ընդունակությունը կորչում է ժամանակի ընթացքում, առանց հասկանալու պաշտպանում են ձևը: Իսկ ձևի և ձևապաշտության միջավայրում շարունակ այլակերպվում են ազգանպաստ արժեքների և ձեռքբերումների թե՛ գործունեությունը, թե՛ ինքնադրսևորման հնարավորությունները: Դժվարանում է այն անհատների վիճակը, ովքեր շարունակում են զգալ, հասկանալ, գնահատել իրերի և իրադարձությունների ներքին իմաստն ու նշանակությունը, առավել ևս՝ նրանց ներդաշնակությունը: Այդ պայմաններում է, որ հաճախ պատմական ձեռքբերումներն ընկալվում են արտաքինապես: Հետևաբար, ներդաշնակությունը խախտվում է, եթե իրերն իրենց տեղում չեն հայտնվում: Խեղաթյուրվում է իրականությունը, անտեսվում են վճռորոշ երևույթները, և միջավայրը վեր է ածվում գաղջ մթնոլորտի: Նման պայմաններում է, որ ամեն ինչ խառնվում է իրար: Այդ շիլաշփոթի մեջ է, որ հանրությունն աստիճանաբար կորցնում է իրադարձությունների ներքին իմաստի ըմբռնման ունակությունը: Առանց երևույթների խորքը թափանցելու՝ ընկալում է դրանք գուտ մակերեսորեն և հետզհետե ընտելանում է պարզունակին, ձևին ու ձևականությանը: Եվ ձևն ու ձևապաշ-

տությունն անարգել նվաճում են ասպարեզը, դառնում կենսակերպ: Իսկ նրանք, ովքեր դեռևս շարունակում են հասկանալ իրադարձությունների պատճառահետևանքային կապը և բնորոշել երևույթների ներքին իմաստն ու բովանդակությունը, ենթարկվում են տեսանելի ու անտեսանելի հալածանքների:

Քաղաքական գործիչների ջանքերը միշտ չէ, որ հասնում են այն իրավիճակին, որն ազդարարում է պետությունների վճռականությունը՝ խաղաղ ժամանակ պահպանել և ուժեղացնել նպատակների և գործողությունների միասնականությունը: Գերտերությունների միջև համագործակցության և փոխըմբռնման առկայության դեպքում միայն կարելի է իրագործել մարդկության բարձրագույն իդըլ՝ հաստատուն և տևական խաղաղությունը, ինչպես նաև աղքատության, հետամնացության, ահաբեկչությունների, քառսի և բռնությունների դեմ միասնական պայքարը:

Աշխարհաքաղաքական զարգացումների արդի դարաշրջանում զանգվածային լրատվամիջոցներն ու համացանցը ողողված են քաղաքական իրադարձություններով: Տեղեկատվական պայքարն ավելի է խորանում և նորանոր տարածություններ ընդգրկում: Պետությունները միջազգային ասպարեզում իրենց դիրքերն ամրապնդելու, ձեռքբերումները պաշտպանելու և երբեմնի կորուստները վերականգնելու խնդիրներ ունեն: Յուրաքանչյուր պետություն հետևում և ուսումնասիրում է ինչպես իր հակառակորդի և մրցակցի, այնպես էլ աշխարհի քաղաքական կյանքի ընթացքին՝ հաշվի առնելով նրանց քայլերը, աշխատելով հասկանալ հանդիպումների ու հայտարարությունների բուն նպատակը և ըստ այդմ համարժեք քայլեր կատարելով: Եվ այդ ամենն աշխատում են իրականացնել այնքան հստակ ու ներդաշնակ, ինչպես պահանջում են միջազգային նորմերն ու իրենց շահերը:

Պատմական բարդ իրադարձություններով լեցուն նորագույն դարաշրջանում առավել կարևոր է դառնում ազգանպաստ, արժանավայել փոխհարաբերությունների կերտման, հոգևոր ինքնավարության ամրապնդման և քաղաքացիական հասարակության կերտման պահը, արժանապատիվ հարատևման նախադրյալների վերաձևակերպման պահը: Քանզի, հզոր պետություն և քաղաքացիական հասարակություն կերտած ժողովուրդների պատմությունը բազմիցս վկայել է, որ պետականաշինությունը, որպես ձուլման կամ գավառականացման սպառնալիքների կանխարգելիչ համակարգ, առաջին հերթին ազգանպաստ հոգևոր-մշակութային գործընթաց է:

Պատմական բարդ ժամանակաշրջանում, երբ ստեղծված միջազգային իրադրությունը պարտադրում է խորհել արտաքին քաղաքական կողմնորոշման մասին, ակտիվացել են տարբեր ասպարեզների, ներքին ու արտաքին միջավայրների տարաձայնությունները: Չուտ ձևից բխող անախորժություններով խցանված մթնոլորտում խեղվել ու խեղաթյուրվել են իմաստնության ճանաչման, հանգամանքների խորքը թափանցելու մեզ ընձեռված հնարավորությունները: Հնուց ի վեր հայ իրականության մեջ քաղաքական ակտիվությունը դրսևորվել է ոչ թե հասարակության շերտերի, այլ առանձին անհատների շրջանում: Եվ ամեն անգամ նախատեսված ճանապարհից շեղվելու պատճառները հանդիսացել են ապակողմնորոշվածությունը և թյուրիմացությունը, ինչպես նաև միմյանց հանդուրժելու, ընկալելու, լսելու, փոխըմբռնումով մոտենալու և գնահատելու կամքի բացակայությունը: Եվ այստեղ է, որ կարևոր և խիստ անհրաժեշտ համախմբման ունակությունը տեղը զիջում է միմյանց հակադրվելուն, ձևավորում ամեն բացասականի հավատալու և հետևելու հակում, որն էլ պարարտ հող է հանդիսանում տեղեկատվածին սպառնալիքների ներքին և արտաքին ներգործության համար:

Հատուկ նպատակով ստեղծված տեղեկատվական ներգործության լաբիրինթոսում խառնվում են մնայունն ու անցողիկը, ազգային մեծ խնդիրներն ու նեղանձնային հարաբերությունները, պետականամետ մտածելակերպն ու ապազգային վնասակար գազրախոսությունը: Այդ ամենի արդյունքում կարևորագույն հարցերը շփոթում են անհիմն, անհեռանկար գայթակղությունների հետ: Հանրության ուշադրությունն ու գործունեությունը ժամանակավորապես շեղվել են կյանքի բնականոն ընթացքից: Եվ նրա ջանքերի գերակշիռ մասը ծախսվել է իմաստագուրկ քայլերի, միմյանց խոչընդոտելու, ենթախնդիրը խնդիր դարձնելու, մյուսներին անվանարկելու, ասպարեզից դուրս մղելու վրա: Եվ նման պայմաններում դժվար է նկատել, թե ինչ աղետներ են ներխուժում անմիաբանության ավերված դոնով: Հետևաբար, մեր ժողովրդի պատմության դառը փորձը և դժվարին ճանապարհը մեզ վերջապես պետք է ստիպեն սթափվել և մի կողմ թողնել ներկուսակցական հակամարտությունները: Քանզի, եթե ազգովին չմեկտեղվենք և շարունակենք մեր ուժն ու եռանդը պառակտել ներքին տարաձայնություններով, ապա ասպարեզը կնվաճեն մոլորություններն ու ձախողումները:

Շատ է խոսվել մեր ազգային անմիաբանության, կուսակցությունների անհամերաշխության մասին: Սակայն կա մի առանձնահատկություն՝ կուս միասնության ինքնադրսևորումը համազգային վտանգի պահին: Այդօրինակ միասնության մերօրյա վկան Արցախի հարցն էր: Համայն հայությունը, խորապես գիտակցելով խնդրի վճռական նշանակությունը, միասնական պոռթկումով կանգնեց Արցախի կողքին: Տնտեսական, սոցիալական բարեփոխումներով հրապուրվելն անիմաստ է և չի կարող միավորել մեր ողջամիտ ժողովրդին: Եթե չկա վերջնական նպատակ, ապա պայքարը կարող է նպաստել ազգի տրոհմանը: Գոյություն ունի միայն մեկ խնդիր, որի լուծումը ռեալ է, որի իրականացումն իսկապես կնպաստի մեր ազգի հզորացմանը, նպատակ, որին հասնելու ճանապարհին իշխանության հարցը լուծվում է բնական ձևով, որպես միջոց և ոչ թե որպես նպատակ, չտրոհելով մեր ազգային միասնությունը, նպատակ, որը կարող է համախմբել ողջ աշխարհի հայությանը և հանդիսանալ շարժիչ ուժ. դա անկախ պետականությունը վերականգնելու հարցն է: Արտաքին վտանգները միայն կարող են նպաստել մեր ժողովրդի միասնությանը: Դա լավ են հասկացել մեր թշնամիները և ձգտել են ամեն գնով տրոհել միասնականությունը: Գոյություն չունի վերացական միասնություն, միասնությունը ստեղծվում է վեհ գաղափարի, իրականանալի նպատակի շուրջ: Այդ նպատակը, այդ գաղափարը անկախությունն է:

Երկրի տնտեսական զարգացման նոր միտումները և հանրության ներգրավումը երկրի քաղաքական կյանքում օժանդակել են իշխող կուսակցություններին՝ համարժեք մոտեցումներ որոնել ներքին և արտաքին քաղաքականության մեջ՝ փոփոխվող պայմաններում, արժեքների և ձեռքբերումների հանդեպ հարյուրամյակներով դրսևորված ազգանպաստ վերաբերմունքի ներդաշնակությունը պահպանելու համար: Գաղափարների տեղայնացմանը զուգընթաց, իրականացվել է քաղաքական կուսակցությունների գործունեության նորանոր կազմակերպչական ձևերի մշակում: Կուսակցության հզորությունը պայմանավորված է հանրային վստահության աստիճանով: Ուստի, հանրային կազմակերպությունները հրավիրվել են մասնակցելու կուսակցության գործունեությանը՝ նրանց ռեալ դեր ապահովելով ներքին ու արտաքին քաղաքականության գործընթացներում:

Հայ ժողովրդի բազմադարյա պատմաքաղաքական, հոգևոր-մշակութային, գիտակրթական փոխառնչությունների հարցերն աշխարհի առաջա-

դեմ ժողովուրդների հետ, մշտապես ուսումնասիրվելով տարբեր համատեքստերում, նպաստել են այդ ժողովուրդների հետ հայ ժողովրդի բարեկամական ջերմ հարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը:

Հայ ազգային մշակույթը կարողացել է արտացոլել մեր մաքառումների երկար ու դժվարին ճանապարհը: Մեր ազգային դիմագիծը մարմնավորող գործիչներն ուսումնասիրել են իրադարձությունները և անցյալը կապելով ներկային՝ կերտել ազգային կենսակերպի պաշտպանության դարաշրջաններ: Անհամարժեք վերաբերմունքն ազգային արժեքների նկատմամբ նպաստում է անտեղյակության ձևավորմանը: Մինչդեռ դրանց ընկալման միջոցով կարելի է տեսնել հեռուն, թափանցել խնդրահարույց իրադարձությունների խորքերը, բազմակողմանի վերլուծության ենթարկել իրականությունը և գտնել մեր բարդ ու դժվարին ժամանակները հաղթահարելու համազգային ճանապարհը: Անընդհատ փոփոխվող կյանքում շարունակ զգացվել է հանգամանքների ու իրադարձությունների ընկալման, իմաստավորման, վերիմաստավորման կարիքը: Նորություն չէ, որ մշտապես աղավաղվել է հայ ժողովրդի բազմադարյա պատմությունը, նույնիսկ ոչ վաղ անցյալի պատմությունը: Դրա արդյունքում է, որ ձևավորվել է մարդկանց մի խումբ, որն անձանոթ է իր ազգի պատմությանը, մշակույթին ու հանճարներին, չգիտի, թե ով է ինքը, որտեղից է գալիս և ուր է գնում: Այնինչ, հարկ է ընկալել այդ ընթացքի ներքին իմաստն ու փիլիսոփայությունը:

Այժմ, երբ վերստին հրապարակի վրա են դրված մեր ներքին և արտաքին քաղաքական կողմնորոշման խնդիրները, դարձյալ առկա են ինքնատիպ ներքին և արտաքին հակասական գործընթացներ: Արդյունքում՝ ստեղծվում է մի իրադրություն, որն ավելի է շեղում ճշմարիտ ճանապարհից, աղավաղում իրերի իսկական դրությունը, խեղաթուրում իրականությունը և ապակողմնորոշման տեղիք է տալիս: Հարկ է ոչ թե քննադատել, այլ խորապես հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ պատմական բարդ ու դժվարին ժամանակների պայմաններում է հայ ժողովուրդը ստեղծել ու մշակել գոյատևման, ինքնապաշտպանության քաղաքականությունը՝ միաժամանակ ձգտելով ունենալ քրիստոնյա հզոր դաշնակից կամ հովանավոր: Պատճառն ըմբռնելու և հասկանալու համար երևույթը պետք է դիտել բնության ու պատմության օրենքների ներդաշնակության համատեքստում: Մեր ժողովուրդը երկար

դարեր պարտադրված է եղել պայքարել բարբարոս ժողովուրդների դեմ: Մաքառել է ու չի ոչնչացել, հարատևել է արժեքակիր տեսակի գնով, հոգևոր ու ֆիզիկական անձնագոհության շնորհիվ: Այդպիսին է բնության օրենքը: Իսկ այն դեպքերում, երբ թուլանում է իրականության զգացողությունը, արժանապատիվ հարատևման և առաջընթացի պայքարը տարվում է անարդյունավետ ու անկազմակերպ: Հետևաբար, մեր ազգային իմաստության, հոգու արիության և առողջ բանականության ուղեկցությամբ օբյեկտիվ իրականության ճանաչումն ինքնին կհանդիսանա իրականության խեղաթյուրման ներքին և արտաքին սպառնալիքների կանխարգելիչ գործընթաց: Եվ պատճառներն այլևս չեն որոնվի մեզնից հեռու, մեզ հետ կապ չունեցող միջավայրում, քանզի միասնական համազգային միջոցառումները, ներսից ծավալվելով, վերջ կտան ներքին անմիաբանությանն ու անհանդուրժողականությանը:

Նոր հազարամյակի մարտահրավերների նպատակը երբեմն թվում է հին ու հասկանալի, սակայն ազդեցության բազմաբնույթ ձևերն ու մեթոդները որքան անձանոթ են, նույնքան էլ անկանխատեսելի: Ժամանակակից գլոբալացման պայմաններում հայության մշակութային անվտանգության պահանջը՝ բովանդակությամբ ազգային և մոտեցումներով արդիական, այն համազգային գործընթացն է, որը կընդգրկի հայ հոգևոր-մշակութային բոլոր ոլորտները: Անհամարժեք մոտեցումները կարող են նրա թուլացման պատճառ հանդիսանալ, որն ընդունակ է հանգեցնելու ազգային դիմագծի այլակերպման: Չի կարելի անտեսել, որ հայ ժողովրդի մշակույթը, իրականացնելով ազգային ինքնապաշտպանական գերխնդիրը, կրել է բարդ ժամանակների ծանրությունը՝ բացահայտելով իր վեհ առաքելության խորությունը: Առաքելություն, որի մշակութային ավանդույթների և կենսափիլիսոփայության ձևավորումն սկսվել է դեռևս այն ժամանակ, երբ քաղաքակրթության բնօրրանը Հին Արևելքում էր: Հետևաբար, վերստին անհրաժեշտություն է անդրադառնալ մեր գրականությանը՝ որպես երկարատև տեղեկատվական ներգործության միջոցի, որն անփոխարինելի դերակատարություն ունեցավ հայ հասարակական-քաղաքական մտքի ձևավորման գործընթացներում՝ կիսելով հարազատ ժողովրդի ճակատագիրը: Չարգացման երկու ուղի անցնելով՝ այն ասպարեզ բերեց հայ գրականության արևելահայ և արևմտահայ ճյուղերը: Նրանց տարբերությունը դրսևորվեց ոչ միայն լեզվի հարցում,

այլն ժողովրդի երկու հատվածների ճակատագրով թելադրված գոյավիճակների ու պայմանների խնդիրներում: Հայ գրականության արևմտահայ և արևելահայ թևերի առնչությունը մշտապես ուղեկցվել է միմյանց ճանաչելու և արժևորելու խնդիրներով: Այդ երևույթն իր վրա է հրավիրել գրողների, գրականագետների, պատմաբանների և, առհասարակ, մտավորականության ուշադրությունը, որը երբեմն դրսևորվել է հակասական ու իրարամերժ կարծիքներով: Հայ գրականության երկու ճյուղերի առկայությունը գիտակցվում էր դեռևս 19-րդ դարում [1, էջ 314]: 20-րդ դարասկզբին հայ իրականության մեջ սկսվեց աննախընթաց մշակութային շարժում գեղարվեստի բոլոր ճյուղերում, հայագիտության և հայրենագիտության բոլոր ասպարեզներում [2, էջ 8]: Երկու հատվածներում էլ հայ գրականության վերածնության հույսերի և մեծ հավատի հոգեբանությունն էր ապագայի գեղագիտական սպասելիքների ու կանխորոշումների հիմնական բովանդակությունը: Դեռևս 1921թ. ՀՕԿ կազմավորման գործերով Հովհ. Թումանյանն այցելեց Պոլիս, ինչը մեծ նշանակություն ուներ հայության երկու հատվածների համար, քանի որ կապերի «ոսկե կամուրջ» գցվեց [3, էջ 4]: Այդ տարիներին Պոլսի գրական շրջանակներում մեծ հեղինակություն համարվող Հակոբ Օշականը ազգային գրականությունը համարում է ժողովրդի հոգեկերտվածքի արտահայտություն. «Գրականություն մը ժողովուրդ մըն է», «Գրականություն մը արյան երևույթ է, միտք, խելք, ոճ, արվեստ ըլլալէ առաջ» [4, էջ 96-97]: Այսինքն՝ գիրը, գրականությունը գոյություն ունեն և կարող են դիտարկվել միայն որպես երկրի կերպար, ինչպես բնաշխարհը, այդ երկրի մարդը, երկրի պատմությունը, կենցաղը, խոսքը... Գրականության արժևորման նրա չափանիշներն են հայոց աննկուն ոգին, հայ շունչը, հայոց հոգու ավազանը պղտորություններից, նստվածքներից, օտարոտի ազդեցություններից մաքրագործելու ճիգն ու ջանքը [5, էջ 18]: 1914թ. Կ.Զարյանի հետ հիմնադրած «Մեհյանի» հանգանակում նա գրում է. «...մենք պիտի նայինք արուեստագետին վրայ մեր իսկ խառնուածքին հայելիովը... Մեր գնահատումներուն մէջ մենք պիտի մնանք բացարձակապէս անկախ ընկերային պայմաններուն ստրուկ որոշադրութիւններէն ոչ մէկ հոսանք, ոչ մէկ կուսակցութիւն, ոչ մէկ գոեհիկ կամ յաջողուած հավատք կշիռ չունին մեզի համար: Մենք անկախականներ ենք: Ու մեր վճիռները կը բխին մեր անհատականութենէն»: Այսպիսին էին ազգա-

նպաստ երանգներով ընդգծված նրա չափանիշները: Հիշարժան է Գյոթեի խոսքն այս առումով. «Մարդ երբ խոսում է կամ որևէ բան է ուզում ապացուցել, այդ պահին կամա թե ակամա միակողմանի է դառնում, առանց անջատելու, առանձնացնելու չի կարելի որևէ բան ապացուցել» [6, էջ 328]:

Երկու հատվածների գրականությունների նկատմամբ անհրաժեշտ վերաբերմունքը հաճախ իրականանում էր որոշակի կարծրատիպերի ազդեցությամբ, որոնց առանցքային միտումը արվեստի ինքնաբավությունն էր, արվեստը արվեստի համար, թե արվեստը կյանքի համար: «Գրաքննադատական մտքի ձևավորման ողջ ընթացքում հայ իրականության մեջ մեծ մասամբ ղեկավարվում էին կամ-կամ սկզբունքով: Հազվադեպ էին այն մտածողները, որոնք գոնե տեսության բնագավառում հնարավոր էին համարում և-և սկզբունքը» [7, էջ 370]: Որոշակիորեն դժվար էր միմյանց զգացական ու իմացական գրական արդյունքի փոխադարձ ընկալումը: Այս տարանջատվածությունը հանգեցրեց հայ ազգի երկու հատվածների գրական ընկալումների միջև հոգեբանական պատնեշի գոյացմանը, որի հաղթահարումը հսկայածավալ աշխատանք էր պահանջում: «Ու կարճ ըլլալու համար դեմ ենք տափակին ու կեղծին, խոշորին ու սուտին, թեթեւին ու հովին, բռնիին ու ներկուածին, տենդենցիոզին ու դեկրետով բռնադրուածին: Յավակնոտ ալ չենք արուեստը մերն ու միայն մեր պապենական իրը, ձիթաստանը ընդունելու: Ազատութիւն: Ահա մեր ուզածը: Ու կը տառապինք երբ նոյն այդ ազատութեան անունով այնքան գերութիւն կը դիզեն մեր գրիչներուն» [8, էջ 38]:

Մեծություններին ընդունել-չընդունելու խնդիրը վաղուց հայտնի է իր անբացատրելիությամբ: Ժամանակին Հ.Օշականը, Կ.Զարյանը և հայ ազգի մյուս մեծություններն աշխատում էին հարթել համահայկական, համազգային գրականության ուղին և տալ հայ գրականության հետագա զարգացման չափորոշիչները:

Հոգևոր ինքնիշխանության հիմքը հոգևորի համադրությունն է և քաղաքակրթությունների երկխոսությունը, որի դեմ էլ ուղղված են հարձակումները, որոնց հիմնական սկզբունքը համարվում է քաղաքակրթությունների բախման և հոգևորի ժխտման թեզը: Ժամանակն է հաշվի առնել, որ պետականության ամենաթույլ օղակը տեղեկատվա-գաղափարական ոլորտն է: Հետևաբար, ազգային դիմագծի պահպանման համար պետք է ընդունել.

հոգևոր տիրապետություն, առաքիներություն և ներքին ազդեցիկության արտացոլման մեխանիզմի հաստատում:

Ժամանակների փոփոխությունները, բնականաբար, վերափոխում են նաև քաղաքական ու տնտեսական կացութաձևերը՝ իրենց հետ բերելով փոխհարաբերությունների վերանայման ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ նախադրյալներ: Եվ եթե այդ կապակցությամբ քաղաքական և տնտեսական բնույթի փոխառնչությունների վերիմաստավորման խնդիրն օրինաչափ և հասկանալի է, ապա հոգևոր-մշակութային ոլորտների մշտական ներգործությունն անքննելի է: Հոգևոր-մշակութային նվաճումները հարյուրամյակների հեռավորությունից անգամ շարունակում են դրսևորել իրենց արդյունավետ ներգործությունը: Հայ մշակույթի հսկայական պաշարը, երբևէ չկորցնելով իր ինքնատիպ դիմագիծը, ուրույն ազգային բազմադարյա ավանդույթներն ու հոգեբանական առանձնահատկությունները, իր արժանավայել տեղն է զբաղեցրել համամարդկային արժեքների կերտման գործընթացներում: Նրա կարևորագույն գիծը եղել և պետք է լինի հայկական իրականության, հայ ժողովրդի կերպարի, ազգային առանձնահատկությունների պատկերումը:

Կենսապայմանները բարելավելու, անարդարությունների սահմանափակման վերաբերյալ բարենորոգիչների առաջադրած բարեփոխումները կանխարգելում էին հեղափոխական պայքարը, նպաստում այն պատկերացումների տարածմանը, որ անցնում բարեփոխումների պայմաններում հնարավոր է հասնել սոցիալական արդարության: Բարենորոգման գաղափարների տարածմանը զգալի չափով նպաստել են գրողներն ու հրապարակախոսները: Իրենց ստեղծագործություններում թափանցելով խնդրահարույց իրադարձությունների խորքերը՝ նրանք կարողացել են վեր հանել և ներկայացնել երկրի հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքի հակասական կողմերը:

Ազգային մշակույթի օբյեկտիվ բնութագիրը ներկայացնում է նրա կերտած հասարակական կառուցվածքը: Որոշակի սոցիալական կառուցվածքով ընդգծված նախկին հասարակությունը ձևավորել էր գնահատման իր ըմբռնումները: Անցումային երկարատև շրջանում հասարակության սոցիալական գործող կառուցվածքը խախտվեց, գնահատման նախկին սկզբունքները

դադարեցին գործել: Իսկ բաղձալի նպատակների կենսագործմանն անհրաժեշտ նոր սկզբունքներ չառաջացան: Խորհրդային ժամանակաշրջանի ազգային մշակույթի, արվեստի նկատմամբ վերահսկողության մասին խոսելիս, այնուամենայնիվ, չպետք է անտեսել պետական հոգաձուռության առկայությունը: Վերահսկողության ընկալման առումով տարակարծությունները բազմազան են: Սակայն փաստ է, որ գործում էին արվեստի խմբեր, անց էին կացվում գրական երեկոներ, երաժշտական ներկայացումներ, ինչ-որ կերպ պահպանվում էին ազգային մշակութային միջավայրը և դիմագիծը: Հետևաբար, ազգային մշակույթի դիմագիծը պահպանելու համար պետական մոտեցումն ու հոգաձուռությունը անհրաժեշտություն են, և ստեղծագործական գործընթացները պետք է խթանվեն ու խրախուսվեն հատկապես պետական պատվերների ձևավորման միջոցով:

Նոր հարաբերությունները պետք է ձևավորվեն հասարակության տարբեր շերտերի միջև համազգային մտահոգությունների, պետության ներքին և արտաքին խնդիրների լուծմանը նպատակամղված միջոցառումների համատեքստում: Համընդհանուր շահերի գիտակցման քաղաքակիրթ մեթոդների տիրապետման, սոցիալական կարգավիճակին ներդաշնակ և գաղափարահոգեբանական ազգային քաղաքականության հայացքների արմատավորման, դաստիարակության և կրթության խնդիրները բազմաբնագավառ անելիքներ են ենթադրում:

Մարտ, 2015թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Եղիազարյան Ա.*, 20-րդ դարի հայ գրականություն, դեմքեր և խնդիրներ, Եր., 200:
2. *Աղաբաբյան Ա.*, Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Եր., 1986:
3. *Սևան Գ.*, Հայրենիք-Սփյուռք գրական կապերը (1920-1985), Եր., 1988:
4. *Օշական Յ.*, Համապատկեր արևմտահայ գրականութեան, հ. 1, Երուսաղեմ, 1945:
5. *Աղաբեկյան Կ.*, Հակոբ Օշական, Եր., 2006:
6. *Գյոթե Յ.*, Իմ կյանքից. բանաստեղծություն և ճշմարտություն, Եր., 1986:
7. *Դալլաբյան Կ.*, Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության, Եր., 1994:
8. *Օշական Յ.*, Գրականութեան համար (Գրիգոր Յակոբեանի աշխատասիրութեամբ), Եր., 1977:

ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ԱՆՏԵՍՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արամ Սարգսյան

Ամփոփագիր

Պատմական յուրաքանչյուր շրջանում մարդկությունն ընդհանուր զարգացման ուղի ունի, որը կախված չէ անհատների ցանկություններից: Այդ ուղուց արտաքին քաղաքականության շեղումը ստեղծում է պետականության առաջընթացը խոչընդոտող հանգամանքներ: Պատմությունը հիշատակում է ազգեր, որոնք առանց պատերազմի կրել են պարտություն, իրենց պատմության այն սարսափելի փուլը, երբ խախտվել է հավասարակշռությունը: Քաղաքական անկախությունը կորցնելով՝ նրանք ձուլվել են ուրիշ ժողովուրդների ու անհետացել: Եվ հայտնի են ժողովուրդներ, որոնք քաղաքական անկախությունից զրկվելուց հետո էլ գոյատևել են՝ արժանապատվորեն հաղթահարելով արհավիրքները: Այդպիսին է հայ ժողովրդի անցած ճանապարհը, որը պահպանել է իր կերպն ու իմաստությունը, ազգային դիմագիծը, առաքելությունը, ազգանպաստ ձեռքբերումները՝ ձգտելով քաղաքական անկախության, պահպանելով հոգևոր ինքնավարությունը: Խնդիրը վերաբերում է անկախ պետականության կերտման մշակութային արժեքների համալիրին, քանզի նոր իրողությունները ժողովրդի կենսակերպում փոփոխություններ, տվյալ պայմաններին հարմարվելու կարողություններ են ենթադրում:

ПОСЛЕДСТВИЯ ИГНОРИРОВАНИЯ СТИМУЛОВ ОСМЫСЛЕНИЯ

Արամ Տարգարյան

Резюме

На каждом этапе исторического развития у человечества есть общий путь развития, не зависящий от желания индивидов. Отклонение внешней политики от этого пути создает препятствия, мешающие прогрессу государственности. В истории упоминаются народы, которые проигрывали без войны, тот ужасный период их истории, когда нарушалось равновесие. Потеряв политическую независимость, они сливались с другими народами и исчезали. Известны и такие народы, которые, лишившись политической независимости, все равно сумели выжить, достойно преодолев все бедствия. Таков путь, пройденный армянским народом, который сохранил себя и свою мудрость, национальный облик, миссию, направленные на интересы нации достижения, стремясь к политической независимости и сохраняя духовный суверенитет. Вопрос касается комплекса культурных ценностей при создании независимого государства, так как новые реалии предполагают изменения в обиходе народа, способность приспосабливаться к данным условиям.

CONSEQUENCES OF IGNORING CONCEPTUALIZATION STIMULI*Aram Sardaryants***Resume**

There is a common way of human development in every historical period, which does not depend on wishes of individuals. The deviation of a foreign policy from that path establishes conditions hindering the progress of statehood. The history mentions the nations who were defeated without a war; a horrible phase of their history when the balance was disrupted. Having lost the political independence they assimilated with other people and faded away as such. Some other peoples have survived even after losing political independence and overcame disasters with dignity. This is the way that the Armenian nation passed, as it retained its countenance and wisdom, national identity, mission, patriotic achievements, always seeking an independent political position with unmatched struggle and longevity for centuries. Continuously facing challenges, it has created its unique culture, virtuous character, has promoted establishment of universal human values, because having lost its political independence it nevertheless was able to protect the spiritual autonomy. The issue is related to a complex of cultural values for independent statehood establishment, because the new realities imply changes in people's lives and abilities to adapt to these conditions.

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱԸ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱԸ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱԸ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), ք. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 - *Шарипова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, շ. 15, М., 1986.
 - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ԲԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 18.05.2015թ.
Թիվ 3 (61), 2015թ.
Տպաքանակը՝ 200:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում